

9563

281.69

S-46₅



04 NOV 2009

5-4

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԲԺ. Ս. ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑԻ
№ 5

ԵՐՈՒԱՆԻ ՏԵՐ-ՄԻՆԱՍԵՐԱՆՑ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒՆ

Պ Ա Տ Կ Ե Ր Ո Վ

Մ Ո Ս Կ Ո Ւ Ս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆԻ
1911

972-39
վշ. աՎ. Գ.

20 AUG 2013

9653

4.8

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԲԺ. Ս. ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

№ 5

281.69

Ն-46 ԵՐՈՒԱՆԳ ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ

Պ Ա Տ Կ Ե Ր Ո Վ



Մ Ո Ս Կ Ո Ւ Ս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ք. ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆԻ

1911

21648

13549



ԿԱՐԱՊԵՏ ԵՎԻՍԿՈՎՈՍ

ԵՐԿՐԻ ԽՕՍԲ

Նախապես եպիսկոպոսի փեսանքն ու գործունեությունը
 հանդես առնելու հարազրույթի համար փաստանունը ենք հարգելով
 իսկ նաև աշխատանքի խնդրով, հրապարակի փրոպագանդան
 անհրաժեշտ համայնական բնորոշիչները առկա են համարելով
 այս միակ ազդի միջոցն է հայրապետական փոքր
 և մեծամասններին հայ ժողովրդին ճանախելու համար
 ազդի մանապարհը՝ անցկալի սխալներին վերջ դնելու
 և իսկական արժանաւորին բարձրացնելու Ս. Երկգոր Կաթողիկոսի
 Ս. Ս. Ս. Գրքերի Կաթողիկոսական բնորոշիչն հասարակյոթ

Երուսաղիմի Ս. Ս. Ս. Գրքերի

1811



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Կարապետ Էպիսկոպոսի կեանքն ու դործունէութիւնը համառօտ նկարագրութեամբ վստահանում ենք, նրա մի խումբ աշակերտների խնդրով, հրապարակի վրայ զնել՝ առաջիկայ կաթողիկոսական ընտրութիւնների առթիւ: Մեր կարծիքով այս միակ ուղիղ միջոցն է Հայրապետական գահի թեկնածուներին հայ ժողովրդին ծանօթացնելու, միակ ուղիղ ճանապարհը՝ անցեալի սխալներից զերծ մնալու և իսկական արժանաւորին բարձրացնելու Ս. Գրիգոր Լուսաւորչի Աթոռը, Գլխաւորապէս ընտրութիւն կատարելով:

Երուանդ Տէր-Մինասեանց:

Յունիս 1911.
Ազգրանդրատուր

Ա. ԳԼՈՒԽ.

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒ-
ԹԻՒՆԸ:

Կարապետ եպիսկոպոսը ծնուած է Գողթնեաց գաւառի Յղնա գիւղում 1866 թուականի Մարտի 17-ին: Նրա հայրը՝ Մարտիրոս Տէր-Մկրտչեանը՝ հասարակ առևտրական էր նուխիում: Սովորաբար երեք տարին մի անգամ հայրենիք էր վերադառնում նա և միայն մի քանի ամիս մնում այնտեղ. այնպէս որ մանուկ Կարապետը մեծ մասամբ վայելել է միայն իւր մօր՝ Նուխիմէի (ծն. Ատովմեան) խնամքը: Դեռ վեց տարին չլրացած՝ նա այբուբենը սովորում է գիւղի տիրացուի մօտ, ապա՝ մինչև 12 տարեկան հասակը յաճախում է գիւղի ծխական դպրոցը, որը կանոնաւոր լինելուց դեռ շատ հեռու էր և որտեղ դասաւանդում էին ոչ միայն Զամչեան քերականութիւն, ճարտասանութիւն, այլ և հայերէն ու ռուսերէն լեզուների հետ միասին մի առ ժամանակ նաև Ֆրանսերէն:

1878 թուականի Յունիս ամսին հայրը տանում է նրան Զաքաթալա, ուր նա երկու տարի մնում է իւր մօրեղբոր՝ Յովնան Աւագ քահանայ Ատովմեանի տանը: Այստեղ նա սկզբում ուսանում էր գաւառական դպրոցում, որտեղից ապա փոխադրուեց հայոց ծխական դպրոցը, որպէսզի Ներսիսեան դպրոցի համար պատրաստուի: Մինչ այդ յի-

շեալ մօրեղբայրը դպրոցի հոգաբարձութեան կողմից խնդիր էր ուղարկել, որ նրան ընդունեն Ս. Էջմիածնի ճեմարան՝ իբրև քահանայացու Զաքարթալայի համար: Այդ ժամանակ նրա հօր գործերը խիստ անյաջող դրութեան մէջ էին և չափազանց նեղ էր նրա տնտեսական վիճակը. այնպէս որ դժուար էր գուշակել փոքրիկ Կարապետի ապագան, եթէ անակնկալ կերպով ուշադրութեան չարժանանար վերոյիշեալ խնդիրը:

1880 թուականի Սեպտեմբերին Կարապետն ընդունուեց Մայր Աթոռի ձեմարանի բ. դասատունը և ձեմարանի խնամքը վայելեց իբրև ձրիավարժ գիշերօթիկ ութ տարի: Լինելով միշտ առաջին աշակերտը դասարանում, նա 1888 թուականին աւարտեց ձեմարանական դասընթացը առաջնակարգ մրցանակով: Այդ վերջին տարին ուշադրութիւն զբաւեցին նրա երկու շարադրութիւնները՝ Վրաց բաժանման և Հայոց եկեղեցու ուղղափառութեան մասին, որոնք ներկայացուել էին երջանկայիշատակ Մակար կաթողիկոսին և նրա մեծ հաւանութիւնը գտել:

Մինչ այդ՝ շատ փորձեր էին եղել համոզելու ձեմարանաւարաններին, որ հոգևոր կոչումն ընդունեն, բայց դեռ ոչ ոք չէր ընդունել: Տարիներն անցնում էին, հին ժառանգաւորաց ուսումնարանը չկար այլ ևս ու նոր միաբաններ չէր ապիս. ամբողջ տասնեակ տարուայ ընթացքում դրսից միայն մի երկու պատահական անձինք էին աւելացել Մայր Աթոռի միաբանութեան վրայ: Նոր, երիտասարդ, կրթութիւն ստացած հոգևորականների պահանջը օր աւուր մեծանում էր, իսկ ձեմարանն ու հոգևոր դպրոցները ամուլ էին մնում: Երջանկայիշատակ Մակար կաթողիկոսն ու ձեմարանի վարչութիւնը մեծ հոգսի մէջ էին. միւս կողմից էլ կառավարութիւնը պահանջել էր ձեմարանի ծրագիրն ու կանոնադրութիւնը, և հրապարակի

վրայ դրել այն սպառնական հարցը, թէ այս ի՞նչ հոգևոր ձեմարան է, որ տարիների ընթացքում ոչ մի հոգևորական չէ տուել: ձեմարանաւարաններն էլ իրենց ուղղած յորդորների դէմ մեծ մասամբ այն էին առարկում, թէ իրենց պատրաստուած չեն զգում հոգևոր կոչման համար: Մանկավարժութիւն, զրականութիւն ուսել էին, կարող էին ուսուցիչ լինել. բայց կրօն, եկեղեցական գիտելիքներ այնքան խեղճ ձևով էին աւանդուել, որ ձգտում չէր առաջացրել իրենց մէջ եկեղեցական ասպարէզ ելնելու և ոչ էլ կարողութիւն զարգացրել այդ ասպարիզում գործելու: Եւ աս՝ այդ պակասը լրացնելու և յիշեալ զօրեղ առարկութիւնը մէջ առնելից վերջնելու համար վերջին տարին, զանազան դժուարութիւնների յաղթելով, աստուածաբանական առարկաների ուսուցիչ հրաւիրուեցաւ Մաղաթիս Եպիսկոպոս Օրմանեանը, հայոց եկեղեցականութեան մէջ ամենից աւելի յայտնի և գիտուն Աստուածաբանը: Նրա ուշադրութիւնն ու եռանդը բնականաբար Գ. Լսարանի վրայ էր դարձած, սակայն տարին վերջանալուց յետոյ, Հնայած բոլոր բարի ցանկութիւններին և կողմնակի ջերմ ներշնչումներին՝ աւարտողներից և ոչ մէկը տրամադրութիւն չէր ցոյց տալիս հոգևոր կոչումն ընդունելու:

Այդտեղ ասի նորաւարտ Կարապետ Տէր-Մկրտչեանը և ուրիշ երեք ընկերներ (աւարտողներն ընդամենը 6 հոգի էին) անակնկալ կերպով խնդիր ներկայացրին ընդունել իրենց Ս. Էջմիածնի միաբան: Խնդիրն ի հարկէ սիրով ընդունուեց: Թէ ինչպիսի ոգևորութիւն և սէր է իշխել երիտասարդ Կարապետի սրտում դէպի հայրենի եկեղեցին, երևում է իւր մի բարեկամին գրած նամակի հետևեալ տողերից, որ աւելորդ չենք համարում մէջ բերել. «Այսպէս թէ այնպէս մենք բարոյական մի մեծ պարտականութիւն զգացինք այդպէս վարուելու, և մի քանի շաբաթ շարունակ գտնուում էինք ոգևորութեան ու երի-

տասարդական վառ երեակայութիւնների մի այնպիսի շամանդադի մէջ, որին մատչելի չէ ոչ մի հաշիւ, ոչ մի կողմնակի մտածում: Հարկաւ մեզ հետ ողևորուած էին ուշատ ուրախացած մեր տեսուչը (Ս. Նահապետեան), մեր ուսուցիչները, երջանկայիշատակ հայրապետը. ամեն երեկոյ Օրմանեան սրբազանի շուրջը բոլորած՝ ծրագրներ էինք կազմում ապագայի համար, թէ ինչպէս պէտք է շարունակէինք եկեղեցական ու հայագիտական հրահանգութիւններ և ուսումնասիրութիւններ. ինչպէս պէտք է մի նոր միաբանութեան սկիզբը դնէինք»:

Այսպէս՝ Կարապետ Տէր-Մկրտչեանից և նրա ընկերներից խօսք առնելուց յետոյ պատրաստուում էին նրանց սարկաւազ ձեռնադրել, երբ անսպասելի կերպով հարկից ազատուելու խնդիր մէջ եկաւ, որ մինչև այդ ժամանակ ոչ ոքին արգելք չէր եղել վանք մտնելու: Նրանք ստիպուած եղան հայրենիք վերադառնալ՝ հարկից ազատուելու համար համախօսականներ կազմելու և Սեպտեմբերին յետ դալու մտադրութեամբ, սակայն ուխտ արած անձերից վերադարձան միայն Կարապետն ու նրա մի ընկերը: Բայց նրանք էլ դժբախտաբար փոխուած դտան Ս. Էջմիածնի հանդամանքները: Օրմանեան սրբազանը ամառուայ ընթացքում Ռուս կառավարութեան հրամանով մեկնել էր Տաճկաստան, ու նրանց մասին ամենեկին հարցնող չ'կար, թէ ովքեր են եկել, ի՞նչու են եկել և ի՞նչ պիտի անեն: Նրանք մնային ձեմարանում վերակացուի պաշտօնով. Կարապետ Տէր-Մկրտչեանը վարում էր նաև մատենադարանապետի պաշտօն և աւանդում էր Հայաստանի աշխարհազրութիւն, իսկ Ստ. Պապասանեանի մահից յետոյ նաև Հայոց Պատմութիւն և Քրիստոնէական վարդապետութիւն:

Ուսումնական տարուայ վերջին միւս ընկերն էլ թողեց հեռացաւ և Կարապետ Տէր-Մկրտչեանը միայն հաս-

տատ մնալով իւր որոշման վրայ՝ 1889 թուականի Յունիսի 17-ին ձեմարանի տեսուչ Արշակ Նահապետեանի, նոյն տարուայ ուսումնաւարտ Գէորգ Աօրեքչեանի և դեռ ուսանող Գարեգին Յովսէփեանի հետ սարկաւազ ձեռնադրուեց Ներսէս եպիսկոպոս Խուղալերդեանի ձեռքով:

Այսպէս՝ մի կարևոր խնդիր լուծուած էր. կուսակրօն ձեմարանականներ կային արդէն: Մնում էր լուծել մի ուրիշ, ձեմարանի համար ոչ պակաս կարևոր խնդիր, — ուսուցիչներ պատրաստել յատկապէս այնպիսի առարկաների համար, որոնք առաջնակարգ տեղ պիտի բռնեն հողերը ձեմարանում, բայց պատրաստուած ուսուցիչներ չ'լինելու պատճառով խեղճ դրութեան մէջ էին: Եւ հնա յաջողուեց Թիֆլիզի Բամոյենց եկեղեցու գումարներից ամսական 140 ռուբլի նպաստ ստանալ՝ իբրև երկու ուսանողների թոշակ: Նոյն 1889 թուականի հոկտեմբեր ամսին Կարապետ և Գէորգ սարկաւազներն ուղարկուեցին դէպի Գերմանիա՝ առաջինը աստուածաբանական առարկաներ, իսկ երկրորդը երաժշտութիւն ուսանելու:

Երբ Կարապետ սարկաւազը ուղևորութիւնից առաջ գնաց Տ. Տ. Մակար կաթողիկոսի աջն առնելու, երջանկայիշատակ հայրապետը նրան յիշեցրեց Ն. դարու թարգմանիչներին, որոնք իրենց ժամանակի զիտութեան կենդրոններն էին ուղևորուել և այնչափ պայծառացրել Հայոց եկեղեցին. բարեմաղթեց, որ դարերից յետոյ կրկնուող այս նոր փորձը՝ մեր ժամանակի զիտութեան տաճարներից լոյս ստանալու՝ յառաջ բերէ նոր թարգմանիչներ և լուսաւորութեան մի նոր դարադուլիս դառնայ Հայոց եկեղեցու համար: Ողևորուած Կարապետ սարկաւազը խոստացաւ երբէք չ'մոռանալ այդ բարեմաղթութիւնները և, ինչպէս կ'տեսնենք, ապագայում կարողացաւ արդարացնել իւր վրայ դրած մեծամեծ յոյսերը, բազմադիմի ծանր պար-

տականութիւններ կատարելով ի փառս և ի պատիւ Հայ-
ստանեայց եկեղեցու:

Կարապետ սարկաւազը Գերմանիայում մնաց 5 տարի:
Առաջին 3 տարին նա ուսանում էր Լայպցիգի, Հալլէի և
Բերլինի համալսարաններում, աշխարհուհակ ուսուցչապետ-
ների մօտ (Լութարգ, Յահն, Հառնակ, Գութէ, Վունդ և
այլն) լսելով աստուածաբանական, փիլիսոփայական և հան-
րակրթական գիտութիւններ, միևնոյն ժամանակ նա հետզ-
հետէ սովորում էր իւր մասնագիտութեան համար ան-
հրաժեշտ լեզուները՝ յունարէն և եբրայեցերէն, աւելի պա-
կաս չափով՝ լատիներէն, ասորերէն և անգլիերէն: Իբրև
գերմաներէնի վարժութիւն՝ ուսանողութեան սկզբնական
շրջանում նա թարգմանեց Հենրի Իրիւմոնի այդ ժամա-
նակ շատ տարածուած նշանաւոր գրքոյկը՝ «Ամենալաւ
բանը աշխարհում», որ և սպուեց Թիֆլիզում 1891
թուականին: Շարունակ աշխատակցել է նաև գերմանա-
կան յայտնի կրօնական թերթերին (Christliche Welt և
Chronik der christlichen Welt): 1891 թուականի ա-
մառուայ վեցամսեակին Հալլէ տեղափոխուելով՝ սկսեց լրր-
ջօրէն պարապել իւր մասնագիտութեամբ, զործադրել սօ-
վորած լեզուները Ս. գրքի ուսումնասիրութեան համար
և շարադրութիւններ գրել Կաուչի, Հաուպտի և Լօօֆտի
սեմինարներում: Վերջինիս տուած շարադրութիւնը Պօ-
ղիկեանց մասին առանձնապէս զբաղեցրեց նրան, և ապա
մի տարի յետոյ Բերլին տեղափոխուելով՝ ուսուցչապետների
խորհրդով ընդարձակեց ու մշակեց այն և աշնանը ներ-
կայացրեց Լայպցիգի համալսարանին՝ փիլիսոփայութեան
դոկտորի աստիճան ձեռք բերելու համար: Շարադրու-
թիւնն ընդունուեց: Քննութեան պատրաստուելով՝ նա մի-
ևնոյն ժամանակ շարունակում էր դասախօսութիւններ
լսել Բերլինի համալսարանում: Այդպիսի գովելի եռանդով
ու լրջութեամբ գործին կպած՝ նա յաջողութեամբ քննու-

թիւն տուեց Լայպցիգում Լամպրէխտ, Վունդ և Սոյին
ականաւոր ուսուցչապետների մօտ պատմութիւնից, փի-
լիսոփայութիւնից ու եբրայեցերէնից, և առանց ժամանակ
կորցնելու վերադարձաւ կրկին Բերլին, իւր ընդհատած
դորձը շարունակելու: Այսպիսով 1892 թուականի Օգոս-
տոսին շարադրութիւն ներկայացնելով Լայպցիգի համալ-
սարանին, 1893 թուականի Մարտին քննութիւն տուեց
և ստացաւ փիլիսոփայութեան դոկտորի աստիճան: Նույն
րուելով այնուհետև ամբողջապէս իւր մասնագիտութեան,
նոյն 1893 թուականի ամառը նա անցաւ Տիւբինգեն՝
այն տեղի համալսարանի կաթոլիկ աստուածաբանու-
թեան բաժինն՝ ի մօտոյ ծանօթանալու կաթոլիկութեան
հետ: Այդտեղ սպառնութեան յանձնեց իւր զրուածքը
Պօղիկեանց ազանդի մասին, որի առաջին մասը՝ Die Pau-
likianer im byzantinischen Kaiserreiche und ver-
wandte ketzerische Erscheinungen in Armenien.
Leipzig 1893 (Պօղիկեանք բիւզանդական կայսրութեան
մէջ և յեզակից ազանդաւոր երևոյթներ Հայաստանում,
Լայպցիգ 1893), յունարէն ազբիւրնների քննադատութիւնը
ներկայացրել էր Լայպցիգի համալսարանին իբրև շարա-
դրութիւն, իսկ վերջին դուրսը՝ Die Thondrakier in un-
seren Tagen (Թոնդրակեցիք մեր օրերում) յետոյ 1895-ին
լոյս տեսաւ Zeitschrift für Kirchengeschichte ամսա-
զրի մէջ:

1893 թուականի Օգոստոսին Վիեննայից անցնելով՝ գէ-
պի Մայր Աթոռ պիտի ուղևորուէր Ամենայն Հայոց Հայ-
րապետ Տ. Տ. Մկրտիչ Ա. Խրիմեան: Կարապետ և Գա-
րեգին սարկաւազները զիմաւորեցին նորին Սրբութեան
Վիեննայում և Կարապետ սարկաւազը թոյլաւութիւն
ստացաւ մի տարի ևս շարունակել ուսումը Եւրոպայ-
ում: Այդտեղից նա գնաց Փարիզ՝ բուն կաթոլիկ աշխար-
հում կաթոլիկութիւնն աւելի լաւ ուսումնասիրելու

բայց իւր սպասածը չ'գտնելով՝ հռչակաւոր Դիւշենի մօտ դասեր էր լսում, միւսնոյն ժամանակ պարապում էր Կարիերի մօտ, լսում էր աղատ դասախօսութիւններ, Սորբոնում, Կոլլէժ դը Ֆրանսում և բողոքական Աստուածարանական Ֆակուլտետում. իսկ աւելի զբաղւում էր նշանաւոր «ազգային մատենադարանում», որի կարեւոր հայեքէն ձեռագրներէց մի փոքր բան ուղարկեց «Արարատ»-ին՝ տպագրելու համար. գերմաներէն թարգմանեց Հառնակի և Գերհարդի յանձնարարութեամբ Ս. Պիոնի վարքը և Եղնիկի «Եղծ աղանդոյն Մարկիովնի»։ Փարիզի հայոց մատուռում ամեն կիւրակէ սպասաւորելով սուրբ պատարագին, նա արաւ քարոզի առաջին փորձերը, որի համար հրաման էր ստացել սրբազնագոյն կաթուղիկոսից։ Ի նշան երախտագիտութեան՝ Փարիզի հայ դաղութը Կարապետ սարկաւազին հրաժեշտի ժամին նուիրեց մի գեղեցիկ ոսկեայ ժամացոյց։

1894 թուականի գարնանը նա մի ամիս անցկացրեց Լոնդոնում, անգլիերէն վարժութիւն ձեռք բերելով և ծանօթանալով առանձնապէս քրիստոնէական բարեգործական հաստատութիւնների հետ, որոնցով Անգլիան առաջին տեղն է բռնում Եւրոպայում։ Այդտեղից նա վերադարձաւ Մարբուրգ (Գերմանիա), որի համալսարանի աչքի ընկնող աստուածաբանական բաժնում վերջին ամառային վեցամսեակը լսելուց յետոյ, աշխատեց ի մի ամփոփել իւր մինչև այդ ժամանակ ուսածները և ամբողջացնել իւր աստուածաբանական մասնագիտութիւնը։ Բերլինում, պրոֆեսոր Հառնակի սեմինարում նա գրել էր մի կարեւոր շարադրութիւն Բ. դարու զատկական վեճերի մասին, որ մեծահռչակ գիտնականը գտել էր իբրև «սրամիտ և ժրջան» մի աշխատութիւն։ Նոյն ուսուցչապետի խորհրդով Տիւբինգենում և Փարիզում նա շատ զբաղուել էր Բազիլեգոնի ժողովին վերաբերեալ նիւթերով և պատմական

դէպքերով, բայց որովհետև այդ նիւթերից մէկն ու մէկը շատ ժամանակ պիտի խլէր, նա ներկայացրեց համալսարանի աստուածաբանական բաժնին իւր Պողիկեանց մասին գրուածքը իբրև շարադրութիւն՝ Լիցենցիատի քննութիւն տալու համար։ 1894 թուի յունիսին քննութիւն բռնելով աստուածաբանութեան բոլոր ճիւղերից՝ Կարապետ սարկաւազն ստացաւ Լիցենցիատի աստիճան (դա նոյն գիտական աստիճանն է, ինչ որ Ռուսաստանում մագիստրոս)։ Թէպէտ համալսարանի կանոնադրութեամբ Լիցենցիատի քննութիւն տուողը պէտք է որոշ դաւանական բանածե ընդունէր (ի հարկէ բողոքական ոգւով), և ուրեմն նրան իբրև օտարադաւանի պէտք է թոյլ չ'տրուէր քննութիւն բռնելու, սակայն Ֆակուլտետը, որպէս առաջին դէպք և բացառութիւն, յատկապէս ի նկատի առնելով Կարապետ սարկաւազի արտաքոյ կարգի ընդունակութիւնները, միջնորդեց «Դաւանութեանց» մինիստրութեան առաջ, որ նրա համար բացառութիւն լինի. պրոֆեսոր Վայսի օգնութեամբ, որ ամենաբարձր եկեղեցական աստիճան ունեցողն էր մինիստրութեան մէջ, միջնորդութիւնն յարգուեց և խնդիրն անցաւ։

Համալսարանական արձակուրդները Կարապետ սարկաւազը մեծ մասամբ գործ էր դրել Գերմանիայի և Աւստրիայի զանազան կողմերում ճանապարհորդելով, շփումն էր ունեցել եւրոպական հասարակութեան զանազան խաւերի հետ, աշխատել էր ծանօթանալ հասարակական կեանքի ժամանակակից երևոյթներին և կարեւորագոյն շարժումներին։ Վերջին տարիները մօտ է եղել Christliche Welt ազգեցիկ թերթին և ուրիշ համայնական կազմակերպութիւնների շրջանակներին, մի բանի յօդուածներ է գրել յիշեալ թերթերում և աշխատել ուղիղ հայեացքներ յառաջ բերել հայ եկեղեցու և ժողովրդի մասին, տարածել մանաւանդ այն տեսակէտը, թէ անսակէտ էր բողոքա-

կանները միտնեցնողներ հայերի մէջ և թէ հայոց եկեղեցուն կրթուած պաշտօնեաներ են պակասում ներքուստ վերակենդանանալու և իւր ժողովրդի մէջ աւետարանը կենդանացնելու համար. այդպիսի պաշտօնեաների թիւը բազմացնելուն նպաստելը հայոց եկեղեցու համար իսկական բարիք կ'ըլինէր եւրոպացիները կողմից: Այս շրջանակներէց երան յետոյ տանկահայոց կոտորածների սարսափի օրերում, Լեպսիուս, Րոհրբախ և նման գործիչներ, նրանց միջոցաւ զլիսաւորապէս նպաստներ ժողովեցան հայկական որբանոցներ բանալու և շարունակում են մինչև այժմ էլ այդպիսի նպաստներ հանդանակել, համակրական կարծիք արծարծելով հայերի մասին:

1894 թուի Օգոստոսի սկզբին Կարապետ սարկաւազը ուղևորուեց զէպի հայրենիք՝ Վենետիկ և Կոստանդնուպօլսի վրայով: Վենետիկում նա ծանօթացաւ Մխիթարեանների հետ և մի քանի օր աշխատեց նրանց հոս մատենադարանում: Կոստանդնուպօլսում Անտօնեան միաբանութեան մատենադարանի մէջ նա առաջինը ուշադրութիւն դարձրեց «Գիրք թղթոց» նշանաւոր ձեռագրի վրայ, որից յետոյ նրա խնդրանք արտադրեցին և ուղարկեցին կարևորագոյն թղթերը, և նա «Սրարատ»-ի մէջ հրատարակեց Բարզէն և Ներսէս Բ. կաթողիկոսների պատմական մեծ արժէք ունեցող շրջաբերականները. ապա թէ ամբողջ ժողովածուի կարևորութիւնը հասկացուեց, որ և Իզմիրեան մրցանակաբաշխութեան հաշուին ի լոյս ընծայուեց: Պօլսից նա Սրմաշ ևս զնայ, ուր վանահայր ու վերատեսուչ էր իւր ուսուցիչ Օրմանեան սրբազանը, իսկ տեսուչ էր Ս. Գուրեանը. ծանօթանալով նաև Բ. կարգի շրջանաւարտ արմաշական սարկաւազների հետ, որոնք այժմ մեծ մասամբ վարդապետ և եպիսկոպոս են ու կարևոր թեմերի առաջնորդ:

Եւրոպական բազմակողմանի զիտութեամբ հոխայած.

Կարապետ սարկաւազն էջմիածին վերադարձաւ և 1894 թուի Սեպտեմբերի 11-ին առաջին խումբ ճեմարանաւարտ հինգ սարկաւազների (Բենիկ, Կոմիտաս, Յուսիկ, Եգնիկ, Տիրայր վարդապետներ) և դրսից եկած Վահան սարկաւազ Գառնանի (Խաչիկ Տ. վարդապետ) հետ ձեռնադրուեց կուսակիօն քահանայ: Շատերի յիշողութեան մէջ դեռ ևս թարմ են այն ուխտի խորիմաստ խօսքերը, որ Կարապետ սարկաւազն իւր և ընկերների կողմից արտասանեց Մայր Աթոռի հոգևոր ձեմարանի հիմնադիր հոգելոյս Տ. Տ. Գէորգ Գ. հայրապետի շիրիմի վրայ— «Զմի խնդրեցի ի Տեառնէ և զայն ազաչեմ՝ բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց»: Թող ներուի մեզ այստեղ կրճատ կերպով զնելու այդ ուխտի կարևորագոյն հատուածները իբրև յայտարար այն խոհերի և զգացումների, որոնք պաշարել էին Կարապետ սարկաւազին և իւր ընկերներին հայոց եկեղեցու ծովացեալ կարիքների հանդէպ: «Երբիմ, որ մեր բարերար հօր նշխարներն էս ամփոփում. ահիւ և դողութեամբ ենք մօտենում քեզ այս վճռական խորհրդաւոր պահուն կրկնելու և երեքկնելու մեր ուխտը՝ ուխտ սրբազան հաւատարմութեան և անքակտելի հաստատութեան. Դո՛ւ մեզ վստահութիւն ներշնչիր մեժ մեժ պարտքերի մի այսպիսի ծանր լուծ քաղցր հեշտութեամբ մեզ վրայ առնելու: Անձկալից սրտով քեզ ենք կանչում, Վեհին Գէորգայ պանծալի անուն, որ ոսկեղէն տառերով մեր կրթութեան դրօշակի վերայ մակագրած՝ տարիներէ ի վեր մեզ ոգևորել, ուղղութեան հանապարհով մինչև այս կէտն էս առաջնորդել, Դու և այժմ կնիք եղիր մեր ուխտի համար, արթուն յուշարար մնալով, կեանքի ամեն քայլափոխում, թէ որոյ ոգւոյ ենք մենք զաւակ... Գո մեժ գործին արդիւնք, բազմապատիկ խնամոցդ արիտուր, ահա Տիրոջ սեղանի առաջ ենք դնում մեր սրտերը, մեր հողին, մեր ամբողջ կարողու-

թիւնք. Նորան լինի ամենք, Նորա տան սպասաւորութեան սուրբ գործին նուիրած: Տկար են արդարեւ ու տարուբեր մեր սրտերն ու հոգին, յողողող մեր մտքերը, անհաստատ մեր կամքը. ըստ ամենայնի գուզնաքեայ է և անարժան թերևս մեր այս նուէր, սակայն ամենայն յօժարութեամբ բերած. Օրհնիր մեր ուխտը և բարեխօս եղիր Նորա առաջ, որ ոչինչը ինչ դարձնել կարող է, ակարր զօրացնել, անարժանը նուիրագործել և արժանի կացուցանել: Նա՛ տայ մեզ կարողութիւն սրբութեամբ սկսելու և կատարելու:

«Հայաստանեայցս Սրբազնագոյն Հովուապետի, մեր մեծագոյն Հայրապետաց արժանընտիր յաջորդի ձեռն ենք յանձնում մեր այս սրբազան ուխտի կնիքը, կրկնելով իւր առաջ ուխտ մտադիւր հնազանդութեան... Հայոց Հայրիկը, որ ասես մեր երջանիկ նախնեաց շարքից է իջել, հայ կրօնաւորի տիպարը կենդանի օրինակաւ մեր առաջը նկարելու. որի սիրտը միշտ վառ է եղել հայ անուան սիրոյ կրակով, որի բերանում միշտ կենդանի է եղել սուրբ աւետարանի ճշմարտութեան խօսքը՝ Նա թող ներշնչէ մեզ այն հոգին, որ մարդկանց հոգիները սիրով կապել, ճշմարտութեամբ ղեկավարել զիտէ: Անտէր ազգի հոգսերու ու վշտերի ծանրութեան ներքոյ ճերմկցած այլիք, մեր երիտասարդական անձնապաստանութիւնը մինչև գետին է խոնարհում Ձեր պատկառելի վսեմութեան առաջ, Ձեզ ենք կամենում հետևել հեզ և խոնարհ սրտով, ամբասիր ու բարեբեր մի կենաց առաջնորդ մեզ եղէք:

«Օրհնեցէք մեզ և Դուք, Սրբազան Հայրեր, Ս. Էջմիածնի հնօրեայ միաբանութիւն, ներկայացուցիչ փառաւոր անցեալի և պահապան աւանդական սրբութեանց, որ այսօր կրկին նուիրագործութեամբ ի շարս մեր դնել յօժարում էք մեր տհաս ոգիքը, ձեր առաջ ենք երեքկնում մեր ուխտը. յարգել անցեալը, ճշմարտութեամբ պահել նուիրական աւանդութիւնները, խոնարհել այն ամեն սրբ-

բութեան առաջ, որ մեր պաշտելի նախնեաց անուան ու գործի դրոշմն է կրում. օրհնեցէք և աղօթեցէք, որ այդ հայրերի շաւղովն ընթանալ նոր ուժով, հին, բայց և միշտ նոր, կենդանի, հարազատ և կենդանարար ոգին արծարծել կարող լինինք:

«Հապա դ՛ու, հայոց ժողովուրդ, որ այդպէս հետաքրքիր աչքերով դիտում ես մեզ և պիտի շարունակես դիտել ու քննել մեր իւրաքանչիւր քայլափոխը. որ անաուն անտէր գաղթականից սկսած մինչև ճոխ պալատների մէջ զուարճացող մեծատունը թշուառութեանց ու մոլորութիւնների մի ծով ես ներկայացնում, բռնում ես անհամար վէրքեր, որոնց սպեղանի, վշտեր, որոնց սփոփում, պէտք է և մատով ցոյց ես տալիս—ահա՛ մեր հովիւներն ու վարդապետները... Տես, ժողովուրդ, հայի արիւն արցունքը թող լինի մեր ուխտի չորրորդ կնիքը. քո հառաչանքը երբէք դադար չ'տայ մեզ թմրութեան անկողնի վրայ, ընդոսս վեր երևնք, Կայենի նման աստանդական շրջենք, եթէ քո ցաւերը տեսնենք ու անտարբեր մնանք...»:

Դեռ ևս քառասունքի մէջ Կարապետ արեղան կարգուեց ճեմարանի տեսչի օգնական և աստուածաբանական ու կրօնական առարկաների ուսուցիչ: Նոյն 1894 թուի Դեկտեմբեր ամսից նա մտաւ նաև «Արարատ»-ի համար կազմուած նոր խմբագրութեան մէջ՝ իբրև կրօնական բաժնի խմբագիր: Սյդ երեք պաշտօնների մէջ նա մնաց հինգ տարի շարունակ, վերջին տարիները իւր վրայ ունենալով «Արարատ»-ի խմբագրութեան բոլոր հոգսը. միևնոյն ժամանակ մասնակցելով զանազան յանձնաժողովների, կատարելով իւր միաբանական պարաքր ու այլ և այլ յանձնարարութիւններ, քարոզութեան երևելով երբեմն շրջակայ զիւզերը և այլն:

1895 թուականի Փետրուարի 25-ին Կարապետ արեղան ստանում է վարդապետութեան աստիճանը. նոյն թուի



Նօկտեմբերի 12-ին Հայրապետական կոնդակով կարգուում է անդամ «Ուսումնական վարչական յանձնաժողովի», որին սակայն վիճակուած չէր իւր գոյութիւնը երկար ժամանակ պահպանել: 1897-ին նոր տարու օրը առանձին հանդիսաւորութեամբ և ի լուր ձեմարանի տօնակատար ուսուցիչների և աշակերտների կարգացուած զեղեցիկ կոնդակով պարզե է ստանում վարդապետական լանջխաչ: Այդ կոնդակը, որի մէջ Հայոց Հայրիկը այնպէս ցայտուն կերպով նկարագրում է Կարապետ վարդապետի արժանաւոր գործունէութիւնը, կարևոր ենք համարում ամբողջութեամբ զնել ստորև.

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի..... շնորհազարդ միաբանի Մայր Աթոռոյս և օգնականի տեսչի հոգևոր ձեմարանի սորին Տ. Կարապետ վարդապետի, նուիրեմք ողջոյն Առաքելական հանդերձ հայրապետական օրհնութեամբ:

Նեաւողիդ ընթացից Փրկչին և բարձողիդ խաչի Կենարարին, որում սիրահար լեալ՝ ընծայեցեր զանծղ ի մանկութենէ հետէ և մտեր ընդ քաղցր լծով նորին, վասն առաջնորդելոյ զհաւատացեալ հօտն Քրիստոսի ի վայրի դալարւոջ և առ ջուրս հանգստեան աւետարանական վարդապետութեան, տեսեալ մեր զհաւատարիմ և զարդիւնաւէտ գործունէութիւնդ յերից ամաց հետէ, այն ինչ դարձարարեր յԵւրոպայէ, ուրանօր՝ իբրև ճշմարիտ հետևող աշակերտաց երանաշնորհ թարգմանչացն մերոց՝ ի խնդիր լեալ էիր յուսումն լեզուաց և ի զիտութիւն ուսմանց աստուածային հին և նոր կտակարանաց, և ցուցեր զայն տաղանդն քո ի հոգևոր ձեմարանի Մայր Աթոռոյս, թէ իբրև ուսուցիչ աստուածաբանութեան և թէ իբրև օգնական տեսչի, ուղիղ վարդապետութեամբ համառօտելով զբանն ճշմարտութեան ի սիրտ մատաղերամ մանկանց նորոյս Սիօնի և առաջնորդելով զնոսա ի խաղաղաւէտ կեանս

և ի բարւոք ընթացս քաղաքավարութեան, Մեք արժանի համարիմք, յուշ ածեալ զսիրաւանդ բան Փրկչին, որ ասէ «Մշակ արժանի է վարձու իւրոյ», պսակել զայդ տիրանուէր և զազգօզուտ աշխատութիւնս քո սովին հայրապետական կոնդակաւ. նախ՝ յայանել զգօհունակութիւն սրտի մերոյ առ աշակերտդ Բանին Կենայ, և երկրորդ՝ ի արիտուր և ի խրախոյս խաչաբարձ զինուորիդ՝ պսակել զաշխատութիւնս քո. և ի՞նչ իւրիք, եթէ ոչ նոյն խաչիւ տիրական, ոյր վասն Առաքեալն Պօղոս անձկութեամբ սրբաի և յիշատակաւ նորին ճենճերեալ միշտ ասէր. «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

«Սոյն այս խաչ տիրական, նշան արտաքին ցուցանող ապաւինելոցն ի Տէր Յիսուս Քրիստոս, ոյր վերայ բարձրացաւ ինքն և զամենեսեան առ ինքն վերայոյց, շարզեկելով Քեզ, Մեք լիայոյս եմք, զի յեա այսու ևս առաւել վայլեսցին զզացմունք սրտի Քո և հոգւոյ ի զիր բարտիսի Արարաա թերթի Մայր Աթոռոյս, որ բերան է միաբանութեան Ս. Էջմիածնի և պաշտօնական ամսագիր հայոց Հայրապետին: Գիտեմք, զի բազում են վաստակք քո և ծանր աշխատութիւնք, այլ աներկբայ եմք, զի աշակերտելոցն Աւետարանի չիք վհատութիւն և յուսահատութիւն. քանզի ևս ընդ Ձեզ եմ մինչև ի կատարած աշխարհի, ասաց Մեծ Վարդապետն Տիեզերաց:

«Ապա ուրեմն՝ Փրկչին Քեզ առաջնորդ, խաչն Քեզ վահան ամբութեան և օրհնութիւն Հայոց Հայրիկին քեզ զօրավիդ և սատար: Ողջ լեր յուսացեալք յԱստուած և պսակեալք խաչիւ, ամէն: Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Ի 1-ն Յունուարի 1897 ամի, № 1.»:

1897 թուի ամարային արձակուրդներին Կարապետ վարդապետը մի նանսպարհորդութիւն կատարեց զէպի Ռուսաստան և այցելեց յաւակապէս Կիևի, Մոսկուայի և

Պետերբուրգի հողերը ձեմարանները՝ Ռուսաց աստուածաբանական դիտութեան և նրա ներկայացուցիչների հետ ի մօտոյ ծանօթանալու նպատակով: Միւս ամառները նա ստիպուած էր Ս. Էջմիածնում մնալ՝ բաղմապիսի զբաղմունքների և երբեմն էլ ձեմարանի տեսուչ Կ. Կոստանեանի յանախակի կրկնուող հիւանդութեան պատճառով: Իբրև նշան առանձին գոհունակութեան՝ նրա անհուն եռանդի և հսկայական աշխատասիրութեան ու կարողութեան, վեհափառ հայրապետը 1898 թուին պարզեց Կարապետ վարդապետին իւր սեպհական ծաղկեայ սև փլոնը:

1899 թուին Կ. Կոստանեանը հրաժարուեց ձեմարանի տեսչի պաշտօնից և Կարապետ վարդապետը կարգուեց տեսուչ՝ մնալով միևնոյն ժամանակ ուսուցիչ և մինչև տարուայ վերջը, յաջորդ տարիներում ևս մի քանի ամիս, վարելով «Արարատ»-ի խմբագրի պաշտօնը: Մտադիր լինելով հետևեալ գլխում աւելի մանրամասն խօսել Կարապետ վարդապետի ուսուցչական և տեսչական գործունէութեան մասին, այստեղ այսքանը կարևոր եմ համարում համառօտ կենսագրութեան թելը չկտրելու համար յիշել, որ երբ տարուայ բեղմնաւոր պաշտօնավարութիւնից յետոյ Կարապետ վարդապետը 1902 թուին՝ ուսումնական տարուայ վերջը՝ հրաժարուեց տեսչութիւնից և թէև մտածում էր դրսում ժողովրդի մէջ պաշտօն ունենալ, բայց աւելի բարւոք համարուեց թողնել նրան ձեմարանի ուսուցչութեան և «Արարատ»-ի խմբագրի պաշտօններում մի տարի ևս:

1903 թուի նոյեմբերին Կարապետ վարդապետը կարգուեց Երևանի թեմակալի (Ս.մենայն հայոց հայրապետի) փոխանորդ, աքտոր ուղարկուած Սուբխաս արքեպիսկոպոսի փոխարէն: Ինչպիսի դժուարին պայմաններում առաջնորդութիւն արաւ Կարապետ վարդապետը և Ինչպիսի

գործունէութիւն յոյց տուեց թէ Երևանում և թէ յետոյ Ատրպատականում, այդ կ'տեսնէ ընթերցողը սոյն դրուածքի Դ. գլխում մանրամասն նկարագրուած:

Երկու տարի Երևանում առաջնորդութիւն անելուց յետոյ Կարապետ վարդապետը հրաժարուեց այդ պաշտօնից և 19⁰⁵/₀₆ ուս. տ. դարձեալ ուսուցչական պաշտօն ստանձնեց Գէորգեան ձեմարանում, անձնատուր լինելով միևնոյն ժամանակ իւր զրական և զիտական պարապմունքներին:

1906 թուականի ամառուանից, աւելի ճիշտ չարաբաստիկ «Կենդրոնական ժողովի» հրաւիրման օրերից սկսուեց Կարապետ վարդապետի համար մի նոր շրջան. տանջանքների և հալածանքների շրջանը: Բանն այնտեղ հասաւ, որ նա մինչև անգամ՝ ստիպուած զգաց իրեն առժամանակ թողնել Էջմիածինն ու հեռանալ, մասնաւոր գործունէութեամբ իւր ապրուստը հայթհայթելու: Ս. Էջմիածինը իւր ամենից արժանաւոր հոգևորականին դուրս քշեց, և Կարապետ վարդապետը 19⁰⁶/₀₇ ուս. տ. պաշտօն որոնելու գնաց Բագու և այնտեղ դարձաւ զիմնապիայի կրօնի և հայոց լեզուի ուսուցիչ: Դեռ այսօր էլ աչքիս առաջ են այն օրերը, երբ Կարապետ վարդապետը վշտացած հոգևով ու ճնշուած սրտով վերջապէս որոշեց բաժանուել մեզնից, հեռանալ Էջմիածնից և իբրև մի հալածական ծննդեան նրազայոյցի նախընթաց օրը ճանապարհ ընկաւ դէպի Թիֆլիզ, որտեղից Ջրօրհնեաց օրը դուրս էր եկել՝ ժամանակին իւր նոր պաշտօնատեղին՝ Բագու հասնելու:

Երևի նա երկար կ'շարունակէր իւր ուսուցչական գործունէութիւնը Բագուի զիմնապիայում, եթէ 1907 թ. Սեպտեմբերին ընկերներին չ'յաջողուէր համողել նրան մնալու Ս. Էջմիածնում և թերի թողած զրական աշխատութիւնները շարունակելու, միևնոյն ժամանակ մտնելով «Արարատ»-ի նոր խմբագրական կազմի մէջ: Վեհափառ

Հայրապետն ևս ի նշան իւր բարեհաճութեան և մտասմբ ևս իւր օրով նրա դէմ տեղի ունեցած անարդար հալածանքի տպաւորութիւնը փոքր ինչ մեղմելու նպատակով հրամայեց նրան ծայրագոյն վարդապետութիւն տալ:

Մինչ Կարապետ ծ. վարդապետն առանց հաստատուն պաշտօնի էջմիածնում իւր զրական գործունէութիւններով էր զբաղուած, անակնկալ կերպով հեռազիր ստացաւ Թաւրիզից, որ 1907 թուի Հոկտեմբերի 30-ին Ատրպատականի հայոց թեմական ժողովի նիստում միաձայն ընտրուած է այդ թեմի առաջնորդ: Թէև ընկերները ցանկանում էին, որ նա Ս. էջմիածնում մնար, որպէս զի կարողանար վերջացնել իւր սկսած զրական աշխատանքները, բայց իւր ժողովրդին ծառայելու ջերմ փափազը յաղթող հանդիսացաւ նրա մէջ և նա որոշեց հրաւերն ընդունել, առանց ուշադրութիւն դարձնելու այն բոլոր դժուարութիւններին, որ նրա առաջ պիտի ելնէին բնականաբար Ատրպատականի նման մի թեմում: Որովհետև նոյն օրերում յանկարծակի վախճանուել էր Տ. Տ. Մկրտիչ սրբազնագոյն կաթողիկոսը, ընտրութիւնը վաւերացնելու և պատշաճաւոր իշխանութիւններին նանաչել տալու հոգսը մնում էր ամենայն հայոց հայրապետութեան տեղապահին: Վերջինս շուտով անօրինեց պէտք եղածը, և Ս. Հայրապետի թաղման առթիւ Ատրպատականի թեմական ժողովի կողմից եկած պատգամաւորների հետ Կարապետ ծայրագոյն վարդապետը գնաց Թաւրիզ և ստանձնեց նոր պաշտօնը, որ և վարում է մինչև այժմ: 1909 թուականի Հոկտեմբերի 25-ին Կարապետ ծ. վարդապետը իբրև Ատրպատականի առաջնորդ ընդունեց Եպիսկոպոսական ձեռնադրութիւն Տ. Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսի ձեռքից:

Բ. Գ Լ Ո Ւ Խ.

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԻԲՐԵԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՏԵՍՈՒՉ.

1894 թուականի Սեպտեմբեր ամսի սկզբին Երեկոյեան դէմ նստած էինք մի խումբ աշակերտներ ձեմարանի հիւսիսային դրան առաջ, երբ դարպասից ներս մտաւ մի երիտասարդ, փոշու մէջ կորած նանապարհորդ, վերարկուն հագին: Մեր հետաքրքրութիւնը դադար առաւ միայն այն ժամանակ, երբ տեղեկացանք, որ նորեկը Գերմանիայում իւր ուսումը փառաւոր կերպով աւարտած Կարապետ սարկուազն է, կրօնական առարկաների մեր ապագայ ուսուցիչը: Կրօնի դասերի վրայ մինչև 18⁹⁴/₉₅ ուս. տարին մենք սովորել էինք նայել իբրև զուարճութեան դասերի վրայ և մտքերովս չէինք անցկացնում, թէ ուրիշ վերաբերմունք էլ հնարաւոր է: Բայց շուտով զգացինք, որ ոչ միայն ուսուցչի վերաբերմունքն է փոխուած դէպի իւր առարկան, այլ և նրա ազգեցութեամբ նաև մերը: Ինչո՞ւ, այդ կ'տեսնենք շուտով:

Ամենքին յայտնի է, որ կրօնի դասաւանդութիւնը բոլորովին առանձնայատուկ դժուարութիւններ ունի. այնպիսի դժուարութիւններ, որոնք ուրիշ առարկաների համար ամենևին զոյութիւն չունին: Ոչ որի մտքով օրինակ չի անցնի հայոց լեզուի, պատմութեան, աշխարհագրութեան և այլն ուսուցիչներին հարցնել, թէ արդեօք նրանք հաւատում են իրենց ասածին: Առարկաներն այնպիսի բնավորութիւն ունին, որ խօսք կարող է լինել գիտեմալու, աւանդել կարողանալու, բայց ոչ երբէք հաւատալու մասին: Իսկ կրօնի դասաւանդութեան ամենաէական պայ-

մանր, բացի առարկան զիտենալուց և աւանդել կարողա-
նալուց, այն է, որ ուսուցիչը իւր ամբողջ էութեամբ ա-
շակերտների առաջ պիտի ներկայանայ իբրև մարմնացեալ
համոզումն ու հաւատ: Աշակերտը պիտի տեսնի և զգայ,
որ ուսուցիչը իւր արտասանած իւրաքանչիւր խօսքի հա-
մար ամբողջ էութեամբ պատասխանատու է համարում
իրեն. այդ ձևով միայն կրօնի դասատուն յոյս կարող է
ունենալ յաջողութիւն գտնելու: Հակառակ դէպքում «փա-
րիսեցի» անունը անջնջելի կերպով կ'ըրոշմեն աշակերտնե-
րը նրա նակատին:

Ձեմ կարծում, թէ որ և է մէկը կամենայ պնդել, թէ
մեր բոլոր կրօնուսույցներն այդպիսի լիակատար համոզ-
մունքի և բարոյական պատասխանատուութեան տէր մար-
դիկ են: Ընդհակառակն՝ ակներև է, որ կրօնի դասաւան-
դութեան մեր յիշած բացառիկ պայմանի շնորհիւ՝ այդ
առարկան շատ ընկած դրութեան մէջ է մեր բոլոր դրպ-
րոցներում: Առանց խորին համոզմունքի, լոկ ձևական կեր-
պով անգիր են անել տալիս մեզնում աշակերտներին ըն-
դունուած դասադրքերի հատուածները, և դրանով միայն
արհամարհանք, ծաղր և Խտելութիւն դարթեցնում աշա-
կերտի մէջ դէպի կրօնն ու նրա պաշտօնական ներկայա-
ցուցիչ եկեղեցին: Այդպիսի դրութեան մէջ է մեծ մա-
սամբ կրօնի դասաւանդութիւնը ոչ միայն այժմ, այլ և
այն ժամանակ, երբ Կարապետ վարդապետը նշանակուեց
կրօնի ուսուցիչ Մայր Աթոռի ձեմարանում:

Մենք արդէն անցողակի կերպով յիշեցինք, որ մեր վերա-
բերմունքը դէպի կրօնական առարկաները փոխուեցին, երբ
Կարապետ վարդապետը ձեմարան մտաւ: Դրա պատճառն
այն էր, որ Կարապետ վարդապետը իսկապէս կոչուած էր
կրօնի ուսուցիչ լինելու՝ այդ բառի ամենալաւ իմաստով:
Նրա դասերի ժամանակ մենք զգում էինք, որ իւր ասած-
ների ճշմարտութեանը խորապէս համոզուած մի անձնա-

ւորութիւն է կանգնած մեր տառջ, որ իւր անհատակա-
նութեան ուժով մեզ ևս աշխատում էր նոյն ճշմարիտ
քրիստոնէական ոգւով դաստիարակել: Ես երբէք չեմ կա-
րող մոռանալ նրա քրիստոնէական բարոյագիտութեան դա-
սերը. այնքան ազդեցիկ և այնքան հարուստ էին նրանք
իրենց բովանդակութեամբ: Մեր աչքի առաջ, ծանր եր-
կունքով ծնում էր Կարապետ վարդապետը բարոյական
զաղափարները, աստիճանաբար զարգացնում և մեր ըմբռ-
նողութեանը այնպիսի ձևով մասշեղի կացուցանում, որ
նրա իւրաքանչիւր խօսքը անջնջելի կերպով խորապէս
տպաւորում էր մեր մտքում և սրտում: Հապա այն պարզ,
յստակ ըմբռնողութիւնը, որ նա յոյց էր տալիս իւր դա-
սաւանդած բոլոր առարկաների մէջ անխտիր: Երբ նա մար-
դարէների մասին էր խօսում, այնպիսի սրբազան ոգևորու-
թեամբ փայլում էր նրա դէմքը, որ կարծում էինք թէ
այդ մարդարէներից մէկը անհա կանգնել խօսում է մեզ
հետ, և մեր պատանեկական հոգիների միջով ևս անցնում
էր այն սրբազան սարսուռը, առանց որի կրօնը գոյութիւն
ունենալ չի կարող: Այնքան մեծ էր նրա հմայքը, որ բարձր
դասարանների աշակերտները, որոնք բախտ չէին ունեցել
Կարապետ վարդապետի դասը լսելու մարդարէների մա-
սին, խնդրում էին նրան՝ իրենց հետ էլ անցնել նոյնը: Մի
ուրիշ կարևոր դիժ Կարապետ վարդապետի դասաւանդու-
թեան մէջ, որ միշտ աչքի էր ընկնում, նրա լայն քրի-
ստոնէական աշխարհայեացքն ու ազատախոհութիւնն էր:
Մինչդեռ մեր միւս թեմական դպրոցներում, («աշխարհա-
կան») իսկ կրօնուսույցներն այնքան նեղոգի և անհանդուր-
ժող էին գտնւում, որ աշակերտին առաջին հակաճառու-
թիւնից յետոյ դասարանից դուրս էին վռնդում՝ ընդհա-
կառակը Կարապետ վարդապետը նեղանում էր, որ աշա-
կերտութիւնը լուռ է, հարցեր չի տալիս, չի փարա-
տում իր հոգու մէջ գոյութիւն ունեցող կասկածները:

Յաճախ կարելի էր լսել նրա բերանից դասի ընթացքում՝ «տղայք, ինչո՞ւ էք լռել, ինչո՞ւ հարցեր չէք առաջարկում, մի՞թէ ամեն ինչ պարզ է ձեզ համար»... Եւ ձեւարանում չկար մի ուսուցիչ (բացառութեամբ Ս. Մանգինեանի), որին աշակերտութիւնն այնչափ սիրէր ու նրա առարկայով ողևորուէր՝ ինչպէս Կարապետ վարդապետին: Այո՛, նեղսիրտ մոլեռանդի մէկը չէր կանգնած մեր առաջ, այլ մի հանդուրժող, խոհուն զլուխ, որ դիտէր ամեն տեղից օգտակարն ու կարևորը վերցնել, որ ասում էր՝ «Թէև Լուծերը շատ մեծ մարդ է, բայց ինձ համար աւելի մեծ նշանակութիւն ունին և ինձ աւելի ողևորում են Մեսրոպ, Սահակ, Ներսէս և այլն», սակայն միևնոյն ժամանակ կարողանում էր Եւրոպական արդի դիտութեան եզրակացութիւններն այնպէս ըմբռնելի կացուցանել մեզ, որ մենք նախնեաց յարգը չ'մոռանալով և նրանց աւանդը սուրբ պահելու ձգտումով լցուած՝ միանգամայն նորադոյն դիտութեան աշակերտ էինք դառնում: Այդ մեծ կարողութիւնն արժանապէս գնահատելու բարեմտութիւն և շնորհք չունեցան դժբախտաբար Ս. Էջմիածնի ժամանակակից վարիչները. նրանք աւելի լսեցին բանասարկուների թելադրութիւններին, որոնց առաջնորդ հանդիսացաւ՝ Գիշնէի դրամական հաշիւների շնորհիւ վերջերս չափազանց յայտնի դարձած Յուսիկ եպիսկոպոս Մովսիսեանը: Միջնադարեան բթամտութեանն անհամապատասխան գտնելով Կարապետ վարդապետի համոզմունքներն ու ներքին ազատութիւնը, սա ներկայ գտնուելով ձեւարանի քննութիւններին՝ Ներսէս վրդ. Մելիք-Թանգեանի հետ՝ չափազանց ազոտամիտ գտաւ Կարապետ վարդապետին և հաղորդեց, «-մ որ պէտք էր. «Ամբողջ քննութեան ժամանակ եկեղեցական հայրերից ոչ մէկի անունը չ'յիշուեց: Վճռական ծայրը հառնակինն էր ու Շլայերմախերինը, որոնք փոխարինել էին Ս. Յովհան Ոսկեբերանին, Ս. Իրիզոր Աստուա-

ժարանին, Բարսեղ Կեսարացուն և այլն» (տես Յուսիկ եպիսկոպոսի խօսքերը՝ Լուծայ 1903, № 3, էջ 218—218, կամ Արարատ 1907, էջ 156): Մութ ուժերն իրենց դործը տեսան, այդ դէպքերից յետոյ Կարապետ վարդապետը միայն կարճ միջոց ուսուցիչ մնաց ձեւարանում և ապա դարձաւ, ինչպէս տեսանք, Երևանի առաջնորդ: Չ'նայելով բոլոր դժուարութիւններին ու հակադիր դժուարութիւնների ստորեկրեայ ջանքերին, ուսուցչութեան դործը չափազանց մօտ էր Կարապետ վարդապետի սրտին: Երեմիա մարգարէի ասածի նման՝ յուսահատութեան բուպէին նա վճռում էր այլ ևս Տիրոջ խօսքը չ'ուսուցանել, բոլորովին հեռանալ ուսուցչական ասպարէզից, որովհետև «Յօրէ անտի երեւոյ մեր ի վերայ ասպարիդիդ տեղացին զլուխ մեր ամենուստեր թշնամանք միայն և նախատինք. անձնադիր վաստակք մեր ի վնաս աշակերտելոցն համարեցան և բարի նպատակք նենդաւորադոյն բացատրութեամբք անդոսնեցան. անունն «Աստուածարան» եղև բան ծաղու և անարգանաց ի բերանս այնոցիկ խկ, յորոց թուէր թէ առաւել իրաւունք էին ակնունելոյ խրախուսանաց և քաջալերութեան» (հրաժարական դրութեան մի հատուած, որ 1906 թուի Մայիսի 29-ին Կարապետ, Գարեգին և Երուանդ վարդապետները ներկայացրին Տ. Տ. Մկրտիչ կաթողիկոսին՝ խնդրելով ազատ կացուցանել իրենց ձեւարանի ուսուցչի պաշտօնից): Բայց ամեն անգամ, երբ առիթը ներկայանում էր, Տիրոջ խօսքը կրակ էր դառնում, այրում էր նրա ներսը և Կարապետ վարդապետը դարձեալ ուսուցչական ասպարէզն էր թևակոխում նոյն անփոփոխ յաջողութեամբ: Այդպէս՝ 1907 թուականի սկզբին նա մի քանի ամիս միայն մնաց Բաղւում՝ իբրև գիմնադիտի կրօնուսոյց և այդ կարճ ժամանակամիջոցում թէ ի մօտոյ ծանօթացաւ պետական կրթութեան հաստատութիւնների ներքին դրութեանը և թէ

ձեռք բերեց պաշտօնակիցների կատարեալ յարգանքն ու աշակերտների ջերմ համակրութիւնը. այն աստիճան, որ նոյն իսկ դրսից, ուրիշ դասարաններից գալիս էին նրա դասերը լսելու, իսկ գիմնազիայի վերատեսուչը նրա խոշոր պատրաստութիւնն ու ընդունակութիւնները տեսնելով, քանիցս զարմանք է յայտնել, թէ ինչպէս է համաձայնուել այդպիսի մարդը կրօնաւորի սքեմ հաղնել և ենթարկել իրեն նեղսիրտ, սոգէտ կրօնաւորների հալածանքին:

Անգնահատելի էր Կարապետ վարդապետը նաև իբրև ձեմարանի տեսուչ: Նրա տեսչութեան առաջին օրերում լրացաւ ձեմարանի բացման 25-ամեակը, և նա հարկադրուած էր առանց օգնականի, նոր պաշտօնի բոլոր ծանրութեան հետ, իր վրայ վերցնել նաև այդ մեծ տօնի նախապատրաստութեան, հրաւերներ ուղարկելու, նուիրատուութիւններ խնդրելու, տեղեկագիր պատրաստելու, հանդէս կազմակերպելու, հիւրեր ընդունելու և այլն ամբողջ հոգսը: Տօնը կատարուեց պատշաճ հանդիսաւորութեամբ, և անձեռնմխելի գումարների և որդեգիրներ պահելու խօստումների հետ՝ 5000 ըուբլուց աւելի մի գումար նուէր ստացուեց, որ նրա հսկողութեամբ գործադրուեց ձեմարանական շէնքերի հիմնական վերանորոգութեան համար: Երկու անգամ Բագու զնալով և դիմումներ անելով՝ նա ստացաւ նաև 5000 ըուբլի (յետոյ դարձեալ 560 ըուբլի) որպէս նուէր Թումայեան եղբայրներից, և նոցա ծնողաց յիշատակին կառուցել սուլաւ մի նոր շէնք ձեմարանի հիւանդանոցի համար:

Կարապետ վարդապետը իւր անձնական հանդստութիւնից շատ աւելի վեր էր դասում ձեմարանի շահերը, և դրա համար էլ մենք տեսնում ենք, որ նա խումբ կազմելիս ամենևին ի նկատի չի առնում հրաւիրեալների որոշ գույք իրեն հակառակ կուսակցութեան պատկանելը, այլ մի միայն նրանց դիտական պատրաստութիւնն ու դասա-

ւանդելու հմտութիւնը: Եւ յիրաւի Կարապետ վարդապետի օրով ձեմարանը այնպիսի պատկառելի ուսուցչական խումբ ունէր, որպիսին նա շատ քիչ է ունեցել: Այդպիսի խմբի շնորհիւ և Կարապետ վարդապետի ղեկավարութեամբ ուսումն ու գիտութիւնը շատ առաջ գնաց ձեմարանում, որի դպրոցական ծրագրում շատ դասաւանդելի առարկաներ կային, որոնք սակայն մինչ այդ համարեալ էին դասաւանդուել. և ահա նրա օրով առաջին անգամ ձեմարանում սկսուեց դասաւանդուել— «իրաւունքի կնցիկոպեդիա» (Энциклопедія права), «Ընդհանուր և հայոց եկեղեցու իրաւունք», «Նոր և հին փիլիսոփայութեան պատմութիւն», «Նամեմատական լեզուագիտութիւն», «Երաժշտութեան պատմութիւն և տեսութիւն» (Теорія музики) և վերջապէս գիւղատնտեսութիւն: Երանի կլինէր, եթէ այնուհետև էլ նոյն ուղղութեամբ ու շնորհքով գործը շարունակուէր և ժամանակի տարուբեր հոսանքները ամեն բան չ'կործանէին: Կարապետ վարդապետի ձեմարանից հեռանալը մի մեծ հարուած էր այդ հաստատութեան համար:

Կարապետ Կոստանեանի հմուտ վարչագիտութիւնից 5 տարի իբրև նորա օգնականը օգտուելուց յետոյ՝ Կարապետ վարդապետը կարողացաւ ձեմարանը յաջող կերպով կառավարել նաև իբրև տեսուչ: Դեռ մինչև Կոստանեանի տեսչութիւնը ձեմարանում, ինչպէս նաև մեր միւս թեմական դպրանոցներում աշակերտութիւնը բաժանուած էր 2 կուսակցութեան «մշակական» և «նոր-դարական»: Թէ որքան կորստաբեր է, երբ մի ընտանիքի անդամներ բաժանուում են 2 թշնամական բանակի ու միմեանց դէմ պայքարում՝ այդ ամենի համար պարզ է: Կարապետ վարդապետին յաջողուեց Գ. ձեմարանում արող այդ աշակերտական պայքարն եթէ ոչ իսպառ ոչնչացնել, գոնէ շատ մեղմացնել. նա անարգել թոյլ տուաւ կարգալ ամեն

լրագիր, սակայն ոչ ճեմարանում, այլ ճեմարանից դուրս վանքի մատենադարանում պարապմունքներից յետոյ:

Նա այն բացառիկ տեսուչն է, որ բայց ճակատով Գ. ճեմարանի պատմութեան և հայ հասարակութեան առջև կարող է պարծենալ, որ իւր 3 ամեայ տեսչութեան ընթացքում ոչ մի աշակերտ փողոց չնետեց: Նրա ազդեցութիւնը աշակերտների վրայ շատ մեծ էր. ամենաժանր տպաւորութիւն էր գործում բոլորի վրայ նրա վշտանայր, այնպէս որ ամենքն աշխատում էին ոչ մի ձեռով վիշտ չ'պատճառել նրան: Դրա պատճառն այն էր, որ աշակերտները սիրում, յարգում էին նրան և ամենախորին պատկառանքն էին զգում դէպի նրա անձնաւորութիւնը: Կարապետ վարդապետի վերաբերմունքը դէպի աշակերտները սառն վարչական չէր, բայց ուրիշների սառն վարչականութիւնից շատ աւելի ազդեցիկ էր նրա հայրական մեղմ, գորովալից հողացողութիւնը: Նա մի բարոյական հեղինակութիւն էր աշակերտների համար և իւր անձնաւորութեան ազդեցութեամբ կարողանում էր ամեն ինչ կարգ ու կանոնի և վստիչութեան սահմանների մէջ պահել տալ:

Թէ որչափ նա սիրում էր աշակերտութեան ու նուիրուած էր ճեմարանին. թէ որքան մօտ էր նրա սրտին այդ բազմաչարչար հիմնարկութեան խաղաղ ու անդորր բարգաւաճումն՝ այդ երևում է հետևեալ դէպքից, որ մենք աւելորդ չենք համարում առաջ բերել, որպէսզի ընթերցողը պարզ տեսնէ, թէ Կարապետ եպիսկոպոսն ինչպիսի վեհ հոգու աէր է, թէ ինչպէս իր ետր, անձնական փառքը միշտ ստորադասում էր քան աշակերտութեան շահը:

1900 թուի ուսումնական տարուայ վերջը վարչութեան ինչոր կարգադրութիւնից դժգոհ մօտ 5 ուսանող որոշեցին թողնել ճեմարանն և այդ մտքով խնդիր ներկայացրին հ. տեսչին:

Կարապետ վարդապետը յուզուած մտաւ ընդհանուր

լսարան և ժողովելով ուսանողութեան յայտարարեց. «Այս ինչ ուսանողները խնդիր են ներկայացրել և կամենում են ճեմարանից հեռանալ. աղայք, ճեմարանը ձեզ է պատկանում և ոչ թէ ինձ. ես ձեզ չեմ թող այս Գ-րդ լսարան հասնելուց յետոյ ճեմարանը թողնել ու հեռանալ: Դուք եթէ ինձնից էք դժգոհ, ես այսօր և եթ' Նորին Սրբութեան կրներկայացնեմ իմ հրաժարականը. ես կը հեռանամ՝ բայց դուք պէտք է մնաք...»

Մեզ համար այս յայտարարութիւնը միանգամայն անսպասելի էր: Մենք զինաթափ եղանք. թէ դուրս գնալ ցանկացող ուսանողները մնացին և թէ անմիջապէս դիմեցինք մեր տեսչին, որ նա հրաժարական չներկայացնէ:

Ահա թէ ինչու չէր յաջողում Կարապետ վարդապետի թշնամիներին ճեմարանում խլրտումներ առաջ բերել: Տեսչի ու աշակերտութեան յարաբերութիւնը իշխողի և ստորադրեալի յարաբերութիւն չէր, այլ հօր և որդու, որոնց կապողը փոխադարձ յարգանքն ու սէրն էր:

Կարճ՝ նրա անցկացրած օրերը ճեմարանում իբրև ուսուցիչ, տեսչի օգնական և տեսուչ, խաղաղ աշխատութեան և բարգաւաճման տարիներ են եղել այդ հաստատութեան համար: Դասերից դուրս՝ աղօթքի և հանդէսի տուութեան համար: Դասերից դուրս՝ աղօթքի և ուրիշ ժամերին սուրբ գրքի հատուածներ բացատրելով և ուրիշ դաստիարակչական միջոցներով նա աշխատում էր մարտը բրիստոնէական կրօնական ու բարոյական ոգի ներշնչել, սէր զարթեցնել դէպի կրօնն ու հայրենի եկեղեցին. և այդ շրջանի շրջանաւարտներից քիչ չեն այսօր հողեօրականներ, կրօնուսուցիչներ և աղգային բրիստոնէական ոգի պահանջողներ, չնայելով, որ մեր հասարակական կեանքի բազմադիմի կերպով ճնշող հակազդեցութիւններից շատ աշխատանք ապարդիւն է անցել և նրա ջանքերի շնորհիւ հոգևոր կրօնումն ընդունողներից ոմանք նոյն իսկ հեռացել են այդ ասպարէզից:

Այդ ուսումնաւարտներից մի քանիսի համար նա պատճառ է եղել ուսումը շարունակելու արտասահմանի և ուսաց համալսարաններում: Մասերը նրա ձեռքի տակ հրահանգուած հայոց եկեղեցական գրականութեան սպա-
 րած և անտիպ յիշատակարաններն ուսումնասիրելու՝ սուել են արժեքաւոր շարադրութիւններ, որոնցից մի երկուսը հատուած առ հատուած սպազրուել են «Արարատ»-ի էջերում: Մասերը նրա աշակերտներից մինչև այժմ էլ պահել են նրանից վառ յիշողութիւն և կենդանի յարաբերութեան մէջ են նրա հետ:

Բացի այս բոլորից՝ թատերական ներկայացումներն ու դպրոցական հանդէսներն ևս իրենց պատշաճաւոր տեղը գրաւեցին ճեմարանում նրա օրով, և աւելի ևս նպաստեցին աշակերտների մտաւոր զարգացմանը: Նա աշխատում էր, որ նոյն իսկ ամառներն անօգուտ չանցնէին աշակերտների համար. դրա համար էլ ձեռնարկում էր աշակերտական օգտակար էքսկուրսիաներ դէպի հայրենի երկրի պատմական յիշատակարաններով հարուստ վայրերը, որպէսզի աշակերտներն իրենց աչքով տեսնեն նախնեաց գործերը և անցեալ փառքը համեմատեն արդի խեղճ կայութեան հետ: Այդ էքսկուրսիաներին մասնակցողները մինչև այսօր էլ չեն կարողանում մոռանալ մի դէպք, այնքան խորն է եղել նրա ազդեցութիւնը. մի գիւղում հարցնում են Կարապետ վարդապետին աշակերտների ներկայութեամբ՝ «Ո՞ւր էք գնում»: Նա պատասխանում է. «Հայ էք ման գալիս»: Անցեալը ուսումնասիրել, անցեալը փնտրել ներկայի համար, ահա Կարապետ վարդապետի նպատակը այդպիսի էքսկուրսիաների միջոցին և իւր ամբողջ գործունէութեան ընթացքում: Անցեալը նրա համար մի քարայած, մեռած էութիւն չէ, որ ուսումնասիրել պէտք է միայն ծանօթանալու համար: Նա մի կենդանի էակ է, որ մեզ սովորեցնել կարող է, թէ դէպի ո՞ւր պէտք է գնանք, եթէ

չենք ուզում կորչել, եթէ կամենում ենք մեր փառաւոր նախորդների արժանաւոր յետնորդները լինել: Ահա այդպիսի գաղափարներով է սնուցել մեզ՝ իւր աշակերտներին Կարապետ վարդապետը ամեն քայլափոխում, և յատկապէս յիշածս էքսկուրսիաների ժամանակ:

Գ. ԳԼՈՒԽ.

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԻԲՐԵԻ ՀՐԱՊՍՐԱԿԱԽՕՍ
 ԵՒ ԳԻՏՆԱԿԱՆ.

Կարապետ վարդապետի հրապարակախօսական գործունէութիւնը սերտ կերպով կապուած է «Արարատ» ամսագրի հետ: Իբրև «Արարատ»-ի խմբագիր՝ նա տարիների ընթացքում գրել է կրօնական առաջնորդողների մեծագոյն մասը, աշխատելով կրօնական-բարոյական դաստիարակութեան սերմերը ցանել «Արարատ»-ի ընթերցողների՝ գլխաւորապէս ուրեմն հայ հոգևորականութեան մէջ: Նա սուել է բազմաթիւ յօդուածներ կրօնական, եկեղեցական, պատմական նիւթերի շուրջը, որոնք այսօր էլ դեռ իրենց նշանակութիւնը չեն կորցրել: Համարներ են եղել, որոնց ամբողջ նիւթը ինքն է տուել, թէև այդ միւսնոյն ժամանակը նա ուսուցիչ է եղել ճեմարանում, բազմաթիւ դասեր է ունեցել, տեսչութեան կամ տեսչի օգնականութեան ծանր պաշտօնն էլ կատարելով:

Կարապետ վարդապետի հրապարակախօսական գործունէութեան բնորոշ գիծը, կամ աւելի ճիշտ, աչքի ընկնող կողմերից մէկն այն է, որ նա շարունակ աշխատել է պաշտպանել հայոց եկեղեցին և ս. էջմիածինը արտաքին և ներքին յարձակումների դէմ: Ո՞վ չի յիշում այն օրերը, երբ Մխիթարեան ամբողջ բանակը հրապարակ իջաւ հայոց եկեղեցու հերետիկոսութիւնն ապացուցանելու և հայ

յոց եկեղեցու բոլոր նշանաւոր հայրապետներին զաղանի կամ յայտնի կաթողիկ հռչակելու: Միայն Կարապետ վարդապետն էր, որ ամբողջ հայ հոգևորականութեան միջկից սարի նման կանգնեց Մխիթարեան միաբանութեան դէմ և իւր զօրեղ զրչով ու հմուտ պատմական փաստերով սանձ զրեց հակառակորդների յաւակնոտ և յանդուզն լեզուներին ու միամիտ փորձերին: Ո՞վ կարող է մոռնալ «Կենդրոնական ժողովի» օրերը, երբ հայրապետական կոնդակով հայ հոգևորականութեան դարաւոր իրաւունքներն էին ջնջուած եկեղեցու նկատմամբ, երբ հայ ազգի մի խումբ զաւակներ էջմիածին էին դնացել հայոց կաթողիկոսի հրակերով, և յայտարարուած էին, թէ եկել են հայոց կաթողիկոսին իւր զահից ցած բերելու: Այն ժամանակ էլ միայն Կարապետ վարդապետն էր ամբողջ հայ հոգևորականութեան մէջ, որ զրչով ու խօսքով դէմ ելաւ ներքին թշնամիներին, ցոյց տուեց նրանց պահանջի բոլոր անհեթեթութիւնը՝ առանց ահաբեկիչների սպառնալիքներից վախենալու, և դրանով զարկ տուեց այն ուղղութեանը, որի համար կենդրոնական ժողովի անդամների փորձերը միայն չափազանց վտանգաւոր երեխայական խաղեր էին:

Առհասարակ Կարապետ վարդապետի խմբազրուութեամբ կամ նրա մասնակցութեամբ լոյս տեսնող «Արարատ»-ը ընդհանուր հետաքրքրութիւն էր զարթեցնում և մի քանի շրջաններում շատ սիրով կարդացւում էր: Առանձին ուշադրութեան առարկայ են եղել մանաւանդ Կարապետ վարդապետի տանկահայոց կոտորածների տպաւորութեան տակ զրած ողեշունչ «Երեմիականները» և մի շարք հրապարակախօսական վիճարանական յօդուածները եկեղեցական հարցերի շուրջը: Դեռ շատերի յիշողութեան մէջ է անշուշտ «Արարատ»-ի շարքերը, որ ձեռքէ ձեռք էր անցնում և տաք բանակուռի նիւթ տալիս:

Բայց Կարապետ եպիսկոպոսը յայտնի հրապարակախօս

լինելուց զատ նաև յայտնի գիտնական է: Մենք տեսանք, թէ Ինչպիսի սէր ու եռանդ էր ցոյց տալիս Եւրոպայում Կարապետ սարկաւազը դէպի զիտութիւնը: Նրա առաջին դրուածքը Պօղիկեանների մասին արգէն պատուաւոր տեղ տուեց նրան Եւրոպական աստուածաբան գիտնականների շարքում: Նա նոր լոյս էր սփռում ընդհանուր եկեղեցու պատմութեան մէջ մեծ դեր խաղացած և նրա մի կարևոր դուխր կազմող աղանդի վրայ, այդ պատճառով էլ չէր կարող առանձին զնահատութեան չ'արժանանալ գիտական աշխարհի կողմից: Մինչև անգամ Կարապետ սարկաւազի շարադրութիւնը պատճառ դարձաւ պրօֆեսոր Ֆրիդրիխի, Կոնիբերի և ուրիշների նոր ուսումնասիրութիւններին նոյն աղանդի մասին: Բաղմաթիւ գովասանական գրախօսութիւններից յիշենք միայն մի քանիսի կարծիքը՝ առանց ապացոյցների խօսած չ'լինելու համար: Յայտնի գիտնական հայագէտ Գեյցելը զրուած է նրա մասին աստուածաբանական գրականութեան ամենայայտնի լրագրի մէջ (Theologische Literaturzeitung, hrsg. von A. Harnack und E. Schürer, 1894, № 22). «Մի շատ արժեքաւոր, բազմազան նոր նիւթ մատակարարող աշխատութիւն... հեղինակը բոլորովին անկողմնակալ է... և մեծ լրջութեամբ կարողացել է իւրացնել գերմանական զիտութիւնը... հեղինակի կարծիքները արժանի են մեծ ուշադրութեան... սրամիտ ենթադրութիւն... նորա գրքում էր մի չափազանց կարևոր աշխատութիւն է այս տարօրինակ աղանդի նկատմամբ... Հայոց եկեղեցու մէջ առաջ եկած հակաեկեղեցական ուղղութիւնների պատմութեան համար այս աշխատութիւնը մի հիմնաքար է (ապագայ ուսումնասիրութիւնների համար)»: Նոյն Գեյցելը մի ուրիշ ամսագրում (Historische Zeitschrift 1895, էջ 277). վկայում է, որ Կարապետ սարկաւազի «հիմնաւոր ուսումնասիրութեամբ բազալքակրթութեան պատմու-

թեան տեսակէտից շատ մեծ նշանակութիւն ունեցող այդ ազանդի պատմութիւնը նշանաւոր չափով առաջ է տարուած»):

Գեղեցիկ կարծիքին բոլորովին նման մի գնահատութիւն է տալիս Կարապետ սարկաւազի աշխատանքին նաև մի ուրիշ գիտնական Y. S. ստորագրութեամբ (Literarisches Zentralblatt 1894, № 30, էջ 1050):

Կաթողիկ գիտնականներից՝ նշանաւոր Ֆեատէրը (հայագէտ) հետևեալ կարծիքն է յայտնում (Literarische Rundschau für d. Kathol. Deutschland, 1894, № 6, էջ 183). «Աշխատութիւնը գրուած է օրինակելի ուղիղ գերմաներէնով, այնպէս որ դժուարութեամբ է որոշուում, թէ արտասահմանցու գործ է: Միևնոյն բարձրութեան վրայ է երևում նաև գրքի բովանդակութիւնը: Հեղինակը մի ընդունակ գիտնական մարդ է, հասուն, խոհուն ըմբռնողութեան տէր, ունի քննադատող միտք և շիտակ կրօնանակ ոգի, որ արժանի է առանձնապէս շեշտուելու»:

Մի ուրիշ յայտնի կաթողիկ գիտնական՝ եկեղեցական պատմաբան Ֆունկը գրում է (Theologische Quartalschrift 1894, № 4). «Հետազոտութիւնը շատ նպաստաւոր տպաւորութիւն է անում և թւում է... թէ պէտք է նրա եղրակացութիւններն ընդունել»: Ապա յիշելով, որ երկրորդական խնդիրներում համաձայն չէ եղրակացութիւններին, բայց այդպիսի անհամաձայնութիւններն անխուսափելի դանելով, վերջացնում է հետևեալ խօսքերով. «Հետազոտութիւնը մեծ պատիւ է բերում հեղինակին»:

Էջմիածին վերադառնալուց յետոյ Կարապետ վարդապետը առժամանակ չկարողացաւ լրջօրէն պարապել գիտական աշխատանքներով՝ նեմարանում և «Արարատ»-ի խմբագրութեան մէջ ծանրապէս զբաղուած լինելու պատճառով: Այնուամենայնիւ այդ շրջանում իսկ նա հրատարակեց մի շարք յիշատակարաններ Մայր Աթոռի մատենադարանի ձեռագիրներին և տեսութիւններ գրեց նրանց մասին: Նրանցից երկուսը լոյս են տեսել նաև առանձին տետրակներով (Յովհանն Երուսաղէմացու և Յովհանն Օձնեցու թղթերը): Մի քանի հատուածներ ընդհանուր եկեղեցական գրականութեան մէջ են մտել (Գրիգոր Սքանչելազործի հատակոտորներ պրօֆ. Կոնիքիթի թարգմանութեամբ և Գ. Կորնթացույ թուղթը պրօֆ. Ֆեատերի ուսումնասիրութեամբ), մի երկուսը (օրինակ Ենովքի տեսիլը) ընդհանուր ժողովածուների մէջ:

19⁰²/₀₃ ուս. տ. ընթացքում Կարապետ վարդապետի կարողութիւնն ու ընդունակութիւնը, դժբախտաբար պէտք է ասել իզուր տեղը, շուայուեց մի գործի վրայ, որին վիճակուած չէր լոյս աշխարհի ելնել: Այդ թուականին նրան յանձնեցին Աստուածաշնչի նոր հրատարակութեան խմբագրութիւնը: Ամառուայ սկզբից գործի կաշկերով և նեմարանի լսարանների աշակերտների օգնութեամբ բազմատարութիւններ կատարելով՝ Մայր Աթոռի 40-ի չափ ձեռագիր օրինակներից նա ընտրեց Աստուածաշնչի 8—9 հիմնական ձեռագիրներ, որոնք կարող էին արժեքաւոր տարբերութիւններ ընծայել, և օգնական սենեակով նեմարանի ուսումնաւարտ և պաշտօն ստացած 4—5 հոգին՝ մինչև ուսումնական տարուայ վերջը համեմատեց Աստուածաշնչի գրեթէ կէսը: Այդ համեմատութեան արդիւնքի վրայ հիմնուելով և աչքի տակ ունենալով երբայական բնագիրն ու եօթնասնից յունարէն թարգմանութիւնը՝ տպագրութեան համար պատրաստեց Ծննդոց և Ելից գրքերը, որոնցից և առաջին տպագրական թերթը հանուեց նմուշի համար և ուղարկուեց բազմաթիւ գիտական անձանց ու հաստատութիւնների՝ նոյա կարծիքն իմանալու սկսուած գործի մասին: Սակայն եկեղեցական կալուածների զրաման տաղնապն և ուրիշ արգելաւիժ հանդամանքներ վրայ հասան և, ինչպէս յիշեցի, այդ կարևոր գործը մնաց մինչև այժմ նոյն թերակատար գրութեան մէջ:

տոր Տուժիմին՝ ուսերէն թարգմանելու Իրենիոսի վերոյիշեալ գրուածքը, որը սակայն չ'հրատարակուեց, որովհետեւ առանց մեզ հարցնելու և մեզանից իրաւունք առնելու թարգմանել է պրօֆ. Ն. Ի. Սապարզա և տպել տուել այն, ոտի տակ տալով գտնողի և հրատարակիչներին իրաւունքներ նախ «Христианское чтение» ամսագրի 1907 թ. ապրիլ, մայիս, յունիս համարներում, ապա առանձին զրքով լոյս բնծայել: Իսկ Ասարպակատանի առաջնորդ եղած միջոցին՝ անխոնջ Կարապետ վարդապետը մի կողմից ինքը անգլիերէնի վարժուելով, միւս կողմից օգնում է ամերիկական Պրեսբիտերեան միսիայի դուլս միսար Վիլսոնին Իրենիոսի «Յոյցքը» անգլիերէն թարգմանելու և այսօր էլ, իմ ունեցած հաստատ տեղեկութիւնների համաձայն, նա հետամուտ է նոյնը Փրանսերէն թարգմանել տալու:

Իրենիոսի «Ընդդէմ հերձուածոց» գրուածքի նորագիւտ հայերէն թարգմանութեան մնացած երկու զրքերը Կարապետ վարդապետը միջոց չ'գտաւ այլ ևս հրատարակելու, և վերև յիշուած «Բնագիրք և ճատաղօտութիւնք» յայտնի ժողովածուի մէջ մի գերմաներէն յառաջարանով 1910 թուին Լայպցիգում հրատարակեց նորա աշխատակիցը՝ Երոսանդ Տէր-Մինասեանց (ընդամենը 272 էջ):

Մի ուրիշ նշանաւոր ձեռագիր Կարապետ վարդապետը գտել էր դեռ 1897 թուին Մայր Աթոռի մատենադարանում, նրանից մի քանի հատուած լոյս էր բնծայել նոյն թուականի «Արարատ»-ում և մի յօդուածով բացատրել նրա նշանակութիւնը, արտագրել էր դարձեալ մի շատ փոքր մասը հրատարակութեան համար, բայց յետոյ ոչ ժամանակ էր ունեցել, ոչ էլ նիւթական միջոցներ գործը զլուխ հանելու: Այս ձեռագիրը (Կարինեան յուշակով № 1945, որ այժմ կրում է 1988 համարը) մեզ հասած ամենահին հայերէն ձեռագիրներից մէկն է՝ մագաղաթ, երկաթագիր, և թէպէտ ժամանակը որոշող յիշատակարան

չունի, բայց մի քանի նշաններից դատելով դժուար կարող է թ. դարից այս կողմ գրուած լինել: Նա բովանդակում է Ե. դարու մի յայտնի հեղինակի՝ Աղէքսանդրիայի պատրիարք Տիմոթէոս Էլտրոսի (Կուղ) դաւանաբանական գրուածքը՝ հակաճառութիւն Քաղկեդոնի ժողովի դէմ, որի յունարէն բնագիրը նոյնպէս կորած է և նման, դուցէ մի ուրիշ աշխատութիւնը, մնացել է ասորերէն, Բրիտանական մուզէումի ձեռագիրներից մէկի մէջ: Այդ գրուածքը առանձին կարևորութիւն ունի իբրև Քաղկեդոնի ժողովի ժամանակակից հակառակորդի հեղինակութիւն. որովհետև ընդհանուր եկեղեցու մէջ մեծ պառակտումներ և դարաւոր կռիւներ յառաջ բերող այդ ժողովի մասին սխալ և միակողմանի դատարար էր կազմուել մինչև վերջին ժամանակներս՝ կողմնակիցների գրուածքների հիման վրայ, այն ինչ հակառակորդների գործերը ոչնչացրել էին. այժմ միայն հրապարակ եղնելով հետզհետէ այդպիսի մնացորդներ հայերէն և ասորերէն թարգմանութեամբ՝ լուսարանում են պատմութիւնը: Տիմոթէոսի հակաճառութիւնը այս վերջին տեսակի գործերի մէջ կարևորագոյնը լինելով՝ առանձին նշանակութիւն ունի նաև այն տեսակէտից, որ բազմաթիւ հատուածներ է պարունակում աւելի հին ժամանակների մասամբ կորած գրուածքներից: Իսկ հայերէն ձեռագիրը լեզուական տեսակէտից էլ կարևորութիւն ունի ինչպէս հնարանութիւններով և ժամանակի ընթացքում փոխուած քերականական ձևերով: Արդ՝ այս աշխատութիւնն էլ Կարապետ վարդապետն սկսեց 1906 թուին Երուսաղէմի վրայ. Տէր-Մինասեանի հետ սպաղրութեան համար պատրաստել, Սուբիաս Արքեպիսկոպոսն յանձն առաւ սպաղրութեան ծախքը, և ամբողջ գործը յառաջարանով, ձեռագրի Փաքսիմիլիներով և նոխ ցանկերով լոյս տեսաւ 1908 թուին կրկնակի հրատարակութեամբ. միայն հայերէն Ս. Էջմիածնի տպարանից հայ ընթերցողների համար, և զեր-

մաներէն յառաջաբանով ու կազմով Լայպցիգում՝ Եւրոպացի գիտնական հասարակութեան համար (ամբողջ դործն ունի ընդամենը 440 էջ):

Այդ դործն ևս շատ ջերմ ընդունելութիւն գտաւ թէ հայ բանասէրների և թէ Եւրոպական գիտնականների կողմից: Շատերից բաւական էմ համարում յիշել միայն յայտնի հայ բանասէր Գալուստ Տէր-Մկրտչեանի յօդուածը 1908 թ. «Արարատ»-ի և Յ. Ն. Ակինեանի մանրամասն ուսումնասիրութիւնը «Հանդէս ամսօրեայի» մէջ, որ յետոյ առանձին գրքով էլ լոյս տեսաւ 1909 թուին «Ազգային մատենադարանի» մէջ, Յ. Աճառեանի «հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կողի հակաճառութեան մէջ» ուսումնասիրութեան հետ միասին: Հայ բանասէրները շեշտում են, որ հրատարակութիւնը «գեղեցիկ և խնամուած» է և «ամենայն մասամբ համապատասխան գիտնական դարու պահանջմանց»:

Որովհետեւ այդ հրատարակութիւնը նուիրուած է Մարբուրգի և Գիսենի համալսարանների աստուածաբանական Ֆակուլտետներին՝ իբրև հրատարակիչներին տարիներ առաջ շնորհած աստուածաբանութեան լիցենցիատի (մագիստրոս) տիտղոսի համար շնորհակալութեան մի հաւաստիք, կարևոր էմ համարում այստեղ դնել ամբողջութեամբ այդ Աստուածաբանական Ֆակուլտետների պատասխան գրութիւնները, որոնք լաւագոյն ապացոյցն են Եւրոպական գիտնականների ունեցած կարծիքի Կարապետ եպիսկոպոսի մասին: Մարբուրգի համալսարանի աստուածաբանական Ֆակուլտետը գրում է. «Մարբուրգ, 6 Նոյեմբերի 1908. № 20. Մեծարգոյ վարդապետներ լիցենցիատ գոկտոր Տէր-Մկրտչեան և լիցենցիատ գոկտոր Ե. Տէր-Մինասեանց էջմիածին: Մեծարգոյ Տեարք, Տիմոթէոս էլուրոսի ց'արդ բոլորովին անմատչելի մի գրուածքի հայերէն թարգմանութեան հրատարակութեամբ Դուք մեծ ծառայութիւն մա-

տուցիք եկեղեցական պատմական գիտութեանը. իսկ այդ գիտական աշխատութիւնը Մարբուրգի և Գիսենի աստուածաբանական Ֆակուլտետներին նուիրելով՝ առաւել իրաւունք ձեռք բերիք մեր ջերմ շնորհակալութիւնն ընդունելու: Սիրալիր կերպով մեզ ուղարկուած երկու օրինակները Ֆակուլտետի անդամները տեսնելուց յետոյ, ինձ, իբրև Մարբուրգի աստուածաբանական Ֆակուլտետի դեկանի յանձնարարութիւն արին՝ մեր այդ շնորհակալութիւնն անմիջապէս արտայայտելու: Ես կատարում էմ այն առաւել ևս սիրով, քանի որ ինձ համար շատ արժէքաւոր է այդ հրատարակութիւնը, ի հարկէ աւելի հաճուածութեամբ կ'ընդունէի, եթէ հայերէնից թարգմանած լինէր մեզ բոլորիս ծանօթ մի լեզուով. բայց առանձին կարևոր հատուածները բարեկամներս կ'թարգմանեն ինձ համար: Որ հայոց եկեղեցու զարդը կազմող անձինք այսպիսի հետաքրքրական ուսումնասիրութիւնների առթիւ իրենց յատարբերութիւնն են յիշում մեր կրթավայրերի հետ, անկեղծ ուրախութիւն է պատճառում մեզ և հասարակութեան առաջ ապացուցանում է, որ Ձեզ մի ժամանակ յիրաւի կանում ենք Ձեզ անդորրութիւն յետագայ արդիւնաւոր ուսումնասիրութիւնների համար և ողջունում ենք ջերմ զնահատութեամբ: Դեկան պրոֆեսոր գոկտոր Իւլիսեր»:

Իսկ Գիսենի աստուածաբանական Ֆակուլտետը գրում է իմ հասցեով հետևեալը, որ հաւաստարապէս վերաբերում է նաև Կարապետ վարդապետին. «Գիսեն, 26 Նոյեմբերի 1908. Մեծարգոյ Տէր վարդապետ, ընկերներիս կողմից յայտնում էմ Ձեզ և Տէր վարդապետ Կարապետ Տէր-Մկրտչեանին մեր սրտագին շնորհակալութիւնը այն սիրալիր ուշադրութեան համար, որ ցոյց տուիք մեզ Ձեր վերջին գիրքը նուիրելով: Ցաւում ենք միայն, որ ոչ մէկը մեզանից հնարաւորութիւն չունի Ձեր գիտնականու-

Գ. ԳԼՈՒԽ.

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԻԲՐԵԻ ԱՌԱՋՆՈՐԴ:

Կարապետ եպիսկոպոսն առաջնորդական պաշտօն է վարել երկու մեծ կարևորութիւն ունեցող թեմերում՝ Երևանում և Ատրպատականում:

Մենք տեսանք, որ 1903 թուի նոյեմբերին Կարապետ վարդապետը Երևանի թեմակալի փոխանորդ նշանակուեց: Դեռ ոչ մի վարչական պաշտօն չվարած դուրսը՝ միանդամից Երևանի ամենաընդարձակ թեմի կառավարութիւնը յանձն առնել շատ պատասխանատու զործ էր, մանաւանդ այնպիսի փափուկ պայմաններում, երբ եկեղեցական կալուածների զբաւման խնդիրները դեռ չէին վերջացել և ամեն մի չնչին առթիւ կարելի էր ընդհարում ունենալ պետութեան ներկայացուցիչների հետ. միւս կողմից էլ նիւթական անձկութիւն էր տիրում եկեղեցական բոլոր հաստատութիւններում և շատ դժուարութիւններ կային եկեղեցական հասոյթները դանձելու հանդէպ: Սակայն նա այնպիսի զգուշութեամբ վարեց իւր պաշտօնը, որ ամեն պարտականութիւն ճշտութեամբ կատարելով և եկեղեցական ամեն իրաւունք հաւատարմութեամբ պաշտպանելով հանդերձ՝ ոչ մի անախորժութեան տեղիք չ'տուաւ և մնաց լաւագոյն յարաբերութեան մէջ նահանգական իշխանութեան հետ:

Մանր էր մանաւանդ թեմական դպրոցի նիւթական կացութիւնը, բայց իբրև նախագահ հոգաբարձութեան՝ եռանդուն աշխատութիւն զործ դնելով հոգաբարձուների հետ, հանդանակութիւն կատարելով Երևանում և Ադեբասանդրապոլում, հետամուտ լինելով ամեն կերպ անկորուստ պահելու և աւելացնելու եկամուտները թեմում, կարողացաւ նիւթապէս անկարօտ վիճակի մէջ պահել այդ մօտ

500 մանուկներ կրթող հաստատութիւնը իւր պաշտօնավարութեան երկամեայ շրջանում:

Ամատուայ ամիսները նա շրջադայութեան էլաւ թեմը, այցելեց Նոր-Բայազէզի, Դարալազեաղի, Նախիջևանի վիճակները, եղաւ այնպիսի տեղերում, ուր տասնեակ տարիներից, նոյն իսկ անյիշատակ ժամանակներից ի վեր առաջնորդ ոտք չէր դրել. այցելեց նաև Աբարանի և Նիրակի վիճակները, ամեն տեղ յորդորելով, որ հաւատարիմ սիրով կապուած մնան Մայր Աթոռի հետ, յօժարակամ նուէրներով և աուրբերով օժանդակեն նրան նիւթական անձկութեան մէջ իրեն վրայ դրուած պարտականութիւնները անխափան գլուխ հանելու, անկախ մնացած շատ խնդիրներ կարգադրեց, մերձաւոր հսկողութիւն ունեցաւ թեմական իշխանութեան ստորադրեալ վարչութիւնների և հաստատութիւնների վրայ, տեղի ունեցած զեղծումները քննեց և մի շարք սնտիապաշտութիւններ և օտարամուտ սովորութիւններ խափանեց, աշխատելով միևնոյն ժամանակ եկեղեցական ոգին զօրացնել:

Կարապետ վարդապետի պաշտօնավարութեան երկու տարիները բացառապէս ծանր պատահարների և հասարակական դժբախտութիւնների շրջան էին թեմի ժողովրդի համար. Կալուածների զբաւման հողեմաշ օրերի տխուր հետևանքները չ'անցած վրայ հասաւ խոլերայի համաճարակը, երբ նա շրջաբերականներով հոգ տարաւ խոհական զգուշութեան միջոցներ և առողջապահական կանոններ թելադրելու, անձնական օրինակով վստահութիւն և հաւատ ներշնչելու վհատեալներին:

Սարսափելի հիւանդութեան ճիրաններից հազիւ ազատուած հայ-թուրքական ընդհարումների աւելի մեծ ուսուկալի աղէտը բրդաւ: Բազուի սարսափների լուրն ստանալուն պէս 1905 թուի փետրուարին Կարապետ վարդապետը շտապեց ժողովի հրաւիրել բանիմաց Երևանցի-

ներին և բանակցութեան մէջ մտաւ թուրք հասարակութեան հողեւորական և աշխարհական ներկայացուցիչների հետ. խորհրդակցութիւններ եղան ընդհարումների առաջն առնելու միջոցների մասին, փոխադարձ բարեկամութեան փորձեր, համերաշխութեան թափօրներ տեղի ունեցան: Իսկ երբ այնուամենայնիւ ընդհարումներն սկսուեցին, նա առաջին հասնողներից մէկը եղաւ արիւնոտ դէպքերի տեղը և նահանգապետի ու զինուորական հրամանատարի հետ կառքով փողոցները շրջեց՝ ժողովրդին հանգստացնելու, հայ և թուրք հասարակութեան փոխադարձ վստահութեան յորդորներ կարգալու համար:

Եւ այնուհետեւ ամեն անգամ, երբ մի նոր ընդհարումն էր լինում կամ երկիւղ կար այս ու այն կողմից յարձակման, նա միշտ հրապարակի վրայ էր: Խաղաղարար յանձնախմբի հետ խորհրդակցում էր կամ մենակ կառքով ամայի փողոցներն էր շրջում, իշխանաւորների և կարեւոր քաղաքացիների հետ տեսակցում, վիատաժներին սիրտ տալիս, անխոհեմներին յանդիմանում, նեղեալներին օգնում: Այնպէս որ սուրբութիւն էր դարձել, որ երբ Երևանում մի խլրտում էր լինում, շատ ընտանիքներ հարցնում էին՝ ո՞ւր է արդեօք առաջնորդը. և հանգստանում էին իմանալով, որ նա փողոցից անցաւ կամ արդէն հրապարակի վրայ է: Առաջնորդարանը թրքաբնակ փողոցներով և շուկայով հայկական թաղերից բաժանուած լինելուն համար՝ ամենքը վախենում էին նրա մօտ գնալ, և նա ստիպուած էր ինքն այցելել հարկաւոր մարդկանց, զիշերն ուշ վերադառնալով արիւնոտ տեղերով: Գաւառներում ևս համերաշխութիւն ու խաղաղութիւն պահպանելու համար՝ նրա կարգադրութեամբ մարդիկ ուղարկուեցան, յորդորական հեռադիրներ ու թղթեր գրուեցան. Գարեգին վարդապետը Երևանի խաներից մէկի հետ չին-Նախիջևան գնաց, Լեոն վարդապետը մի մահմեդական հողեւորականի հետ՝

Գառնոյ վիճակը: Եւ այս բոլոր միջոցները քիչ չ'նպաստեցին մեղմացնելու և շատ փոքր չափերի վերածելու աղէտն այնտեղ, ուր գուցէ նրա համար շատ աւելի նիւթ կար, քան թէ Կովկասի ուրիշ ո՞ր և է մասում, և ուր մանաւանդ հայ տարրը սկզբում շատ անպատրաստ էր վտանգին դիմադրելու, մահմեդականն ընդհակառակ՝ տեղ տեղ նախապատրաստուած և խիստ զրգռուած:

Մայիսի սկզբներին չին-Նախիջևանում յարաբերութիւնները նորից լարուեցին թուրքերի և հայերի մէջ, և ստացուած հեռադիրներից եղրակացնելով, որ այս քաղաքի շրջակայքի՝ իրենց հարեանների համեմատութեամբ չնչին փոքրամասնութիւն կազմող հայերին լուրջ վտանգ է սպառնում, Կարապետ վարդապետը Երևանի քաղաքագլուխ Յ. Մելիք-Աղամալեանի հետ ուղևորուեց այնտեղ, ազգաբնակութեանը հանգստացնելու և վտանգի առաջն առնելու նպատակով: Մի քանի ժամ նոցանից առաջ ուղևորուել էին փոխ-նահանգապետն ու չին-Նախիջևանի քաղաքագլուխ Ջաֆար-Կուլի խանը: Նոցա բոլորի տեղ հասնելու յաջորդ օրը, մայիսի 12-ին, երբ դեռ միջոց չէին ունեցել ոչ իրերի դրութեանը լաւ ծանօթանալու, ոչ որևէ բան ձեռնարկելու, բռնկեց յանկարծակի, ինչպէս բոլոր երևոյթներից եղրակացնել պէտք էր, թուրքերի կողմից նախապատրաստուած և ծրագրուած սարսափելի կոտորածը, որին զոհ դնացին քաղաքում 52 հայեր, ըստ մեծի մասին պատուաւոր վաճառականներ և աչքի ընկնող մարդիկ. մինչև վերջին թելը կողոպտուեցին և կրակի մատնուեցին շուկայում հայերի բոլոր խանութները. ինքը Կարապետ վարդապետը, վիճակի փոխանորդի, մի քանի քաղաքացիների և Յ. Մելիք-Աղամալեանի հետ շուկայի ճանապարհի վրայ լինելով և մի բախտաւոր դիպուածի շնորհիւ միայն մի քանի բոպէ յետ մնալով՝ հաղիւ ազատուեց իւր և ընկերների համար ևս նախապատրաստուած վերահաս մահից:

Սկսու ելին այնուհետև տառապանքի սոսկալի օրեր: Կոտորածի առաջին ժամին իսկ նա հեռագրով դիմել էր նահանգապետին՝ տեղի ունեցած աղէտն ու հայերի տաղնուպալից վիճակը նկարագրելով օգնութիւն խնդրել, որին հետեւեցին անմիջապէս խիստ հրամաններ փոխ-նահանգապետին, և կոտորածն ու կողոպուտը շուկայում սահմանափակուեց, այլ ևս հայոց թաղերը չանցաւ:

Սակայն անտանելի դրութիւն էր ստեղծուած շրջակայքի հայ զիւղերի համար: Քաղաքում գտնուած կէս վաշտ զինուորները կոտորածի սկզբից կէս ժամ յետոյ միայն երևային և բաւականանում էին պետական հաստատութիւնները պաշտպանելով՝ իբրև պահապան շրջելով քաղաքի փողոցները. իսկ զիւղերը բոլորովին անպաշտպան էին մնացել: Քաղաքացիների ահաղին ցաւը դեռ ոչնչով չ'սփոփած հարկաւոր էր նրանց վերահաս վստանդից ազատելու մասին մտածել: Կոտորածի երեկոյեան լուր ստացուեց, որ միաժամանակ կոտորած ու կողոպուտ էր տեղի ունեցել երկու մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Ջահուկ գիւղում, որի մօտ 800 տուն թուրք բնակիչները սպառնում էին բնաջինջ անել 200 հայ բնտանիքներին, որոնց տղամարդիկ մեծ մասամբ պանդխտութեան մէջ էին: Կարապետ վարդապետը շտապեց միւս առաւօտն և եթ այնտեղ դնայ Ջափար Կուլի խանի հետ: Երբ քաղաքից ելաւ, նրա հանդէպ եկաւ ծիով մի ասորի, որ նամակ էր բերել Նըխ-Մահմուդից, թէ ահա չորրորդ անգամ գրում և օգնութիւն են խնդրում. բոլոր շրջակայ գիւղերից այնտեղ են թափուում փախտական հայ բնտանիքներ և յուսահատ վիճակի մէջ են: Հանդիպեցին նաև անտէր հօտի պէս դաշտում ցրուած գիւղացիներ, որոնք նրա փեշերից բռնում աղաչում էին առաջ չ'գնար Ջահուկը ձեռքից գնացել էր: Սակայն նրանք շտապեցին և հասան այն ժամանակ, երբ մի քանի տասնեակ հայեր

սպանուած էին, աների մեծ մասը կտրուած, մի քանիսը այրուած, բազմաթիւ բնտանիքներ թուրքերի տնջում գերի բռնուած, իսկ մնացածը հայկական թաղում իրար վրայ խռնուած՝ մի փոքրիկ խումբ զինեալ երիտասարդների յուսահատ պաշտպանութեան ներքոյ օրհասական տաղնապի մէջ: Նրացանածութիւնը դադարեցնել ստլով և Ջափար-Կուլի խանի միջոցով բանակցութիւն սկսելով թուրքերի հետ, նա մի գաւազան ձեռքին դուրս եկաւ մի քանի հարիւր զինուած ու մոլեգնած թուրքերի առաջ իւր անձը ակներև վաանդի ենթարկելով աղատեց աներում գերի բռնուած 70—80 բնտանիքներին, խառնեց դրսի թաղում պաշտպանուածների հետ և ճանապարհ դրեց քաղաքից չորս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Նըխ-Մահմուդ հայ գիւղը. մնաց այնչափ, մինչև կողոպուտից ազատ մնացած 16—18 հայ տների դուռը կրնրեց պետական կնքով, ապա հետևելով չուող գիւղացիներին՝ հասցրեց մինչև Նըխ-Մահմուդ գիւղը, ուր արդէն ժողովուրդ էին 8—9 հայ գիւղերի բնակիչներ, և ուրիշները դեռ փախչում գալիս էին: Թէ ի՞նչպիսի սրտանմիկ տեսարանների պիտի հանդիպէր նա այդ ամբողջ դառնադէտ օրուայ բնթացքում՝ ո՞վ կարող է նկարագրել: Երեկոյեան մթին քաղաք մտնելիս նա նոր յիշեց, որ ամբողջ օրը պատու չէր դրել բերանը:

Քաղաք հասնելուց յետոյ նա շտապեց մի կերպ համոզել փոխ-նահանգապետին, որ սահմանապահ և այլ ծիւղներին մի խումբ դաւաճապետի օգնականի առաջնորդութեամբ ուղարկէր՝ Նըխ-Մահմուդում սոսկալի տաղնապի մէջ իրար վրայ կուտուած ամբոխին սիրտ տալու, նոցա անտէր թողած և այլ անպաշտպան գիւղերի վիճակը որոշելու: Միւս օրը քաղաքի թաղաքենդ արուարծանը կրակի և կողոպուտի մատնուեց ու բնակիչները, ինչպէս և մօտակայ թուրքերի կողմից յարձակման ենթար-

կուած հաջիւորի գիւղացիք, քաղաք սպաստանեցին և եկեղեցու բակը լցուեցին: Պէտք էր խնամել ու կերակրել այդ բազմութիւնը. պէտք էր օգնութեան հասնել դրսում մնացածներին. պէտք էր պաշտպանել դաւառի անտէրունչ ժողովրդին, որից հետզհետէ յուսահատ աղերսներ էին հոսնում. բայց միջոցներ չկային՝ տեղական իշխանութիւնն էլ իրեն անկարող էր յոյց տալիս օգնութեան: Կարապետ վարդապետն սկսեց ապա հեռադրներով հեղեղել բարձր իշխանութիւնների տաւանները, օգնութիւն խնդրել Վեհափառ հայրապետի միջոցով, Թիֆլիզի, Բաղուի, Մոսկուայի, Պետերբուրգի ազդայինների միջոցով: Նոյն երեկոյեան տեղ հասած հրացանակիրների բատալիոնին նա դիմաւորեց զգեստաւորուած, իբրև փրկութեան բանակի, յուզուած խօսքերով հրաւիրեց հետևել իրենց քաջ նախորդների օրինակին, վերահաս փտանդից ազատել այս չարատանջ գաւառի բրիտանաց բնակչութիւնը:

Յաջորդ օրը առաւօտեան ժամը 5-ին նրան դարթեցին Թմբուզ գիւղի համար օգնութիւն խնդրելով: Նա շտապեց նոր եկած զօրքի հրամանատարի մօտ, փոխ-նահանգապետին իմացրեց, բայց 3 ժամ յետոյ միայն օգնութիւն ուղարկուեց, երբ գիւղացիներից 18 հոգի սպանուած էին արդէն, գիւղի մի մասը կողոպտուած և այրուած: Հոգեպէս խիստ տառապելով այսպիսի չափազանց սառնասիրտ վերաբերմունքի համար, նա նոյն օրը քաղաք հասած Կովկասի մահմեդականների հողևոր պետ Շէյխ-ուլ-Իսլամին գիմեց և խնդրեց, որ անմիջապէս ելնեն մի քանի գիւղ շրջելու, որպէս զի համբաւը տարածուի, թէ հայերն ու թուրքերը հաշտուել են և դժոխային կռիւր կանգ առնէ: Շէյխ-ուլ-Իսլամը համաձայնեց, և միասին կառք նստելով ու մերձակայ մի քանի հայ ու թուրք գիւղերն այցելելով՝ նորա կարողացան ի միջի այլոց կանգնեցնել Թմբուզիներին, որոնք արդէն ամեն բան ժողոված ուղում էին քաղաք թափուել:

Այնուհետև հաշտութեան ու խաղաղացման ախուր թափոր տեղի ունեցաւ քաղաքում: Մի հայ քահանայ մի զաղու հետ դէպի Ապրակունիս և Ղազանչի գիւղերն ուղարկուեցին, վերջին գիւղը պաշարումից ազատեցին: Կարապետ վարդապետը նախ՝ Շէյխ-ուլ-Իսլամի հետ գնաց Նրխ-Մահմուդ, այնտեղ սպաստանած 12 հայ գիւղերի բնակիչներին հանգստացնելու և մխիթարելու, և ապա՝ դեներալ Ալիխանովի հետ՝ իւրաքանչիւր գիւղի ներկայացուցիչներից առանձին յուշումներ ստանելու, թէ ինչպէս է եղել իրենց վրայ յարձակումը, ինչ զոհեր էին տուել և ինչ վնասներ կրել: Քաղաքացիներից մի յանձնախումբ բնուրել տուաւ, որ փոխանորդ Թովմա վարդապետի նախագահութեամբ դրսից ստացուած նպաստները պէտք է բաշխէր, հաց մատակարարէր քաղաք սպաստանածներին, հանդերձեղէն և ապրուստի միջոցներ աւերուած գիւղերին: Զօրամասեր ուղարկել տուեց ամենից աւելի փտանգուած գիւղերը և երկու փոքրիկ վաշա կողակներ Երնջակի և Նորսի շրջանները, որոնք մինչև այն յուսահատ դրութեան էին մատնուած, մի քանի գիւղեր աւերուած և կողոպտուած: Փոխարքային հեռադրելով և խիստ բողոքներ ներկայացնելով՝ գտնել ու յետ բերել տուեց Ապրակունեաց Ս. Կարապետ վանքի յայանի «ճազարավրկիչ» սրբութիւնը, որ յափշտակուած էր Եարրմջա գիւղից, վերականգնել տուեց հանգստութիւնն ու բրիտանացական պաշտամունքը Բաղամուզ գիւղում, որ մահմեդականացրել էին: Առաջին օրերին իսկ փակել ու կնքել տուեց շուկայում բոլոր թուրքերի խանութները, որոնք հայ և թուրք հաւատարմատարների ներկայութեամբ բացուեցին և հայերից գողացուած մեծ քանակութեամբ սպրանք գտնուեց նրանց մէջ:

Այսպէս երկու շաբաթ տենդային սաղնապալից աշխատութեամբ ստառապելուց յետոյ՝ գաւառի բոլոր կողմե-

բուն կարգն ու խաղաղութիւնը դրեթէ վերականգնած էր, նպաստի բաշխման գործը բաւականին կանոնաւորուած և հաշուի տակ դրած, Թիֆլիզից բժշկական և նիւթական օժանդակութիւն ստանալու նպատակով առանձին յանձնախումբ էր ուղարկուել և մի փաստաբան՝ տեղի ունեցած ոճրագործութիւնները քննելու և հայերի դատը պաշտպանելու համար: Բայց յանկարծ Երևանից Մայիսի 23—24-ի բուն ընդհարումների առթիւ հայ և մահմեդական ներկայացուցիչների թախանձագին հեռազիրներ ստացուեցին իւր և Շէյխ-ուլ-Իսլամի անուշով, որոնցով խնդրում էին երկուսին էլ Երևան գնալ և այնտեղ կռուող կողմերին հանդատացնելու աշխատել: Օգտուելով այս հանգամանքից տեղի ունեցած ազէտի խսկութիւնը և հայերի վիճակը բարձր իշխանութիւններին ներկայացնելու համար նա շտապեց Շէյխ-ուլ-Իսլամի հետ Երևան գնալ, արկածեալների վիճակի մասին հոգալը թողնելով փոխանորդին և Նախիջևան գնացած Մեսրոպ վարդապետին (այժմ կայսկոպոս) մանաւանդ որ մեծ իրաւունքներով Նախիջևան ուղարկուած մահմեդական և տեղական խաների փեսայ գէներալ Ալիխանովը սկսել էր խիստ աչառու վերաբերմունք ցոյց տալ ի վնաս հայերի: Ճանապարհին Ղամարու կայաքանում լսելով հայերի խնդիրը, որոնք թէպէտ իրենց շրջանի թուրքերին խիստ նեղն էին ձգել, բայց ցանկանում էին վերջ տալ լարուած դրութեանը, համոզել Շէյխ-ուլ-Իսլամին կանգ առնել և գիշերել Ղամարուում. այստեղ միւս առաւօտեան յաջողուեց խաղաղացնել և համերաշխութեան բերել հայ և թուրք հարեաններին:

Երևանում Կարապետ վարդապետը մնաց միայն մի բանի օր: Կարևոր խորհրդակցութիւններից յետոյ՝ հայ ժողովրդեան դրոխն անցած, մահմեդական հասարակութեան հանդէպ ելաւ քաղաքի կենդրոնում, նահանգապետի, Շէյխ-ուլ-Իսլամի և ուրիշ իշխանութիւնների ներկայութեամբ

բուն դայրոյթ արտայայտեց այն մասին, որ, չնայելով խաղաղութեան բանակցութիւններին, մի հայի սպանել էին նոյն առաւօտ Երևանի այգիներում, չնայելով երկուօր առաջ Նորաշէնի կայարանում Շէյխ-ուլ-Իսլամի ներկայութեամբ Շարուրի թուրքերին տուած խրատներին՝ նախընթաց օրը յարձակուած էին գործել սակաւաթիւ հայ զիւղերի վրայ և աւերել Ուլիա-Նորաշէն զիւղը: Նրա ծանր խօսքերի սպաւորութեան տակ երկուստեք խոստումներ եղան՝ բոլոր ջանքերը լարած վերջ դնել եղբայրասպան կռուին, իւրաքանչիւր հասարակութիւն իւր միջի յանցաւորին դատելու և քաղաքական իշխանութեան ձեռքը տալու, և երբ կարգը բաւականաչափ վերականգնած էր և խաղաղութիւն հաստատուած քաղաքում, նա շտապեց Վեհափառ Հայրապետից յանձնարարական գիր առնել Կովկասի փոխարքայի անուշով և Թիֆլիզ ուղևորուել: Այստեղ ներկայացաւ փոխարքային, տեսնուեց նրա երկու օգնականների հետ, մանրամասն նկարագրեց Նախիջևանի ազէտը իւր դառն հետևանքներով, բացառեց հայերի ծանր կայութիւնը և գէներալ Ալիխանովի բունած դիրքից սպառնացող վտանգը:

Այս տեսակցութիւնների յաջորդ օրը յայտնի եղաւ, որ Ալիխանովի իշխանութիւնը սահմանափակուած է զօրաց որոշ մասի հրամանատարութեամբ, իսկ Երևանի նահանգի և Զանգեզուրի գէներալ նահանգապետ է նշանակուած ընդարձակ իրաւունքներով արքայազն իշխան Նապոլէոնը: Ապա Կարապետ վարդապետը դատուեց համառօտ և ընդարձակ զրաւոր տեղեկագիրներ պատրաստելով՝ փոխարքային ներկայացնելու համար. բայց տեղեկանալով որ իշխան Նապոլէոնը մեկնել է դէպի Հին-Նախիջևան՝ շտապեց նրա հետեւից հասնել, համառօտ տեղեկագիրը ներկայացնելով փոխարքային, իսկ ընդարձակը յետոյ Նախիջևանից ուղարկելով, որ առանձին ուշադրութեան էր արժանայել

փոխարքայի զիւանատանը և իբրև հայ-թուրքական ընդհարումների աղէտների պարզաբանութիւն մի կարևոր փաստաթուղթ է նկատուել:

Դեռ նոր էր Երևան հասել, երբ այնտեղ լսուեց, որ մի օր յետոյ, յունիսի 18-ին Նահապետ և Աշոտ վարդապետները եպիսկոպոս պիտի ձեռնադրուին: Արդէն ապրիլ ամսին Երևանի եկեղեցիների երէցփոխները մի ստորագրութիւն էին բացել՝ խնդրելու Վեհափառ Հայրապետին, որ իրենց առաջնորդին եպիսկոպոս ձեռնադրէ, դրուատելով նրա արժանիքները և մանաւանդ վերջին ժամանակ ժողովրդին մատուցած ծառայութիւնները, Երևանի ընդարձակ թեմի համար՝ յատկապէս այդ յուզումնալից օրերում՝ խիստ կարևոր համարելով եպիսկոպոս առաջնորդ ունենալը: Կարապետ վարդապետի բոլոր շրջաններում անխտիր լայն ժողովրդականութիւն և համակրութիւն վայելած օրերն էին. և խնդրագիրը մի քանի օրում ծածկուեց 500-ից աւելի ստորագրութիւններով: Վեհափառ Հայրապետը Երևան զնաց, որ սովորութիւն ունէր այդ ժամանակ տասն օրը կամ երկու շաբաթը մի անգամ զնալու, և ստորագրութեան ձեռնարկողներն ու մի քանի պատուաւոր քաղաքացիք ներկայացան ու իրենց խնդիրը մատուցին. նման խնդիր ներկայացրին նաև Երևանի քահանայները: Նորին Վեհափառութիւնը՝ «դեռ ճերմակ մազ չունի» և նման խօսքեր ասելով հանդերձ՝ խոստացել էր ձեռնադրել, երբ եպիսկոպոսական ձեռնադրութիւն կատարէ: Տեղի ունեցող ձեռնադրութեան մասին լսելով՝ թեմական դպրոցի հոգաբարձուները և ուրիշ առաջնակարգ քաղաքացիներ Ս. Էջմիածին շտապեցին, իրենց եղած խոստման կատարումը խնդրելու: Բայց այնտեղ «բարի» մարդիկ իրենց գործն արդէն տեսել էին. զնացողները ծանր հեղինական խօսքեր միայն լսեցին հայրապետից և վիրաւորուած սրտով վերադարձան:

Կարապետ վարդապետը դրանից յետոյ իրեն յատուկ մեծահոգութեամբ՝ կաթուղիկոսի ցոյց առած այդպիսի վերաբերմունքի հանդէպ միմիայն որդիական համբերողութիւն և ակնածութիւն արտայայտեց, և իւր ամբողջ էութեամբ տարուած լինելով իրեն յանձնուած հօտի պաշտպանութեան հողսով՝ անապարեց կրկին աղէտի վայրը՝ ճինՆախիջևան: Ճանապարհին հանդիպելով իշխան Նապոլէոնին բերող զնացքին՝ չկարողացաւ նրան տեսնել: Իշխանը միայն մի երկու օր էր մնացել Նախիջևանում և այժմէական գործերի կարգադրութիւնը այնտեղի գաւառապետին յանձնելով վերադարձել էր: Այնուամենայնիւ Նախիջևանում շատ գործ կար անելու: Կոտորածները թէ քաղաքում և թէ գիւղերում մեծ վերքեր էին բացել, որ բուժել պէտք էր: Մասնաւոր և պաշտօնական կերպով քննութիւն էր կատարուած տեղի ունեցած ոճիրների մասին. դրսից մեծաքանակ նպաստներ էին ստացուել՝ դրամով և նիւթեղէնով, բժշկական օգնութիւն էր ուղարկուել և վիրաւորների խնամարկութեան համար հիւանդանոց բացուել: Հարկաւոր էր հսկողութիւն ունենալ այդ բոլորի կանոնաւոր գործադրութեան վրայ. հարկաւոր էր աւերուած ու կողոպտուած գիւղերին հաց ու հանդերձեղէն հասցնել, քաղաքի շուկայից կողոպտուած ապրանքը դանելու և կարելի եղածը վերադարձնելու հետամուտ լինել, նոր շուկայ կազմակերպել. հարկաւոր էր բազմաթիւ խնդիրներ ու զանգատներ լսել, կարգադրել պէտք եղածը՝ անընդհատ բանակցութեան մէջ լինելով գաւառապետի հետ. դեռ շատ տեղեր յուզումներ կային, հարկաւոր էր դրանց առաջն առնելու մասին հող տանել: Երկու շաբաթ այսպիսի խնդիրներով դրաղուելուց յետոյ՝ հեռապիւրներ են ստացուում Կարապետ վարդապետի և գաւառապետի տնունով, թէ ընդհարումներ են սկսուել Սրղուբաթի շրջանում և Փառակա հայ գիւղը շրջապատուած է թուրքե-

րով: Պայմանաւորում են անմիջապէս երկու վաշտ զօրք ուղարկել օգնութեան և գնալ երկուսն էլ՝ զաւառապետը լեռներով դէպի Փառակա, իսկ Կարապետ վարդապետը փոստի ճանապարհով իւր հայրենի գիւղը՝ Յղնա, ուր պիտի հանդիպէին և որոշէին, թէ ի՞նչ ձեռնարկութիւններ պիտի անել ապագայի վերաբերմամբ և ի՞նչ տեղերում զօրք դնել՝ այս շրջանը սպահովելու համար: Այդպէս էլ կատարում են: Տեղ հասնելով այնպիսի մի ժամանակ, երբ Ազա, Յղնա և բոլոր միւս զիւղերում ձեր, — երիտասարդ ու տղայ՝ ամենքը զինուած և դիրքերի մէջ մտած յարձակման էին սպասում, Կարապետ վարդապետը վերահաս օգնութեան խրախոյս է տանում հետը: Նոյն երեկոյեան Փառակայի պաշարումից ազատուելու լուրն է տարածւում: Իսկ զաւառապետի հետ տեսակցելուց յետոյ նա շրջում է այս շրջանի Բուլլ հայ գիւղերը, մխիթարում և հանգստացնում բոլորին: Ապա Ազուլիսում և Յղնայում ժողոված հանդերձեղէնը և դրամը հասցնում, բաժանում է անձամբ նոյն շրջանի կողոպտուած Ալահի և Գեաղ գիւղերին, անցնում է դէպի Ապրակունիսի շրջանը և պատում նրա հայ գիւղերի մեծ մասը և երեք շաբաթ յետոյ կրկին Նախիջևան վերադառնում: Այստեղ դարձեալ մի երկու շաբաթ մնալուց և առկախ խնդիրները կարգադրելուց յետոյ, նա օգոստոսի սկզբներին վերադառնում է Երևան, ուր վերջին թշնամական ցոյցերն եղան հայերի և մահմեդականների մէջ, որից յետոյ վերջապէս սկսուեց կամաց կամաց խողաղութիւնը վերահաստատուելը:

Իշխան Նապոլէոնի հետ Երևանում տեսնուելով՝ նա բերանացի և զրաւոր զեկուցումներ տուեց ընդհարումների առաջ բերած ծանր հետևանքների, իւր այցելած անդերի հայերի դրութեան մասին, մի քանի կարևոր կարգադրութիւններ խնդրեց, որոնք և մասամբ կատարուեցին: Ապա՝ Օգոստոսի վերջերին այցելութեան գնաց Շարուրի հայ

գիւղերը, իւր ներկայութեամբ բաժանել տուեց կողոպտուած գիւղացիների համար նախապէս դրսից ստացած և այդտեղ ուղարկած հանդերձեղէնը, իւր արամադրութեան տակ դրուած փոքրիկ գումարներից նպաստներ բաշխեց թէ այդտեղի և թէ Դարալագեաղի մի երկու կողոպտուած գիւղերի կարօտեալներին. ստուգեց յատկապէս և հաշուի տակ առաւ Ուլիա-Նորաշէն գիւղի կարեսաց չափը, որ ամբողջապէս կողոպտուել ու կրակի էր մատնուել, հաւասարմատարներ նշանակել տուեց և զեկուցումներ պատրաստեց կենդրոնական նպաստամատոյց յանձնաժողովին դիմելու և գիւղի վերաշինութեան համար նպաստներ խնդրելու:

Մինչ այս՝ հայոց ծխական դպրոցների վերաբացման բերկրալի հրամանն էր եկել և Երևանի ընդարձակ թեմի փոխթեմակայի համար նոր աշխատութիւնների առատ նիւթ բերել: Պէտք էր կարգադրութիւններ անել թէ Երևանում և թէ գաւառներում ուսումնարաններ բանալու, հոգաբարձութիւններ ընտրելու, նախահաշիւ կազմելու. պէտք էր շատ անգերի համար հրահանգներ ու համառօտ ծրագիրներ տալ. պէտք էր յարաբերութեան մէջ մտնել պետական դպրոցների վարչութիւնների և այլ հաստատութիւնների հետ՝ մի շարք խնդիրներ կարգաւորելու համար. պէտք էր կառավարութեանը հաղորդել բացուող դպրոցների մասին և այլն և այլն: Այս աշխատութիւնների վրայ անցան Սեպտեմբեր և Նոյեմբեր ամիսները և գործի էական մասը կարգի դրուեցաւ:

Այդ ուսումնական տարուայ սկզբին Երևանի թեմական դպրոցի նախկին տեսուչ Գարեգին վարդապետ Յովսէփեանը կարգուած լինելով Ս. Էջմիածնի ճեմարանի տեսուչ՝ Վեհափառ Հայրապետը կամեցաւ դպրանոցի վերատեսչութեան պաշտօնն էլ Կարապետ վարդապետին յանձնել, բայց նա արդէն Օգոստոս ամսին խնդրել էր աղաս

կայուցանել իրեն Երևանի փոխ-թեմակալի պաշտօնից. այժմ տեսչութիւնից ևս հրաժարուելով՝ կրկին և կրկին անգամ պնդեց իւր հրաժարականի վրայ, մինչև որ Նոյեմբերի սկզբին, ճիշտ երկու տարի արդիւնաւոր կերպով պաշտօնավարելուց յետոյ, հրաման ստացաւ թողնելու պաշտօնը և Ս. Էջմիածին գնալու, ուր, ինչպէս տեսանք, անմիջապէս դասեր ստանձնեց ձեմարանում և սկսեց դրական աշխատանքներով զբաղուել:

Առաջնորդական պաշտօնի մէջ Կարապետ Եպիսկոպոսին վիճակուած չէր խաղաղ գործունէութիւն: Երևանի թեմի առաջնորդութիւնից հրաժարուելուց առժամանակ յետոյ՝ նա Ատրպատականի առաջնորդ դարձաւ մի այնպիսի ժամանակ, երբ յեղափոխութեան յուզումն ու փոթորիկը բռնկեց ամբողջ Պարսկաստանում:

Ատրպատականի թեմը ամենաաղքատը և ժողովրդի սակաւութեամբ Ամենայն Հայոց Հայրապետին անմիջապէս ենթակայ թեմերի մէջ վերջիններից մէկը լինելով, այնուամենայնիւ իւր անցեալով առանձնայատուկ դիրք ունի՝ իբրև Արտաղու առաքելական արքեպիսկոպոսական վիճակի ժառանգորդը. իսկ իւր քաղաքական դրութիւնից յառաջացող բարդ յարաբերութիւնների շնորհիւ ամենից պատասխանատու թեմերից մէկն է անկասկած առաջնորդի համար: Միակ թեմն է այս, որ ունի իւր առանձին թեմական խորհուրդը և թեմական ժողովը: Այստեղ աւելորդ չէ յիշել, որ կանոնադրութիւն հաստատելուց յետոյ չորս տարի էր անցել, և ոչ մի առաջնորդի ընտրութեամբ բերել չէին կարողացել: Միակ առաջնորդը, որ Վեհափառ Հայրապետի կողմից նշանակուել եկել էր, առաջին իսկ շաբաթը փախչել էր կամեցել և հազիւ ընդամենը ութ ամիս էր դիմացել: Ատրպատականում առաջնորդը գրեթէ նոյնպիսի ներկայացուցիչ է տէրութեան առաջ հայ ժողովրդի համար, ինչպէս հիւսիստոսները իրենց պետու-

թեան հպատակների համար, սակայն առանց ոյժի և իրաւունքների: Մի կողմից՝ նա իւր ժողովրդի պաշտպանութեան համար մշտական յարաբերութեան մէջ է քաղաքական իշխանութեանց հետ, միւս կողմից՝ իւր գրեթէ բացառապէս աշխարհական խորհրդականների հետ սեպհական օրէնք և կանոնաւոր դատավարութիւն չունեցող մի երկրում ժողովրդականների դատերն է նայում, ամեն տեսակ թղթեր վաւերացնում, ամեն կարիքի և նեղութեան մէջ օգնութեան հասնել աշխատում: Այդպիսով հայ հոգևորականը ոչ մի տեղ այնչափ յաճախ առիթ չէ ունենում հայ ժողովրդի ամեն խաւերի, զանազան ազգութիւնների և զանազան կարգերի պաշտօնեաների հետ շրփուելու, մարդուն իւր պակասութիւններով և կրքերով ի մօտոյ ճանաչելու, ինչպէս Ատրպատականում:

Բացի այդ՝ նոր առաջնորդ Կարապետ վարդապետը բացառիկ պայմանների մէջ պէտք է պաշտօն վարէր, երբ առանց այն էլ զօրեղ իշխանութիւնից զուրկ երկիրը յեղափոխական շրջանում էր գտնուում, զանազան կուսակցութիւնների մեռքին խաղաղիկ, և օր աւուր մռայլում էր քաղաքական հորիզոնը, գաւառներում անկարգութիւններն ու աւարառութիւնները բազմանում էին, մինչև որ շատ չանցած՝ թեմի կենդրոնն ու համարեա ամբողջ թեմի ժողովուրդը ներքին պատերազմի բոցերի մէջ զանուշին: Եթէ աւելի խաղաղ և աւելի պակաս միջամտութիւնների ժամանակ ոչ մի առաջնորդ և ոչ մի տեղապահ երկար տարիներից ի վեր չէին կարողացել երկար մնալ այդ թեմում, ինչպիսի աւելի դժուար պիտի լինէր այժմ, յեղափոխական այդ մրրկալից օրերին, գործ առաջ տանելը:

Թեմական կանոնադրութիւնը միայն մի քանի տարի առաջ էր հաստատուած և նրա քիչ կէտերն էին իրական դործադրութիւն գտել: Նրա համաձայն առաջին անգամ ընտրուած թեմական խորհուրդն արդէն կազմալուծուել

էր, մի քանի վիճակներում փորձեր էին եղել գործակալական խորհուրդներ հիմնելու, որոնք սակայն կեանքի շատ թոյլ նշաններ էին ցոյց տուել: Թեմական ժողովի սակաւաթիւ գումարումներն էլ եղել էին մեծ մասամբ միայն առաջնորդ և թեմական խորհուրդը ընտրելու համար: Տոգորուած այն գաղափարով, թէ կանոնաւորապէս ընտրուած ժողովրդական ներկայացուցչութիւնը կարող է կենդանութիւն շնորհել մեր հիմնարկութիւններին, նոր առաջնորդ Կարապետ Տ. վարդապետն ամենից առաջ թեմական ժողովի նստաշրջանը շատ երկարացրեց, և տալով նրան իւր փոքրիկ շրջանակում այնպիսի բնաւորութիւն, ինչպիսին ունի Կոստանդնուպօլսի ազգային ժողովը, նրա առաջ, նոր կազմ ընտրելուց յետոյ, մի շարք հայ ժողովրդի համար կարեւորութիւն ունեցող կրթական-հասարակական խնդիրներ դրեց, որոնք մինչև ամառ ամեն շաբաթ պարբերաբար կրկնուող նիստերում խորհրդակցութեան նիւթ դարձան: Ապա՝ նորընտիր թեմական խորհրդի հետ շաապեց կանոնաւորել թէ առաջնորդարանի գործափարութիւնը և հաշիւները և թէ յարաբերութիւնը գաւառներին հետ: Առաջնորդարանում և գործակալական խորհուրդներում ստացուած բոլոր զրամների համար ընկալագրերի կոճղեր պատրաստուեցին և կարգադրուեց, որ առանց անգործագրի ոչ մի թեմական հասոյթ չստացուի: Ուղարկուեցին հաշուեմատեաններ բոլոր եկեղեցական և կրթական հաստատութիւններին, և չափաբերական մատեաններ բոլոր քահանաներին, որոնք թէև առաջ էլ մի երկու անգամ այդպիսի մատեաններ ստացել էին, բայց շատ քչերն էին գործադրել: տուգանք և պատիժ նշանակուեց այժմ գանյառուների համար: Առաջնորդի համար վերջին տարիները ամսական ռոճիկ էր որոշուել, բայց մնացել էր՝ նորան անյարմար, նոյն իսկ մասամբ անպատուաբեր դրութեան մէջ դնող մի սովորութիւն, որով նա Զորահնայ և

Ձատկի տօներին այցելում էր ունեւոր քաղաքացիներին և աջահամբոյր ստանում: Նոր առաջնորդի առաջարկութեամբ թեմական ժողովը այս սովորութիւնն ևս վերացրեց և որոշեց այդ հասոյթի փոխարէն յաւելում անել նրա ռոճիկի վրայ, իսկ քաղաքացիներին պարտաւորացնել որ իրենց տուած աջահամբոյրը աւելացնեն պտղոյ տուրքի վրայ: Այսպիսով առաջնորդը ոչ մի դրամական հաշուի հետ գործ չի ունենում այլ ևս. թեմական խորհուրդն է դանձում ամեն դրամ և ռոճիկներ վճարում: Թեմական ժողովը առաջին անգամ քննութեան ենթարկեց նաև նախորդ թեմական խորհրդի հաշիւները և կանոնաւոր նախահաշիւ սահմանեց առաջիկայ երկամեակի համար:

Սակայն այս նստաշրջանում թեմական ժողովի ամենից կարեւոր որոշումն եղաւ՝ վաղուց մտածուած կենդրոնական դպրոցի ծրագիրն իրագործել: Աստղատականում մի միջնակարգ կենդրոնական դպրոց ունենալու միտքը յառաջ էր եկել դեռ Սուքիաս Արքեպիսկոպոսի առաջնորդութեան օրով 1893—1894 թ.: Եղիշէ Տ. վարդապետ Մուրադեանի առաջնորդ եղած ժամանակ յաջողուել էր այդ նպատակի համար ստանալ «Քեանարագեազի եղբայրասիրաց ընկերութիւն»-ից մնացած մի բաւական խոշոր գումար, մօտ 16,000 բուբլի. մի քանի հազար բուբլի ևս Բաղւում էր հանգանակուել, ձեռնարկուել էր Թաւրիզում մի հոյակապ տուն գնելու. բայց ժողովուած գումարը չէր բաւականացել տան դինը վճարելու համար և մնացել էր Թումանեանց առւտրական տան մօտ աւանդ (19,120 բուբլի): Նոր առաջնորդ Կարապետ Տ. վարդապետի առաջին հոգացողութիւններից մէկը եղաւ այդ խնդիրը նորից լրջօրէն հրապարակի վրայ դնել և նրա լուծումը ջերմօրէն պաշտպանել թեմական ժողովի առաջ: Մի քանի նիստերում ամեն հանգամանք կշռուեց յետոյ ժողովը որոշեց՝ այն գումարի վրայ, որ Թումանեանների մօտ ստ-

կոսներով դարձել էր 29,000 ռուբլի, աւելացնել եղած ուրիշ նուէրներն ու պակասը պարտքով լրացնելով գնել այն տունը, որի համար Եղիշէ Ճ. վարդապետի օրով պայմանաւորումներ էին եղել: Բախտի բերմամբ 1908 թուի ապրիլ ամսին այդ տան տէրը՝ պ. Ղ. Յակոբեան, Թաւրիզ էր եկել: Կարապետ Ճ. վարդապետը, պատգամաւորներից ոմանց օժանդակութեամբ, բանակցութեան մէջ մտնելով նրա հետ՝ համոզեց նրան ի վերջոյ, որ նախկին պայմանից (35,000 ռուբլի) 2000 ռուբլի ևս զեղջելով վաճառէ տունը՝ նրանում կենդրոնական դպրոցը բանալու համար: Հաստատուն վարձագրերով գնուեց տունը, որոշուեց երկու թաղերի դպրոցների վերին դասարանների փոխարէն, որոնք յաջորդ ուսումնական տարուանից պիտի փակուէին միջոցների սղութեան պատճառով, բանալ երկու համապատասխան դասարաններ, և ապա հետգհետէ աշխատել դպրոցական բաժնի վեց դասարանները լրացնելուց յետոյ՝ ունենալ նաև մանկավարժական և վաճառականական մասնադիտական բաժիններ երկամեայ դասընթացներով: Ընտրուեց նաև մի հանդանակիչ յանձնախումբ առաջնորդի նախագահութեամբ, որ անմիջապէս հանգանակութիւն պիտի սկսէր և ամեն հնարաւոր միջոցներ ձեռք առնելով պիտի աշխատէր Սեպտեմբերին բանալ դպրանոցը վերև յիշուած երկու դասարաններով:

Բայց երկրի քաղաքական դրութիւնը գնալով ծանրանում էր: Գաւառներից աւելի և աւելի անհանգստացուցիչ լուրեր էին գալիս, նոյն իսկ քաղաքում խլրտումներ և ոտնձգութիւններ տեղի ունեցան հայերի դէմ, որ առանց առաջնորդի անմիջապէս ձեռք առած կտրուկ միջոցների կարող էին վտանգաւոր կերպարանք ստանալ: Դեռ ապրիլ ամսի սկզբին Ղարաբաղում մի հայ գիւղ էր կողոպտուել, որի համար խիստ զիմուճներ էին եղել թէ սեղական կառավարութեան և թէ Թէյրան, աւարառու-

թիւնների շարունակութիւնը խափանելու համար: Իսկ յունիսի սկզբներին լուր հասաւ, որ Ուրմիոյ Բարանդուղի վիճակում երեք խառն ասորի-հայաբնակ գիւղեր կողոպտուել և այրուել էին, բնակիչները ծանր հարստահարութեան ենթարկուել: Հորկ եղաւ այդ պատճառով առկա թողնել յօգուտ Կենդրոնական դպրոցի եռանդով և յաջողութեամբ սխտուած հանդանակութիւնը և նոր հանգանակութիւն բանալ, հանդերձեղէն ժողովել Բարանդուղի արկածեալների համար: Միաժամանակ նոցա պաշտպանութեան համար չբաւականանալով պարսից կառավարութեանն արած զիմուճներով՝ Կարապետ Ճ. վարդապետը Ատրպատականի կուսակալի հաւանութեամբ մի ազդու գրութիւն ևս ուղղեց չորս քրիստոնէայ պետութիւնների Թաւրիզի հիւպատոսներին և խնդրեց իրենց կառավարութիւնների ուշադրութիւնը հրաւիրել թուրք-պարսկական սահմանադրութի վրայ դանուող մի բուռն քրիստոնէաների անօգնական վիճակի վրայ, և միահամուռ ձեռնարկութեամբ գալիք վտանգների առաջն առնել: Այլ և՛ Ս. Թաւրէոս վանքի նախկին վանահայր Գէորդ վրդ. Նալբանդեան, որ առաջ ուղարկուած էր Սալմաստի վիճակը գործակալական խորհուրդ ընտրելու և վիճակի այլ և այլ գործերը կարգի դնելու, ուղարկուեց այժմ Ուրմիոյ վիճակը՝ թէ արկածեալներին խնամք տանելու և թէ գործակալական խորհուրդ ընտրելու և բարեկարգութեան վրայ հսկելու: Սակայն բուն իսկ Թաւրիզում յառաջ եկած բարութիւններն ստիպեցին շուտով ամեն ուշադրութիւն իրենց վրայ կենդրոնացնել: Պարսից մէջլիսի ումբակոծութիւնից յետոյ՝ միապետական և սահմանադրական կուսակցութիւնների մէջ արդէն առաջուց սկսուած կռիւր Իսկական պատերազմի փոխուեց: Քաղաքը բաժանուեց երկու կուռուղ բանակների, հայկական թաղերը մնացին սահմանադրականների իշխանութեան տակ, իսկ հակառակ

կուսակցութեան վրիժառուութիւնից փախչող շատ պարսիկ ընտանիքներ տարախնեցին հայերի աները: Հարկաւոր եղաւ մի կողմից հարեանական-եղբայրական օգնութիւն ցոյց տալ այդ խեղճերին, միւս կողմից պաշտպանուել ու պաշտպանել գաւառների անօգնական հայութիւնը այն մեղադրանքների դէմ, թէ հայերը պարսից շահի թշնամիները կողմն են անցել: Այդ բոլորը առաջ տարուեց այնպիսի խոհեմութեամբ, թէ տեղական իշխանութիւններին և թէ իրեն շահին այնպիսի կտրուկ դիմումներ եղան, յենուելով նաև ուստաց հիւպատոսի ազդու բարեխօսութիւնների վրայ, որ մի կողմից տեղական մահմեդական ազգաբնակչութեան հայերի մասին ունեցած համարումը շատ բարձրացաւ և աւելի սերտ բարեկամական յարաբերութիւններ ստեղծուեց նրանց հետ, միւս կողմից Շահնշահի կառավարութիւնը մնաց բարեհաճ դէպի հպատակ հայութիւնը:

Մինչ այս՝ հայրապետական ընտրութեան օրերը մօտենում էին: Երբ պատգամաւոր ընտրուեց թեմի կողմից՝ առաջնորդի հետ համադրային ժողովին մասնակցելու համար, թեմական ժողովը այդ պատգամաւորի վրայ պարտաւորութիւն դրեց արուելիք առաջարկների և կաթողիկոսական թեկնածուների վերաբերեալ հրահանգների հետ, որ եթէ վարդապետի թեկնածութիւն ընդունուի՝ ինքը թեկնածու ներկայացնէ և թեմի կողմից ձայն տայ իրենց առաջնորդ Կարապետ Տ. վարդապետին: Այսպէս մասնակցելով հոկտեմբերի վերջին Տ. Տ. Մատթէոս Բ. Հայրապետի ընտրութեան՝ Կարապետ ձայրագոյն վարդապետը աչքի ընկնող դիրք ունեցաւ նախընթաց խորհրդակցական ժողովներում և մօտիկ յարաբերութեան մէջ եղաւ յապակէս Տանկաստանից եկած հոգևորական և աշխարհական պատգամաւորների հետ:

Ընտրութիւնից յետոյ Թիֆլիզ գնալով և այնտեղ լսե-

լով, որ Թաւրիզի մերձակայ Մուժամբար հայ դիւղը յարձակման էր ենթարկուել, կողոպտուել և շատ զոհեր տուել, և որ Ղարաղաղի և ուրիշ գաւառների հայերն էլ վտանգի մէջ էին՝ համախմբեց Թիֆլիսաբնակ պարսկահայերին, նոյա և ուրիշ խոհական ազգայինների խորհրդակցութեամբ բողոքի և խնդրանաց հեռագիր ուղարկեց շահին, մի յանձնախումբ ընտրել տուեց, որ դրսից հսկէր և ձեռքից եկած օգնութիւնը հասցնէր պարսկահայերին: Ապա Կարապետ Տ. վարդապետն ուղևորուեց Բաղու, ուր եկեղեցում նկարագրելով այն ծանր դրութիւնը, որի մէջ գտնուում էր Ատրպատականի հայութիւնը և այն նիւթական տագնապը, որ յառաջացել էր արդէն Մուժամբարցիների համար, և յառաջ դալ կարող էր շուտով Թաւրիզի և ուրիշ տեղերի հայերի համար, հասարակութեան ուշադրութիւնը և օգնութիւնը խնդրեց: Յետոյ հանգանակութիւն կատարելով՝ ժողովեց 5155 բուբլի, թողեց, որ հանգանակութիւնը շարունակուի Թումանեանց առևտրական տան միջոցով, իսկ ինքը մի քանի ուրիշ խնդիրներ ևս կարգադրելով՝ վերադարձաւ Թիֆլիս: Ի միջի այլոց Միրզաբէգեան եղբայրներին համոզեց 1300 բուբլի նպաստ տալ իրենց վաղամեռ դստեր յիշատակը պահող Թաւրիզի թեմական սպարանին:

Արդէն առաջ Թիֆլիզում բանակցութիւն էր սկսել պարսկաստանից իւր հարստութիւնը շահած անգաւակ Եզոր Զոհրաբեանի հետ՝ համոզելու համար նրան, որ մի խոշոր նուիրաբերութիւն կամ կտակ անէ յօգուտ Ասրպատականի հայութեան: Այժմ՝ վերադարձին երբ նորոգել էր կամենում բանակցութիւնը, Զոհրաբեանը յանկարծ վախճանուեց և յայտնուեց, որ նա նախօրօք 70,000 բուբլի կտակած է եղել Թաւրիզում թեմական դպրանոց կառուցանելու նպատակով: Մնում էր պատշաճաւոր յարգանք մատուցանել հանգուցեալին, որ և կատարուեց՝ Թիֆլի-

սում եղած պարսկահայերին յուղարկաւորութեան հրաւիրելով, եկեղեցում դամբանական խօսելով և ամեն կերպ նպաստելով բարերարի թաղումը փառաւոր դարձնելու:

Թիֆլիզում Կարապետ ծ. վարդապետը ներկայացաւ նաև փոխարքային, ջանաց Ատրպատականի հայութեան մասին տարածուած սխալ կարծիքները փարատել և միջնորդութիւն խնդրեց՝ Ռուսաց կառավարութեան կողմից Թաւրիզի Արամեան դպրոցին տուած 550 ռուբլի նպաստը նորոգելու, որ մի քանի տարիներէից ի վեր ընդհատուել էր: Այդ միջնորդութիւնը յարգուեց և դպրոցն ստանալով նախկին տարիներէից անվճար մնացած նպաստի մեծագոյն մասը, շարունակեց ստանալ սարէց սարի յիշեալ նպաստը:

Այս միջոցին քաղաքական դրութիւնը Ատրպատականում դնալով աւելի և աւելի բարդանում էր: Արդէն Կարապետ ճայրադոյն վարդապետը Թաւրիզից մեկնելիս հիւպատոսարանի ազգու միջամտութեամբ միայն կարողացաւ անվտանգ անցնել սահմանը՝ իր հետ անցկացնելով նաև մի քանի տասնեակ ուրիշները: Այժմ, հակառակ շատ բարեկամների խորհուրդներին, որոնք այսպիսի վտանգաւոր դրութեան մէջ նրա Թաւրիզ վերադառնալը անխօսեմութիւն էին համարում, շտապեց այնտեղ հասնել, որպէսզի իսպառ չ'փակուէր նանապարհը, որն արդէն ամայացած էր՝ շրջակայքում պատող հրոսակախմբերի աւարտութիւնների շնորհիւ: Իեկտեմբերի վերջին նա տեղ հասաւ, որից յետոյ քաղաքը հետզհետէ մտաւ պաշարման վիճակի մէջ. հազորդակցութիւնը դրսի աշխարհի հետ ընդհատուեց. միայն Ռուսաց հիւպատոսարանի փոստն էր շարաթը մի անգամ Զուլֆա տարւում և բերւում: Հասկանալի է, թէ որքան դժուար պէտք է լինէր մանաւանդ հայոց առաջնորդի կացութիւնը այսպէս չորս կողմից պաշարուած, հրացանների նարնատման մէջ և թնդանօթների

որոտի ներքոյ սպրոզ մի քաղաքում, որի ներսը սահմանադրութեան պաշտպան յեղափոխականներն էին իշխում, իսկ դուրսը Շահնշահին հաւատարիմ համարուող զօրքն ու հրոսակապետերը: Եւ նա իւր վրայ ծանրացած զգալով թէ ներսի և թէ դրսի հայ ժողովրդեան սպահովութեան հոգսը՝ պէտք է այնպիսի աջալուրջ խօհեմութեամբ ու զգուշութեամբ շարժուէր, որ ոչ քաղաքում բոլորովին ինքնիշխան դարձած յեղափոխականները վնասէին հայերին, ոչ էլ դաւառներում ոսնակոխ անէին հայութիւնը՝ ամբաստանելով նրա ներկայացուցիչ առաջնորդարանը իբրև անհաւատարիմ թաղաւորի և կողմնակից նրա թշնամիների:

Այս վերջին վտանգն ի հարկէ աւելի մեծ էր. շատ մեծ կարող էր լինել նաև Թաւրիզի հայերի համար, եթէ պաշարողներին յաջողուէր վերցնել քաղաքը: Ուստի նա ամեն ջանք դործ էր դնում, որ քաղաքի բնիկ հայ ազգաբնակչութիւնը ոչ մի կերպ չ'էլնէ օրինականութեան սահմաններից. և ներսում իշխողներին ստաշանաւոր յարգանքը սալով հանդերձ կարևոր խնդիրների համար Կարապետ ծ. վարդապետը դիմում էր քաղաքը պաշարող էյնուզ-Դովլէին, իբրև շահի կողմից կարգուած կուսակալի, և օգտուելով Պարսկա-Հնդկաստանի առաջնորդ Տ. Սահակ արքեպիսկոպոսի թէհրանում գտնուելուց, նրա միջոցով հաւատարմական զգացումներ էր կարգում թաղաւորին ու փստահացնում, որ հայ ժողովուրդը իւր պարտականութիւնների սահմանից չ'ի դուրս եկել և բոլորովին անմասն է միջազգային կռուին: Միաժամանակ զրաւոր և բերանացի դիմումներ անելով քաղաքում եղող նինք հիւպատոսներին և բացատրելով հայերի անեղանելի դրութիւնը, խոստում էր աւել, որ վտանգի բոլորէին ամեն պաշտպանութիւն ցոյց կ'տրուի նոցա կողմից և հայերը նոցա հպատակների հետ միահաւասար ընդհանուր հովանաւորու-

Թիւն կ'վայելեն, ընդհանուր ուժով կ'դիմադրեն քաղաքը վերցուելու դէպքում դրսի հրոսակների անզուսպ յարձակումներին:

Այսպէս ամենածանր տագնապի մէջ ամիսներ անցան հայերի համար անվտանգ, մինչև 1909 թնի Ապրիլին Ռուսաց զօրքի գալով՝ քաղաքն ազատուեց պաշարումից: Քանի պաշարումը սաստկանում էր, պատերազմի վտանգի հետ համահաւասար սպառնալից էր դառնում քաղաքում հացի սակաւութիւնը: Այստեղ ահա Բագում հանգանակած դրամը խիստ մեծ բարիք դարձաւ հայ չքաւոր դասակարգերի համար: Թաւրիզի հայոց աղքատախնամ ընկերութեան վարչութիւնը, որին յանձնուած էր այդ դրամի գործադրութիւնը, առաջնորդի և թեմական խորհրդի խորհրդակցութեամբ ալիւրի բաւական պաշար էր պատրաստել, և հաց թխել տալով բաժանում էր աւելի և աւելի չունեւորներին. այնպէս որ մինչ պաշարման վերջին շաբաթներին մահմեդականները տառապում էին սովի նիւթներում, հազարաւորներ կանաչ խոտով էին կերակրւում և սովամահ լինելու դէպքերը յաճախում էին, հայերը զգալի նեղութիւն չ'կրեցին և մինչև իսկ հարիւրաւոր մահմեդականներ էլ սովի ամենասաստիկ ժամանակ հաց ստացան: Կարիքի մեծութեան հանդէպ՝ Կարապետ ճ. վարդապետը հեռազրով օժանդակութիւն խնդրեց Թիֆլիսից և Բագուից, և նրա կողմ անմիջապէս արձագանք դատւեց, հեռադրական կարգադրութեամբ բաւականաչափ նոր նպաստներ ստացուեցին: Միւս կողմից՝ նրա խորհրդով առաջարկութիւն եղաւ Թաւրիզի անջուճանին հայոց աղքատախնամին գուգակչիւ մի աղքատախնամ ընկերութիւն էլ մահմեդականների համար հաստատել, որ և դուրս եկաւ հայոց աղքատախնամ վարչութեան գործակցութեամբ և քիչ օգնութիւն չ'հասցրեց աղքատութեան մէջ տառապող հազարաւոր թշուառների, միևնոյն ժա-

մանակ բարձրացնելով հայերի յարգն ու պատիւը իրենց հարեանների աչքում: Հանդանակուած դրամներից առաւ բաժին հանուեց Մուժամբար գիւղին, որի բնակիչները իրենց ամբողջ գոյքից զրկուելուց յետոյ յուսահատուած՝ տրամադիր էին, թողնելու գիւղն ու ցրուելու, բայց այդ նպատակի շնորհիւ եզներ զնելով՝ սիրա առան նորից մայրենի հողը մշակելու և շէնացնելու իրենց տունն ու տեղը. նոյնպէս և Մալմաստի գիւղերից մէկը, որի բնակիչները նոյնպէս կողոպուտի ենթարկուելով ցրուել էին ուրիշ գիւղեր. սրանք ևս նպատակ ստանալով շունչ առան և վերադարձան իրենց տեղը:

Պաշարումը վերցուելուց յետոյ թէպէտ քաղաքի բնակչութիւնը ազատուած էր վտանգից, բայց դաւառներում անապահով տեղեր դեռ շատ կային, որոնց մասին հողատանել պէտք էր, երկար ժամանակ ընդհատուած յարաբերութիւնները վերականգնել և նեղութեան օրերում առաջ եկած շատ կարիքներ դարմանել, մի շարք առկախ մնացած խնդիրներ արժարժել և լուծումն տալ պէտք էր: Այս բոլորը անընդհատ աշխատութիւն և բաղմակոյմանի հետաքրքրութիւն էր պահանջում: Առաջնակարգ խնդիրներից մէկն էր դարձեալ թեմական կենդրոնական դպրոցի բացումը, որ ուսումնական տարուայ սկզբին կարելի չ'եղաւ դուրս բերել տիրող խառնակութիւնների պատճառով: Այժմ պատրաստ շէնք կար և Զոհրաբեանի կտակած խոշոր դումարը, թէպէտ դեռ աւարի ու կէս յետոյ ալիտի սկէք եկամուտ տալ, հաստատուն ապահովութեան երաշխիք էր ներկայացնում: Ուստի մայիս ամսին նորից թեմական ժողով հրաւիրուեց մէջլիսի հայ անդամ ընտրելու և ուրիշ կարեւոր խնդիրների հետ այս խնդրին ևս լուծումն տալու: Մի շարք խորհրդակցութիւններից յետոյ հողաբարձութիւն ընտրուեց թեմական կենդրոնական դրպրոցի համար առաջնորդի նախադահուութեամբ, որ նախորդ

տարին ընդհատուած հանգանակութիւնը շարունակէր, ուսումնական տարուայ սկզբին դպրանոցի Գ. և Բ. դասարանները բանալով՝ մի տարի պահէր աեղական ժողովրդի մատակարարած միջոցներով: Թողային ուսումնարանները պիտի ունենային այնուհետև մինչև Գ. դասարանը, որից երաժ աշակերտները պիտի մտնէին դարձեալ կենդրոնական դպրոցի Գ. դասարան, և սա այդպիսով ունենար աւելի բարձր, կովկասեան թեմական դպրոցների համապատասխան դասընթաց: Հողաբարձութիւնը իւր նախագահի հետ եռանդով առաջ տարաւ հանգանակութիւնը և ապահովեց դպրանոցի բացումը:

Մինչ այդ՝ նորընտիր Տ. Տ. Մատթէոս Հայրապետան արդէն ժամանել էր Մայր Աթոռ: Թեմական ժողովը թեմական խորհրդի առաջարկութեամբ որոշելով որ առաջնորդի հետ երկու պատգամաւորներ ներկայ դնուին Վեհափառ Հայրապետի օժման՝ պարտաւորութիւն զրեց նոցա վրայ խնդրել նորին Վեհափառութեան, որ եպիսկոպոս ձեռնադրէ և նորից թեմ վերադարձնէ իրենց առաջնորդին, հակառակ վերջինիս բացարձակ յայտարարութեան թէ պարտաւոր լինելով նոր հայրապետի ազատ տնօրէնութեան համեմատ շարժիլ և մտադրութիւն չունենալով երկար մնալու ներկայ պաշտօնում՝ բարոյական իրաւունք չի համարում իրեն այս թեմի անունով եպիսկոպոս ձեռնադրուել:

1909 թուի Սեպտեմբերի 13-ին տեղի ունեցած օծումից առաջ և յետոյ եղան խորհրդակցութիւններ պատգամաւորների մէջ, մի յանձնախումբ ընտրուեց նախագիծ մշակելու այն մասին, թէ ինչ կարևորագոյն խնդիրներ էին դրուած նոր հայրապետի առաջ և ինչ եղանակով ցանկալի կ'լինէր նոցա լուծումը: Կարապետ ծայրագոյն վարդապետը բոլոր խորհրդակցութիւնների մէջ եռանդուն մասնակցութիւն ունէր և յանձնախմբի անդամ էր:

Տ. Տ. Մատթէոս սրբազնագոյն Հայրապետը նրան տեսել էր 1894 թուին Կոստանդնուպօլսում, արտասահմանից վերադառնալիս, և շատ լաւ համարում ունէր նրա մասին: Դեռ օծումից շաբաթներ առաջ, Բիւրականում պատուիրած էր եղել կանչել նրան հեռագրով Ս. Էջմիածին, բայց այդ պատուէրը չէր կատարուել. պատուէր ստացողները յաջողել էին այնպէս ձգձգել զրա դործադրութիւնը, որ նա շատ ուշ էր հրաման ստացել զնալու: Այնուամենայնիւ Հայրապետը ցանկութիւն էր յայտնել առաջին օրերը նրան Ս. Էջմիածնում պահելու, մասնակից անելու միաբանութեան կանոնադրութեան և համադրային եկեղեցական ժողովի ծրագրի մշակման, որոնց մասին, իւր խօսքերի համաձայն՝ մտածում էր սկզբներում: Սակայն հայրապետի շուրջն արդէն այնպիսի աղբեղիկներ էին առաջ եկիլ և հանգամանքներն այնպիսի ընթացք ունէին, որ երբ Ատրպատականի պատգամաւորներն իրենց առաջնորդի հետ ներկայացան և իրենց եղած յանձնարարութիւնը կատարեցին, իսկ Կարապետ Տ. վարդապետը թեմական ժողովի առաջ բերած առարկութիւններն այստեղ ևս կրկնեց, նորին Վեհափառութիւնը առանց այլ և այլութեան համաձայնութիւն տուեց, որ ժողովրդի ներկայացուցիչների ցանկութիւնը կատարուի և իրենց առաջնորդը վերադառնայ իրենց մօտ: Հպատակելով այդ որոշման՝ Կարապետ Տ. վարդապետը օծումից մի շաբաթ յետոյ զնաց Թիֆլիս, որոշ համաձայնութեան եկաւ Ե. Զոհրաբեանի կապակատարների հետ՝ մի տարի յետոյ նորա կտակած գումարի տոկոսները Ատրպատականի թեմական կենդրոնական դպրոցին յատկացնելու նկատմամբ, ապա կազմեց փոքրիկ ուսուցչական խումբ և ճանապարհ զրեց դէպի Թաւրիզ: Ս. Էջմիածին վերադառնալով հոկտեմբերի 25-ին, ինչպէս արդէն յիշեցինք, եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ընդունեց Մուշի առաջնորդ՝ Ներ-

սէս և Մայր Աթոռի միաբան Մխիթար և Մեսրոպ վարդապետների հետ. ստացաւ միաժամանակ եպիսկոպոսական պանակէ, և Վեհափառ Հայրապետի կողմից պատշաճաւոր դրութիւններ բերելով Աարպատականի կուսակալի և պարսից նոր դահակալ մանուկ Շահի անունով, որոնցով Շահի դահակալութիւնն էր շնորհաւորում, իւր հայրապետական Աթոռ բարձրանալը և Աարպատականի առաջնորդին եպիսկոպոս ձեռնադրելն էր յայտնում՝ Կարապետ եպիսկոպոսը նոյեմբերին վերադարձաւ Թաւրիզ:

Այս անգամ ևս նա պէտք է դաներ իրեն առաջին իսկ քայլափոխից նորանոր դժուարութիւնների և խոչընդոտների առաջ: Դեռ քաղաք չ'մտած՝ նրան դիմաւորեցին մի խումբ Ղարաղաղցի հայեր, որոնք եկել էին օգնութիւն խնդրելու տեղական խաների անվերջ հարստահարութիւնների և սպառնալից շարժումների դէմ: Կառավարութիւնը ոյժ չուներ ոչ մի իրական օգնութիւն հասցնել և անսանձ խաներին պատժել, թէև ամենայն պատրաստակամութեամբ ընդունում էր առաջնորդի դիմումները: Թէպէտ Թաւրիզում նստած էր Ռուսաց զօրքը, բայց վրայ հասնող ձմեռը և քաղաքական հանդամանքները թոյլ չէին տալիս որ և է կերպով օգտուելու այդ զօրութիւնից: Կարապետ եպիսկոպոսն յօժար էր նոյն իսկ ձմեռն ու ամեն վտանգ արհամարհելով Ղարաղաղցիների հետ իրենց լեռները բարձրանալ, անձամբ վերահասու լինել ժողովրդի պէտքերին և իւր հօտին յուսահատ դրութեան մէջ չ'թողնել, եթէ միայն մի փոքրիկ պահակախումբ արուէր իրեն, բայց այդ ևս դանազան նկատումներով անհնարին համարուէր: Մնում էր բաւականանալ կիսամիջոցներով՝ թղթերով, յանձնարարականներով, սփովիլի և յորդորական խօսքերով:

Առհասարակ երկարատե ներքին կռիւներից և լարւած վիճակից յետոյ՝ մի առանց այն էլ ամեն բանով աղ-

քատ և անզոր երկրի մէջ յառաջ էր եկել լքումն, անիշխանութիւն, անտեսական ծանր տաղնապ, որ հարկաւ իւր աղղեցութիւնը գործում էր նաև թեմի գործերի վրայ: Արդէն մի տարին անցնում էր՝ ինչ նոր պատգամաւորներ պիտի ընտրուէին վիճակներից՝ նոր թեմական ժողով կազմելու համար, բայց այս նկատմամբ դաւառներն ուղղած դրութիւններն անգործադիր էին մնում, մեծ մասամբ խնդիրը նոր և մեծամասնութեանն անհասկանալի լինելուց զատ՝ հետաքրքրական ևս չէր իւր առօրեայ ցաւերի մէջ ստպակուող ժողովրդի համար: Նոյն իսկ կենդրոնում ամենքը փախչում էին հասարակական գործերից. թեմական խորհրդի կազմը դարձեալ քայքայուել էր և հնար չէր լինում նոր կազմ ընտրելու: Առաջնորդարանը պարաքերի տակ էր, ամիսներով կարելի չէր լինում ոռհիկներ տալ և ամենակարևոր պէտքերը հոգալ: Թեմական խզնուկ հասոյթները զանձել դաւառների հարստահարւած սակաւաթիւ աղքատ ժողովրդից, որի շատ մասը կարօտ էր դրսի օգնութեան, հեշտ գործ չէր: Հարկը ստիպեց մի թեթև հանդանակութիւն կատարել. քաղաքում, մի կերպ ժողովել նախկին պատգամաւորներին և թեմական խորհրդի ժամանակաւոր կազմ ընտրել տալ, համբերութեամբ կամաց կամաց կարգի բերել թեմի գործերը:

Մինչ այս՝ Եփրեմի Ղարաղաղում տարած յաղթութիւնները մեծապէս նպաստեցին բարձրացնելու հայերի արամադրութիւնը, այն կողմերում սանձ դնելու առ ժամանակ խաների կամայականութիւններին, առհասարակ եռանդ շարժելու երկրի մէջ և բաւական ոյժ տալու կառավարութեանը: Այդպիսով կարելի եղաւ նաև առաջ տանել տեղական իշխանութիւնների թուլութեան ու անգլխութեան պատճառով երկար ժամանակ քաշքշուող մի քանի խնդիրներ, ինչպէս օրինակ մի 12 տարեկան դաւառացի հայ աղայի խնդիրը, որին բռնի կերպով մահմեդա-

կանացնել էին կամենում և յամառ ու խիստ դիմուճներից յետոյ միայն առաջնորդարանին յանձնեցին:

Մենք տեսանք Կարապետ վարդապետի Երևանի առաջնորդութեան նկարագրութիւնից, որ նրա առաջնորդական գործունէութեան աչքի ընկնող կողմերից մէկը ամբողջ թեմի շրջելը և առ տեղեալն բոլոր առօրեայ գործերի հետ ծանօթանալն ու կարգադրելն է: Սակայն վերջին տարիները Պարսկաստանում ամբողջ քաղաքական աննպաստ պայմաններն արգելք էին եղել Կարապետ եպիսկոպոսին վիճակներն այցելութեան ելնելու: 1910 թուի դարնանը միայն, երբ Ատրպատականի գրեթէ բոլոր կողմերում խաղաղութիւն էր հաստատուել և ժողովուրդը փոքր ի շատէ ազատ շունչ էր քաշում, նա պատրաստուեց ճանապարհորդելու և իւր այցելութիւնն սկսեց մայիս ամսին ամենից կարևոր և հայաշատ վիճակից՝ Սալմաստից:

Միայն այս վիճակում կրթական գործը առաջ էր գնացել և բաւականաչափ դպրոցներ կային. ուստի նա շտապում էր դպրոցական տարին չլրացած այնտեղ լինել և ծանօթանալ դպրոցների ներքին դրութեան: Մինչև այդ ժամանակ՝ առաջնորդարանի և թեմում դանուած դպրոցների մէջ ոչ մի որոշ կապ չկար. մի ընկերութիւն, մի հաստատութիւն, մի անհատ դպրոց էր բաց անում և կառավարում, ինչպէս հասկանում էր կամ ինչպէս կարող էր: Առաջնորդարանին ոչ մի հաշիւ չէր տրւում: Կարապետ եպիսկոպոսի նպատակն էր թեմական կանոնադրութեան համաձայն բոլոր դպրոցների համար ձխական խորհուրդ կամ հոգաբարձութիւն ընտրել տալ, պարտաւորացնել, որ նոքա կանոնաւոր հաշիւ պահեն և ներկայացնեն թեմական խորհրդին, ենթարկուեն նրանից ընդունած միօրինակ կանոնադրութեան և ծրագրին, մշտական կապ պահպանեն նրա հետ:

Սալմաստում վերջին տարին ընտրուած էր շրջանա-

յին տեսուչ, որի հետ և Կարապետ եպիսկոպոսը զլիսաւոր գիւղերի դպրոցներն այցելեց, և բաւական բարեկարգ վիճակի մէջ գտնելով՝ հարկաւոր կարգադրութիւններն արեց և տեղեկադիր ստացաւ: Ապա՝ հրաժարած գործակալական խորհրդի համար նոր ընտրութիւն կատարեց, նոր գործակալ նշանակեց. ուր որ ձխական խորհուրդներ չկային, նոր ընտրել տուեց. ստուգեց և լրացրեց վիճակային պատգամաւորների ընտրութիւնը, թեմական հասոյթների համար հաստատուն չափեր որոշեց, վիճակի քահանաների ընդհանուր ժողովներում նոյա անտեսական դրութեան բարւոքման և պատուաւոր դիրք պահպանելու համար կարգեր սահմանեց, շրջեց բոլոր հայաբնակ գիւղերը, վերահասու եղաւ ժողովրդի բազմադիմի կարիքներին, մեքթթարեց, խրատներ և յորդորներ կարգաց, բազմաթիւ խնդիրներ առ տեղեալն վճռեց: Այցելեց նաև Դերեկի վանքը, որը վերջին տարիներն աւերակ ու ամայի էր մնացել, վերանորոգութեան և ուխտագնացութեան սկիզբը դրեց, կարգադրեց, որ այնուհետև կանոնաւոր վերահսկողութիւն լինէր և ջանք դորձ դրուէր Սալմաստի բարեպաշտ ժողովրդեան նուէրներով վանքը նորոգելու, շրջակայ վանքապատկան հողի վրայ հաստատուն բնակիչներ տեղաւորելու և ուխտագնացութիւնը վերակենդանացնելու, դրանով հետաքրքրութիւն առաջ բերելով ժողովրդի մէջ դէպի եկեղեցին:

Սալմաստից Կարապետ եպիսկոպոսն անցաւ դէպի Խոյ և Մակո, որտեղ հայ ժողովուրդը շատ աւելի ճնշուած է և խեղճ, իւր անտեսական, կրթական և քաղաքակրթական դրութեամբ շատ աւելի յետ մնացած, քան թէ Սալմաստում: Մասնաւոր ջանքերով պահուող դպրոցներ կային միայն Խոյում և մօտիկ Սէյդափար գիւղում. թէ այդտեղում հող տանելով, որ աւելի հաստատ հիմքերի վրայ դրուի դպրոցական գործը, և թէ ուրիշ տեղերում

միջոցներ ձեռք առնելով, որ ապագայում դպրոցներ բացուին, նա այս տեղերում էլ նոյն կարգադրութիւններն է անում վիճակային դործերի վերաբերութեամբ, ինչ որ արդէն շեշտեցինք Սալմաստի նկատմամբ: Բայց այդ աշխատեց տեղական իշխանաւորների աչքում հայերի վարկը բարձրացնել և ցոյց տալ, որ նրանց հետ աւելի մարդավարի պէտք է վարուել և նրանք էլ մի հովանաւոր և պաշտպան ունին: Յատկապէս Մակուի Սարգսրը, որ մի փոքրիկ ինքնակալ բռնաւոր է իւր իշխանութեան սահմաններում և ոչինչ լսել չէր ուզում պետութեան նորահաստատ սահմանադրական կարգերի մասին, շատ յարգալիք ցոյցերով և պատիւներով ընդունեց հայոց առաջնորդին. իսկ սա աշխատեց նրա բարեկամութիւնը գործ դնել յօգուտ այս բնիկ հայկական գաւառում ողբերգական անցեալի կրանումից զերծ մնացած շատ սակաւաթիւ և շատ զրկանքների ենթակայ հայերի:

Այցելեց նաև Արտազու հուշակաւոր Ս. Թադէոսի վանքը, պատմական յիշատակներով այնչափ հարուստ, իսկ կանգուն մնացած հեաքերով խիստ աղքատ Շաւարշանք հոգ տարաւ, որ հնադարեան վանքը նոր աւերումներից զերծ մնայ, տնտեսապէս աւելի բարւոք վիճակ ունենայ և գէթ մօտի փոքրիկ դիւղի հայ բնակիչներին պատսպարել ու նոցա դաւակներին կրթել կարողանայ: Ծանօթացաւ նաև այն տեղերի հետ, որոնք առաջ վանքի կալուածն են եղել և հետզհետէ յափշտակուել են մահմեդական բռնաւորների կողմից, որոնցից 12—14 զիւղերի կալուածագրեր և այլ արտօնագրեր զեռ պահուում են առաջնորդարանում, աւելի յաջող հանդամանքների սպասելով հրապարակ հանելու և արդարութեան վերականգնումը պահանջելու համար: Աւելի հաստատ են մնացել Մակուի վիճակի միւս հուշակաւոր վանքի՝ Ս. Ստեփանոս Նախափայի կալուածական իրաւունքները, որոնց զէմ սակայն

վերջին տարիները մի հտրեան ուստահպատակ թուրք կալուածատէր օտնծղութիւններ էր արել: Այդ առթիւ սկսուած դատը պաշտպանելու համար Կարապետ Էպիսկոպոսը ուստ-պարսկական սահմանը անցաւ, եկաւ Զուլֆա, հանդիպեց Թաւրիզի Ռուսայ հիւպատոսարանից ուղարկուած պաշտօնեային, զիտեց նրա հետ Երասխի երկու ամիերից վանական կալուածի այն մասը, որի միջով յիշեալ կալուածատէրը առու է փորել և մօտ մղոն ու կէս տեղ վանքի կալուածից զրաւել է կամենում, տեղացի վիաների ցուցմունքներով և հակառակորդ կալուածատիրոջ ներկայութեամբ արծանագրութիւններ կազմել տուեց, և գործը դրեց վանքի համար ըստ ամենայնի նպատաւոր ընթացքի մէջ: Կամենում էր ապա դէպի Ղարաբաղ անցնել, բայց անահնկալ արդելառիթների հանդիպելով վերադարձաւ Թաւրիզ:

Ընթացիկ գործերը կարգի դնելուց յետոյ՝ նա ուղեորուեց յուլիսի 19-ին դէպի Մաշաղա. հանապարհին կանգ առաւ Դուխարդան մեծ զիւղաքաղաքում, որ առաջ հայ բնակիչներ է ունեցել և նոցանից մնացել է մի կիսաւեր եկեղեցի, կիսով չափ մահմեդականների ձեռքն անցած և ծառաստան դարձած գերեզմանատունն և էջմիածնապատկան մի ծառաստան մօտակայ դիւղում: Իրտեց այդ ազգային սեպհականութիւններն ու միջոցներ ձեռք առաւ, որ գատափարութեամբ յետ խլուին գերեզմանատան յափշտակուած մասերը և աւելի արդիւնաւոր դարձուի ծառաստանը: Մարաղայում ծխական դպրոցը փակուելու փտանդի մէջ էր և եկեղեցական գործերը շատ խառն էին: Այնտեղ նա ընտրել տուեց ձեռնհաս գործակալական խորհուրդ, որ միաժամանակ դպրոցի հոգարարութեան պաշտօնը պիտի կատարէր և նորա ապահովութեան միջոցներն ձեռնարկէր:

Այդտեղից Կարապետ Էպիսկոպոսն անցաւ նախ դէպի

Միանշապի թրքախօս շրջանը և ապա դէպի Սօւ-Ղը-
 ւաղ՝ պարսկական Գրգստանի կենդրոնատեղին, որտեղ պար-
 սիկ իշխանութիւնը գրեթէ ոչ մի ոյժ չունէր և որի նա-
 նապարհները խիստ վասնզաւոր էին դարձել: Երկու տե-
 դերում ևս իւր վարչական հրահանգիչ գործունէութեանը
 հաւատարիմ, նա գործերը կարգի բերեց, յանձնարարեց
 օժանդակել դպրոցական գործին, և յորդորեց հաւատա-
 րիմ մնալ մայրենի եկեղեցուն և մայրենի լեզուն վերա-
 կենդանացնել դպրոցի և եկեղեցու միջոցով: Ի վերջոյ՝
 միտիթարելով նաև Դարալազ գիւղի սակաւաթիւ և ծանր
 բռնութեանց ճնշման տակ դանուող հայերին՝ Կարապետ
 եպիսկոպոսն անցաւ Սօւ-Ղը-ւաղ:

Այս վիճակն և Ուրմիոյ վիճակին կից Բարաւի-
 շրջանը, երկուսն ևս նախընթաց վիճակի պէս թրքախօս,
 դանուում էին արդէն Օսմանցոյ դրաւած սահմաններում.
 այնպէս որ նա մի քանի օր պիտի նանապարհորդէր կաս-
 կածելի պահակների հետ մի տեղում, որի իսկական իշխա-
 նաւորը յայտնի չէր: Դարալաքի 30 տուն հայերին միա-
 ցնելով Սուլթուզի 130 տան հետ և նոցա համար մի ընդ-
 հանուր գործակալական խորհուրդ ընտրել տալով՝ նա շատ
 յորդորեց և համողեց, որ թողնեն դաղթեն այս անհիւ-
 րընկալ տեղերից դէպի մի այնպիսի հայաշատ գաւառ, ուր
 կարող էին ելնել այժմեան սարկական վիճակից, համա-
 խմբուել, կանոնաւոր եկեղեցի և դպրոց ունենալ, հայ լե-
 զուն և հայ քրիստոնէական կեանքը վերակենդանացնել ի-
 րենց մէջ, մարդավարի ապրել և յառաջագիւծել: Խոստա-
 յաւ նաև հող տանել այդպիսի մի յարմարաւոր բնակա-
 վայր գտնել նոցա համար և գաղթը դիւրացնող ամեն մի-
 ջոց ձեռք առնել:

Անցնելով ապա Բարանդուզի շրջանից և այցելելով նա-
 նապարհին արտաքինով ու ներքինով գրեթէ ամբողջա-
 պէս թրքացած և միայն անունը պահած հայերին, նա

օգոստոսի սկզբին հասաւ Ուրմի: Այս քաղաքի ու գաւա-
 ռի ազգաբնակութեան բաւական ստուար մասը ասորի լի-
 նելու համար՝ երկար ժամանակներից ի վեր քրիստոնէա-
 կան զանազան դաւանութիւնների քարոզիչներ հաստատ-
 ուել են այստեղ, մրցման օրինաւոր և ապօրինի միջոցնե-
 րով միմեանց ձեռքից խլում են իւր փոփոխամտութեամբ
 և կասկածելի բարոյականով յայտնի ժողովրդի խղճուկ մնա-
 ցորդներին: Այնպէս որ՝ ոչ միայն քաղաքում է զգալի
 բազմաթիւ միսիոներական ընկերութիւնների անախորժ
 մրցումը, այլ և շատ ասորաբնակ գիւղերում իրար կողքի
 շարուած են նեստորական, կաթոլիկ, պրաւոսլաւ, բողո-
 քական այս ու այն դաւանութեան եկեղեցիներ. նոյն իսկ
 կան ընտանիքներ, որոնց մէջ մի եղբայրը կաթոլիկ բա-
 հանայ է, երկրորդը՝ պրաւոսլաւ, երրորդը՝ բողոքական
 պաստոր: Հայերը, որ այս վիճակում մօտ հազար տուն են
 հաշոււմ, շատ քիչ են ենթարկուել միսիոնարների ազդե-
 ցութեանը. բայց և դրա փոխարէն զգալի կերպով յետ են
 մնացել ասորիներից կրթութեամբ: Մինչ ասորիների մէջ
 ամեն տեղ դպրոց կայ և համարեա 90% զրադէա է հա-
 մարոււմ, հայոց դպրոցների և զրադէտների թիւը համե-
 մատարար շատ սակաւ է: Բազաքում միայն 60 տան
 չափ հայեր կան, բայց նոցա մէջ մի քանի աչքի ընկնող
 առևտրական տների ներկայացուցիչներ կան, որոնց ձեռ-
 բում է իւր հարուստ արդիւնաբերութեամբ և Տանկաս-
 տանի հետ ունեցած կենդանի հազորդակցութեամբ նշա-
 նաւոր այս կենդրոնի վաճառականութեան մի կարևոր
 մասը: Այս ամենն ի նկատի ունենալով՝ Կարապետ եպիս-
 կոպոսը նախ հողաբարձութիւն ընտրել տուեց ազդեցիկ
 անձերից, ստորագրութիւն բաց արեց և ապահովութեան
 միջոցների ձեռնարկեց, որպէս զի վերաբացուէր քաղաքում
 վերջին տարին փակ մնացած դպրոցը և հայ մանուկները
 չ'հարկապրուէին միսիոներական դպրոցներն յանախել: Սրա

համար ներկայացուցիչներ հրաւիրեց դաւառից, ընտրել տուեց վիճակային պատգամաւորներ և դործակալական խորհուրդ, որ հեռուից կարելի չէր եղել դրաւոր հրահանգներով գլուխ բերել. մինչդեռ այս վիճակում ամենից աւելի կարիք կար մի ներկայացուցչական մարմնի, որ թէ՛ ներքին ազգային եկեղեցական կեանքի վերաբերեալ բազմազիմի խնդիրները ընթացք տար և թէ՛ մասնաւոր հայերի դատը պաշտպանէր զանազան իշխանութիւնների առաջ:

Այցելելով միաժամանակ պարսիկ և օտար կառավարչական հաստատութեանց, միտիոներական մարմինների ներկայացուցիչներին և խոշոր կալուածատէրերին, որոնք առանձնապէս շատ են Ուրմիում և շտապել էին նրա հանդիսաւոր կերպով քաղաք մուտք գործելու ժամանակ մարզիկ ուղարկել առաջը և այլ պատիւներ տալ, հայոց առաջնորդն աշխատեց բարեկամական յարաբերութիւններ հաստատել նոցա և իւր հօտի ներկայացուցիչները մէջ, առնել ի միջի այլոց մի քանի կալուածատէրերի համաձայնութիւնը՝ տեղ տալու իրանց կալուածներում Սուլ-դուղից դաղթող հայերին: Նրջեց այնուհետև կարևորագոյն զիւղերը, ընտրել տուեց ժողովրդական ներկայացուցչութիւններ ծխական գործերը վարելու համար, ստորագրութիւններ առաւ ժողովրդից, որ որոշ տուրքեր վճարելով՝ առաջիկայ ուսումնական տարուանից 6—7 զիւղերում կանոնաւոր ուսումնարաններ բանան, ինչպէս և շատ խնդիրներ առ տեղեան կարգադրեց: Քաղաք գնալուց յետոյ հարց զարթեցրեց կառավարութեան առաջ՝ նախկին անիրաւաբար առնուած ինչ ինչ տուրքեր կարճելու և շտապեց Օգոստոսի 15-ին, Ս. Աստուածածնի աօնին, Թաւրիզ հասնել:

Այստեղ մնաց երկու շաբաթ և այդ միջոցում այցելեց չորս մզոն հեռաւորութեան վրայ գտնուող Մուժամ-

լար զիւղը, որ նախորդ տարուայ աւերումից հազիւ սկսել էր շունչ քաշել և շէնանալ: Այդ զիւղի 60 տուն հայ աղքատ ժողովուրդը, խրախուսուած առաջնորդի այցելութիւնից և յորդորներից, խոստանում էր կանոնաւոր դպրոց պահել առաջիկայում և աւելի ու աւելի եռանդով աշխատել զիւղի բարգաւաճման համար:

Այս օրերում ստացաւ նաև Ս. Աննայի Բ. աստիճանի ուսական շքանշանը, որի համար 1910 թուի ապրիլի 2-ին արձակուած կայսերական հրովարտակի մէջ նա իբրև վարդապետ և Ս. Էջմիածնի սոսկ միաբան է յիշուած, որովհետև շքանշանի առաջարկութիւնը եղել էր 4 տարի առաջ ի գնահատութիւն նորա հայ-թուրքական ընդհանրումների ժամանակ գործ դրած խաղաղական ջանքերի:

Սեպտեմբերի 4-ին մի խումբ Բէյվանջի հայերի ուղեկցութեամբ մեկնեց նա դէպի Ղարաբաղ: Քէյվանք Ղարաբաղի չորս հայաբնակ վիճակների մէջ ամենից հեռաւորն է Թաւրիզից և վերջին տարիների ընթացքում շատ էր նեղուել մերձակայ քրդական ցեղերի պետերից: Այս վիճակի զիւղացիների ներկայացուցիչներն եկել էին Թաւրիզ և առաջնորդի օժանդակութեամբ դատ բաց արել իրենց կողմի ամենից ուժեղ և վտանգաւոր ցեղապետի՝ Բեարիմ-խանի դէմ, որից յետ էին պահանջում աւելորդ վերցրած հարկեր՝ 30,000 ռուբլու չափ և ուրիշ վնասներ: Նոցա Թաւրիզում գտնուած միջոցին Բեարիմ-խանի որդին յարձակումն էր գործել տուել իւր բնակութեան մօտիկ հայ զիւղի վրայ և զանազան վնասներ հասցրել հայերին:

Այսպիսի շահատակութիւնների առաջն առնելու համար Կարապետ եպիսկոպոսը նախ ուղևորուեց դէպի Ղարաբաղի նահանգական կենդրոնը՝ Սհար՝ ուր հիւրընկալուելով նահանգապետի մօտ և խոստում առնելով, որ իւր յետևից մի պաշտօնեայ կուղարկուէր՝ հայերին հասած

վնասներն առ տեղեաւն քննելու և հատուցման մասին հող տանելու, զժուարակոխ ճանապարհներով ուղևորուեց զէպի Բէյվանի զիւղերը: Դեռ երբէք առաջնորդ եպիսկոպոս ոտք չէր դրել Ղարադաղ, և մանաւաղ այս հեռաւոր վիճակը մնացել էր ամեն ուշադրութիւնից զուրկ, ըստ ամենայնի յեա ընկած դրութեան մէջ: Դպրոց այս վիճակի հայ զիւղերում երբէք գոյութիւն չէ ունեցել. եկեղեցի կոչուած էին այնպիսի կիսաւեր, կատարելապէս մերկ խրճիթներ, որ ոչ մի գաղափար տալ չեն կարող Աստուծոյ տան մասին. ամեն բարեպաշտութիւն վերացած էր այնտեղ. բոլոր զիւղերը իւր զտուամեալ հօր հետ հովուող միակ քահանայն օրինակատարութեամբ միայն կապուած է այս ողորմելի ժողովրդի և եկեղեցու հետ, որի քաղաքակրթական զարգացումն ևս գտնուած է կրօնական-կրթական համապատասխան ստոր աստիճանի վրայ: Կարապետ եպիսկոպոսը շրջելով զիւղերը՝ քարոզելով, յորդորելով, ծխական խորհուրդներ ընտրել տալով, խոստում և ստորադրութիւններ առաւ, որ զիւղացիք որոշ տուրքեր վճարեն և առաջիկայում զպրոցներ բանան երեք յարմարագոյն զիւղերում, ուր և ուղարկուին միւս հարեան զիւղերի երեխաները, որ նոքա սկսեն եկեղեցիների նոր պատշաճաւոր շէնքեր կառուցանել և ամեն ջանք գործ դնել հողեպէս վերակենդանանալու: Այստեղ ևս կենդրոնական զիւղում գործակալական ժողովներ գումարեց, գործակալական խորհուրդ և վիճակային պատգամաւորներ ընտրել տուեց, հայերի քաղաքական դրութիւնն ապահովելու և սկսած դատն առաջ վարելու համար խորհրդակցութիւններ ունեցաւ և որոշումներ արաւ, արգելեց մեռելահացի և վաղաժամ նշանադրութեան անտեղի սովորութիւնները, քննեց և կարգադրեց բազմաթիւ տեղական խնդիրներ և այլն և այլն:

Ապա Կարապետ եպիսկոպոսը նոյնպիսի գործունէու-

թեամբ շարունակեց իւր հովուական ճանապարհորդութիւնը նաև Մշղուանի և Մեղափաջի վիճակներում, որոնց հայաբնակ զիւղերի մեծ մասը թուամանեանց յայտնի առևտրական տանն են պատկանում. հիւրընկալուեց այդ տան նահապետ պ. Սարգսի մօտ, օրհնեց նրա մատղարութիւնը՝ Վինա զիւղում իրենց կառուցած հոյակապ տան մէջ ուսումնարան բանալու այդ զիւղի համար և ջուրհանոց հաստատելու, որ զիւղացիներն արհեստ սովորեն. յորդորեց նոր դնումներով ընդարձակել իրենց կալուածները և աւելի աննպաստ պայմաններում ապրող հայերի համար ապաստանարան դարձնել, նորանոր հանրօգուտ ձեռնարկներով փառաւորել իրենց գերդաստանի անունը, որ Թաւրիզում էլ դպրոցներ է կառուցել և շատ ուրիշ բարեգործութիւններ արել:

Այս վիճակներում եղած միջոցին Կարապետ եպիսկոպոսին լուր են բերում, թէ Ռուսաստանից փախստեամբ վերադարձած Ռահիմ խանի որդին՝ Բէուք խանը մի քանի հարիւր ձիաւորներով մօտեցել էր Քէյվանին և ուղում էր յարձակուել Քեարիմ խանի որդու վրայ. իսկ վերջինս ապաստանել է մօտակայ հայ զիւղը՝ խնդրելով մոռանալ իւր արած փաստութիւնները և պաշտպանել իրեն թշնամու զէմ: Հարկ եղաւ այլ կողմերի հայերից 25—30 հրացանաւոր օղնութեան ուղարկել և սարսել այնչափ, մինչև որ Բէուք խանը տեղի կտար այդ սարուկ համարուած և արհամարհուած հայերի առաջ և իւր ցեղի մօտ հեռանալով հանդիստ կ'թողնէ նոցա: Ապա թէ այս անց ուղարժի մասին դրաւոր տեղեկութիւններ հաղորդելով Սարգսի պատականի կուսակալին և պաշտպանութիւն խնդրելով հայերի համար ապագայի վտանգների հանդէպ՝ Կարապետ եպիսկոպոսն անցաւ զէպի Դոմար:

Թաւրիզի Սրամեան դպրոցն երկու զիւղեր և մի քանի զիւղամասեր ունի այս վիճակում ընդարձակ անասու-

ներով, որոնք նախկին կապալառուի կողմից կտրատուել և չարաչար շահագործուել էին և որոնց նկատմամբ առաջնորդարանը երկու տարուց ի վեր դատ էր վարում: Բացի այդ՝ շրջակայքի խաները շատ վնասներ էին հասցրել այս կալուածներին և տիրացել նոցա այս ու այն մասին, որոնց նկատմամբ նոյնպէս դատ էր սկսուած և հարկաւոր էր շարունակել այդ դատը: Կարապետ եպիսկոպոսը ծայրէ ի ծայր անցաւ կալուածների միջով, ծանօթացաւ նոցա ներկայ դրութեանը, զրաւած տեղերը տեսաւ և մի քանի անյետածղերի կարգադրութիւններ արաւ: Այլեւեց նաև այս կալուածների մէջ դտնուող չուժի վանքը, որ ունի ժէ. դարում շինուած մի փոքր քարուկիր կամարով եկեղեցի և մօտին մի քանի կիսաւեր բնակարաններ ուխտաւորների համար. անտառում լեռան լանջին առանձնացած ու անբնակ՝ նա մի ժամանակ յայտնի ուխտասեղի է եղել, իսկ այժմ գրեթէ ապաստարան է միայն մերձակայ Նորաշէն հայ գիւղի հովիւներին ու հօտաղներին: Այս վիճակում ևս եկեղեցիների բարեդարութեան, դպրոցների պահպանութեան, թեմական հասոյթների կանոնաւորման և այլ կարգերի հաստատութեան համար կարգադրութիւններ անելով՝ Կարապետ եպիսկոպոսը մի երիտասարդ ուսուցչի քահանայ ձեռնադրեց վիճակի կենդրոնում. զրա կարեւորութիւնը խիստ զգայի էր այս բնդհանրապէս քահանայից զուրկ, 6—7 գիւղ մի քահանայի հովուութեան մնացած կողմերում: Անցնելով ապա մի քանի ուրիշ հայ գիւղերից էլ և անտանելի ճանապարհներով իջնելով Երասխի ափը՝ Կարապետ եպիսկոպոսն հոկտեմբերի 14-ին անցաւ Ռուս-Պարսկական սահմանը Օրդուբաթի մօտից և մի շաբաթ հայրենի գիւղում հանգիստ առնելով՝ ամսի վերջերին գնաց Ս. էջմիածին:

Այստեղ թոյլաւութիւն ստացաւ Վեհափառ Հայրապետից կարճ միջոցով Թիֆլիս գնալու, ուր ներկայացաւ

փոխարքային և միջնորդութիւն խնդրեց Ս. Ստեփանոս Նախավկայի կալուածական դատը ուսուսական օրէնքով վարելու և Զոհրաբեանի կտակած գումարից Ռուսաց կառավարութեան վերցրած մօտ 9000 ռուբլի ժառանգական տուրքը յետ դարձնելու համար: Բացի այդ՝ տեսնուեց աչքի բնկնող պարսկահայերի հետ և թեմի վերաբերեալ մի քանի կարեւոր խնդիրների համար խորհրդակցեց, Ղարաբաղցի հայերին ժողովի հրաւիրեց և յորդորեց հայրենակցական միութիւններ հաստատել՝ իրենց ձեռնալալային նիւթական ու բարոյական շնորհներ հասցնելու: Տեղեկանալով ապա՝ որ նորոգ հանգուցեալ Ս. Թաւաղեան մի բաւական խոշոր գումար է թողել բարեգործական նպատակների համար, դիմումներ արեց կտակակատարներին և խնդրեց մի մասը յատկացնել Ատրպատականի հայոց թեմական կենդրոնական դպրոցին կից ապաստանարան հաստատելու գաւառացի երեխաների համար:

Վերադարձին, մինչ մի քանի կարգադրութիւններ խրնդրելով իւր թեմի համար, պատրաստուած էր դէպի Թաւրիզ ուղևորուել, սեղի ունեցաւ նոյեմբերի 19-ի չարաբաստիկ խօսակցութիւնը, որով Վեհափառ Հայրապետի ուշադրութիւնը կամենում էր հրաւիրել դէպի մի քանի ճեմարանական միաբանակիցների ցոյց տուած վերաբերմունքի վրայ, իսկ Նորին Սրբութիւնը նախօրօք զրգուած քանի մի ինչ ինչ չարախօսութիւնների շնորհիւ՝ այնպիսի վիրաւորական խօսքեր ասաց նրան, որ հարկադրուեց հրաժարագիր մատուցանել, խնդրելով աղաատ կացուցանել առաջնորդական պաշտօնից և թոյլ տալ իբրև սոսկ միաբան Ռաջնորդական պաշտօնից և թոյլ տալ իբրև սոսկ միաբան Մայր Աթոռում զրական աշխատութիւններով զբաղուել:

Երբ օրեր անցան և Վեհափառ Հայրապետի կողմից ոչ մի կարգադրութիւն չեղաւ այդ հրաժարագրի նկատմամբ, նա յայտնեց իւր հրաժարականը նաև Ատրպատականի թեմական ժողովին, որը ի նկատի ունենալով Կարապետ

Եպիսկոպոսի ցոյց տուած օգտակար և արգիւնաւէտ գործունէութիւնը, հեռագրական և դրաւոր դիմումներով խնդրեց Նորին Վեհափառութեան չ'ընդունել հրաժարականը և թեմ վերադարձնել նրան: Սակայն մինչ այս՝ Վեհափառ Հայրապետը ծանր կերպով հիւանդացաւ: Նրա շրջապատողներից ոմանք նոր իմանալով, թէ երկու շաբաթ առաջ ինչ միջնադէպ էր տեղի ունեցել նորա և Կարապետ Եպիսկոպոսի մէջ, քսամենլի խորհուրդ յղացան շահագործելու այս հանգամանքը և լուրեր տարածելու, թէ Կորապետ Եպիսկոպոսի խօսքերի կամ հրաժարականի պատճառաւ յուզմունքն է յառաջ բերել Վեհի հիւանդութիւնը: Դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած Տ. Տ. Մատթէոս կաթողիկոսի յանկարծական մահը նոր ոյժ տուեց այդ լուրերին. մամուլի մի մասը փողոցի լուրերի վրայ հիմնուած և յետին մտքերով մի կատաղի արշաւանք ձեռնարկեց Կարապետ Եպիսկոպոսի դէմ: Թէպէտ բժշկական վկայութիւններով ու անհերքելի ցուցումներով ապացուցուեց այդ լուրերի անհեթեթութիւնը և չարամտութիւնը, անուամենայնիւ Կարապետ Եպիսկոպոսի դժբախտ հրաժարագիրը երկար ժամանակ լրագրական խմբածանքի նիւթ դարձաւ: Վերջ ի վերջոյ սակայն այդ ամբողջ շինծու աղմուկը չքացաւ, ընդհանրայնելով բանիմաց հայ հասարակութեան մէջ մի շատ նպաստաւոր կարծիք Կարապետ Եպիսկոպոսի անձնաւորութեան մասին. հակառակորդներն այնքան կարճամիտ էին գտնուել, որ խնդրի միայն մի երեսն էին ըմբռնել և յանկարծակիի եկած՝ պապանձուած մնացին, երբ խնդրի միւս երեսն երևան եկաւ ու ինքնին հասկանալի դարձաւ այն բոլոր մարդկանց համար, որոնց աչքերն ու միտքը կուսակցական հաշիւներով չէին պղտորուած:

Վեհափառ Հայրապետի թաղումից յետոյ՝ Սինոդի Նախանդամ և Հայրապետութեան տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը Կարապետ Եպիսկոպոսին և Ատրպատականի

թեմական ժողովին ուղղած պաշտօնական գրերով հաստատեց, որ հանդուցեալ Հայրապետը թեմական ժողովի հեռագիրը ստանալուց յետոյ՝ կամեցել է յետ տալ Կարապետ Եպիսկոպոսի հրաժարականը և իւր թեմը վերադարձնել, ուստի և այդ ցանկութեան համապատասխան ինքն էլ կարգադրուած է, որ նա վերադառնայ:

Այդպէս՝ Կարապետ Եպիսկոպոսն հնազանդելով եղած կարգադրութեանը, յունուարի 7-ին ուղևորուեց դէպի Թաւրիզ, ուր գտաւ ըստ սովորականին թեմի գործերը վայր ի վերոյ եղած, թեմական խորհուրդը կազմալուծուած, յարաբերութիւնները լարուած, առաջնորդարանը անտեսական նեղ դրութեան մէջ: Ծննդեան տօները վերջանալուց անմիջապէս յետոյ գործի հրաւիրելով թեմական ժողովը՝ հետզհետէ ընտրել տուեց թեմական կենդրոնական դպրոցի հոգաբարձութիւն, որ նոյնպէս հրաժարուած էր, թեմական խորհուրդ, որի ընտրութիւնը ամիսներով քաշքուել էր և գլուխ չէր գալիս. թեմի գործերի կարգաւորութեան, կրթական գործի զարգացման և կենդրոնացման, առաջնորդարանի շինութեան և այլ կարևոր խնդիրներ հրապարակի վրայ դրեց, վերակենդանացրեց անմիջապէս յարաբերութիւնը գաւառների հետ՝ ամեն կողմից ուրախութեան և շնորհաւորութեան գրեր ստանալով իւր վերադարձի առթիւ, դիմումներ արաւ Մակուի և Ղարաբաղի հայերին ինչ ինչ ճնշումներից ազատելու համար, թեմական հասոյթները գանձեց և առաջնորդարանի անտեսութիւնը բարւոքեց՝ կարճ միջոցում առաջ բերեց գործերի կանոնաւորութիւն և ըստ ամենայնի դոհացուցիչ վիճակ: Եւ այս բոլորից էլ Կարապետ Եպիսկոպոսն զբաղուած է Ղարաբաղում վերջերս տեղի ունեցած ճնշումների ու հարստահարութիւնների դէմ իւր չարատանջ հօտը ըստ կարելւոյն պաշտպանելու հոգսով:

Մենք վերջապահը Կարապետ եպիսկոպոսի առաջնորդական գործունէութեան նկարագրութիւնը. չենք ուզում չափազանց գովասանքներ շռայլած լինել Կարապետ եպիսկոպոսի հասցէին, բայց արդարութեան պահանջ է խոստովանել, որ նրա գործունէութիւնը շատ օգտակար է եղել Ասորպատականի հայութեան համար. այդ բանը պարտաւոր է խոստովանել ամեն անաչառ մարդ. և Ասորպատականցիք իրենք քանիցս վկայել են այդ պաշտօնական գրութիւններով (եպիսկոպոսութեան վկայականի մէջ, նրանից առաջ կաթողիկոսական ընտրութեան պատգամաւոր ուղարկելիս 1908 թուին, վերջին 1910 թուի նոյեմբերի հրատարականի առթիւ): Իբրև վերջնական հաստատութիւն մեր ասածի և վերջաբան այս դիտի՝ կարևոր ենք համարում այստեղ դնել մի երկու հատուած Թաւրիզեցիներէ այն բազմաստորագիր գրութիւնից, որով նրանք իրենց սիրելի առաջնորդի արժանիքներն և արդիւնաւէտ գործունէութիւնն են գնահատում նրա դէմ եղած մի վրդովեցուցիչ և անարդար յարձակման դէմ. «...Մենք, գործին իրաւէն Թաւրիզեցիներ» պարտք ենք համարում յայտնել, որ Կարապետ եպիսկոպոսը երեք տարուայ իր այստեղի առաջնորդութեամբ մեծապէս օգրաւիւր է եղել ժողովրդի իրական-բարոյական և այլ պէտքերն և իր անհաշու գործունէութեամբ ստեղծել լաւ համբաւ թէ մեր ժողովրդի, թէ Եւրոպացիների և թէ մանաւանդ Պարսից կառավարութեան աչքում: Եւ մենք, որ այսբան կարն և փոթորկալից տարիներում ականատես ենք եղել սրբազանի անորոշանալի գործունէութեան, զարմանում ենք, թէ ինչպէս հեռուում եղող և իրականութեան անպէտք... շտապել է, առանց այլ և այլութեան խաչ դնել այդ գործունէութեան վրայ, առանց հիմնաւոր փաստեր ունենալու:

«Պէտք է աչքաթող չանել, որ Կարապետ սրբազանի

առաջնորդութիւնը զուգադիպել է Թաւրիզի յեղափոխական մրրկալից ժամանակաշրջանին, երբ ամեն ինչ մատուցած էր անօրինակ անիշխանութեան և ստեղծուել էր քաղաքական մի կենդան կացութիւն բոլոր պատասխանատու անձանց համար հաւասարապէս. ահա այդ միջոցին իսկ աջողուել է սրբազանին այնպէս փակուել վարել գործերը, որ վերահաս ամեն պէտքով վրասնակցից զերծ է պահել իւր ժողովրդին:

«Այս յուզումնալից տարիներում, շնորհիւ սրբազանի անդրաւ ջանքերի, մենք հարստացանք մի կենդանական դպրոցով, որի համար թէև աշխատել էին նրա նախորդները, սակայն դուրս չէին բերել այդ:

«Սրբազանին ևն պարտական իր նախաշնորհներէ կապարած մի շարք կարևոր գործեր, ինչպէս օրինակ Արամեան դպրոցի Պարսից պետական նպաստի վերստացումը, որ դադարեցուած էր 14 տարիներից ի վեր. վերականգնումը նոյն դպրոցի Ռուսաց կայսերական կառավարութեան նպաստի, որ ջնջել էր մատենից իր ձեռքով Գօլիցիներ... Սրբազանը մեզանում յայտնի է իբրև անհաւանիչ և դրամական խնդիրներով լաւապէս մատուց մի անձնաւորութիւն, և այս ըոպէիս էլ պարտքերից զատ նա ոչինչ չունի:

«Բոլոր հիւպատոսների հետ սրբազանը գտնուում է բարեկամական յարաբերութեանց մէջ: Առաջին անգամն է, որ յիշեալ հիւպատոսները տեսնում են Եւրոպական իրականութեամբ ճոխացած, բարեհամբոյր և խոհեմ մի հայազգի հոգեւորական, որ իւրաքանչիւրի հետ խօսում է իւր լեզուով, առանց թարգմանի օգնութեան դիմելու:

«...Կարապետ Սրբազանը եպիսկոպոսացել է նախկին թեմական ժողովի տուած վկայականով և կրկնակի առաջարկներով ի սրբազանութեան իւր Եւրոպական և արքայ-նա-

«... գործողութեան...»: («Մշակ») 1911 թ. № 43, էջ 4, ընդգծումները մեծ մասամբ մերն են):

Այս վկայութիւնը իւր հօտի կողմից շատ մեծ պատիւ է բերում Կարապետ եպիսկոպոսին և մենք դիտենք ու համոզուած ենք, որ շատ քիչ հայ հողեօրակաւներ երբ և իցէ արժանացել են ժողովրդի կողմից այդպիսի ըստ արժանւոյն գնահատութեան:

Ե. Գ Լ Ո Ւ Ս.

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԻԲՐԵԻ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆ
ԵՒ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ:

Իւրաքանչիւր պաշտօնեայի համար մարդկային ընդհանուր արժանիքներից զատ՝ նաև որոշ և ուրոյն արժանիքներ են պահանջուում. և այդ պահանջը շատ աւելի խիստ և մեծ է եղել և է հոգևոր պաշտօնեայի նկատմամբ:

Ո՛չ մի պաշտօնեայ իւր ընտրած ասպարէզում արդիւնք ցոյց տալ չէ կարող, եթէ նա իւր պաշտօնի պահանջած Բաղնիկի պատրաստութիւնը չունի, եթէ նա կողմն չի զգում այդ ասպարէզում ծառայելու և եթէ նա չի «գիտեր» իւր պաշտօնով: Այս բոլորից զատ հողեօրականից պահանջուում է նաև խորին հասարակական համոզում, այնպայման անշնորհապարտութիւն, անզահասէր նախանշանները և անշնորհ պաշտպանութիւն իւր ազգային ժողովրդական էկեղեցու «հոգ»:

Մենք տեսանք նախորդ գլուխներում, որ Կարապետ եպիսկոպոսն յիշուած յասկութիւններն ունի անսովոր չափերով: Իբրև ճեմարանաւարտ, փիլիսոփայութեան դոկտոր և աստուածաբանութեան լիցենցիատ՝ նա ունի ամենից բարձր կրթական ցենզը, որ մեր ժամանակի մի հայ

հողեօրական իւր քրտնաջան աշխատութեամբ երբ և իցէ կարող էր ձեռք բերել: Թէ յիրաւի Կարապետ եպիսկոպոսն ըստ ամենայնի արժանի է եղել զիտական այս աստիճաններին և աստուածաբանական ու յարակից զիտութիւնները հիմնովին ուսել և իւրացրել է, ասպացոյց է դրան, ինչպէս տեսանք, ոչ միայն համալսարանի աստուածաբանական Փակուլտետի միջնորդութիւնը լուսաւորութեան նախարարութեան առաջ՝ նրան լիցենցիատի աստիճան տալու, այլ և այն վառ յիշողութիւնը, որ մինչև օրս էլ պահել են նրա մասին նրա հուշակաւոր ուսուցչապետները և այն պովեստները, որ նորա իրենց դասախօսութիւնների մէջ շարունակ և ամեն տարի իրաւամբ տալիս են նրան իրենց ունկնդիր ուսանողների առաջ: Հայոց եկեղեցու մասին խօսելիս անուանի ուսուցչապետ և բարոյախօս փիլիսոփայ ճերմանը մինչև օրս էլ չի մոռանում յիշելու «Էջմիածնի միաբան Կարապետ սարկաւազին», «առաջին հային, որ իրենց մօտ աստուածաբանութիւն է ուսել»՝ ասելով՝ «Նա ցոյց տուցէ այնպիսի պայծառ հասկացողութիւն, այնպիսի կարարեալ և խոր ըմբռնողութիւն աստուածաբանի և աստուածաբանի շնորհաբանական իրենց վերաբերմամբ, որպէս «անկէն Պօղոս և Լուսին»:

Նորա զրուածքներն ու հրատարակութիւնները այնպիսի մնայուն գործեր են, որ հաստատուն տեղ են բռնում թէ ընդհանուր եկեղեցական զրականութեան և թէ ժամանակակից հայոց զիտական զրականութեան և մամուլի պատմութեան մէջ: Նրա անուեր, իբրև Եւրոպական հեղինակի, մտել է արդէն գերմանական մասնագիտական էնցիկլոպեդիայի մէջ: Աւելի կամ պակաս չափով զիտէ նա տաան և մէկ լեզու, որով քրիստոնէական զիտութեան և հայագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ ուսումնասիրութիւններ կարող է մասնագիտօրէն կատարել, քաղաքաբանութիւններ կարող է մասնագիտօրէն կատարել, քաղաքակիրթ աշխարհի հետ հողեօր հաղորդակցութեան մէջ լի-

նել և խօսքով ու զրով անմիջական յարաբերութիւն ունենալ զրեթէ ամենքի հետ պաշտօնական և մասնաւոր հարգամանքներում: Եկեղեցական դիտութիւնների համար իւր ունեցած հմտութեամբ ընդհանրապէս և հայոց եկեղեցու պատմութեան դաւանական և վարչական գրութեան համար մասնաւորապէս, իւր բազմակողմանի ծանօթութեամբ ընդհանուր, ռուսական և ազգային գրականութեան, քաղաքակիրթ աշխարհի և հայ ժողովրդի արդի կայութեան, քաղաքական և հասարակական կեանքի այլ և այլ երևոյթների, շատ քչերը կ'իինին նրան հաւասար ամբողջ հայ հոգեւորականութեան շարքերում: Պէտք է այն հանգամանքն էլ այստեղ առանձնապէս շեշտել, որ Կարապետ եպիսկոպոսի պատրաստութիւնը լոկ կարինետային չէ: Նրձած լինելով ամբողջ Երևանի նահանգն ու Ատրպասականը, Գանձակի ու Թիֆլիզի նահանգների մեծ մասը, դանուած ռուսահայոց զրեթէ բոլոր կարեւոր կենդրոններում և Կ. Պոլսում, շփումն ու անձնական ծանօթութիւն ունեցած հայ ժողովրդի ամեն խաւի և ամեն դասակարգի ներկայացուցիչների հետ, տասնեակ տարիներից ի վեր ուշադրութեամբ հետեւած թէ՛ ռուսահայ և թէ՛ տանկահայ լրագրութեան և ընթացիկ գրականութեան, նա այնչափ ի մօտոյ և հիմնաւոր կերպով ճանաչում է հայութիւնը, ինչպէս շատ քչերը ժամանակակիցներից:

Բացի իւր այս խոշոր պատրաստութիւնից՝ ամեն կասկածից դուրս է, որ Կարապետ եպիսկոպոսը կոչւածն ուր հոգեւորական է և ոգևորութիւն է իւր գործով: Նրա խոսքն հասարակ և անպայման համոզութիւն լինելը տեսանք նրա ուսուցչական գործունէութեան նկարագրութեան մէջ, ինչպէս և անպայման անշուշտութիւնը՝ Երևանի և Ատրպասականի առաջնորդութեան մէջ:

Թէ ինչպիսի նախանշաններով է և անշուշտ պարզա-

պահանջներով է ցոյց տուել Կարապետ եպիսկոպոսը դէպի հայոց ազգային ժողովրդական եկեղեցին, դրա մասին փառաւոր վկայութիւններ կարող են տալ կալուածների գրաւման և «կենդրոնական ժողով»-ի օրերը: Երկու դէպքում էլ մեր առաջ կանգնած է մի մաքուր, բայց ճակատով, դէպի իւր ազգն ու եկեղեցին սիրով լցուած հոգեւորական, որ ամեն կերպ աշխատում է իւր խօհունութեամբ չափազանցութիւնները մեղմել, անխորհուրդ ցոյցերի և վտանգաւոր յուզումների առաջն առնել, խնդիրը պահել իւր վեհ լրջութեան մէջ (կալուածների գրաւման ժամանակ): Ազգային պատուի նախանշաններով թեանք նա առաջին տեղն է տալիս և այդ ամբողջ խնդրի մէջ իրեն առաջնորդ ունի այն զուտ առաքելական-եկեղեցական սկզբունքը, թէ եկեղեցու պաշտօնէութիւնը համայնքի հոգեւոր պէտքերը մատակարարելով՝ նոյն այդ համայնքից անմիջապէս պիտի ստանայ նաև իւր ապրուստի նիւթական միջոցները:

Երդուեալ հաւատարմատար Տիգրան Յովհաննիսեանը իւր Մոսկուայում կարգացած հրապարակական դասախօսութեան ժամանակ 1904 թուին «կալուածների առման» մասին յիշեց, թէ «միակ հոգեւորականն էջմիածնի միաբանութեան մէջ, որ իւր կոչման բարձրութեան վրայ էր գտնուում և անազին գործունէութիւն ցոյց տուաւ այդ օրերում՝ դա Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեանըն էր»:

Եւ յիշուի, երբ համարեա ամբողջ միաբանութիւնը էջմիածնում համակերպելու կողմնակից էր և նոյնիսկ էջմիածնին շատ մօտ գտնուած, բաջ յայտնի, մի աշխարհական, ազատախօս իրաւաբան ևս ուրիշ էլք չէր գտնում. Կ. վ-ն էր, որ այդ ժամանակ մտադիր լինելով դէպի ռուսաստան ճանապարհորդելու և այդ օրերը դանուելով Թիֆլիզում, մի կողմ է ձգում իւր ճանապարհորդութիւնը,

մասնակցելուց յետոյ կօջորի խորհրդակցութեան ժողովին, անմիջապէս Էջմիածին առապարում և այնուհետև շատ եռանդուն և ազդու գործակցութիւն ունենում («կալուածների առման») խնդրում:

Սյն ժամանակ, երբ տասնեակ հազարից բաղկացած ամբօխը, ծերունազարդ Սուքիաս արքեպիսկոպոսին իր հետ առած՝ արշաւում էր Էջմիածին հայոց հայրիկին այդ պատմական օրերում նեցուկ հանդիսանալու, այն, այդ ժամանակ Արարատեան դաշտում, Մայր Աթոռի պարիսպներին կից, վաղարշապատի դռների մօտ դիմաւորում էին այդ ամբօխին հարիւրաւոր կողակներ սուխններով ու մահառիթ գնդակներով: Նոր անմեղ զոհերն ու իղուր արիւնհոսութիւնն անխուսափելի էին: Կարապետ վարդապետն անմիջապէս վանքի կառքը նստած շտապում է գաւառապետի մօտ, թախանձում, որ կողակներին հեռացնէ, խոստանալով նրան, որ ինքը միջնորդ կը հանդիսանայ ժողովրդի ու հայրապետի միջև և որ ամբօխն առանց որևէ անկարգութիւն թոյլ տալու նորէն կը դառնայ Երևան:

Կողակներին հեռացնում են. ժողովուրդը գալիս է իր ցաւն և իր զգացմունքն արտայայտում Կարապետ վարդապետի միջոցով ալեզարդ հայրիկին ու կրկին խաղաղ, անվրդով տուն դառնում... Իսկ «կենդրոնական ժողով»-ի ժամանակ նա այն սկզբունքը պաշտպանեց, թէ ծրագրուած ժողովը իւր զուտ աշխարհական կազմով և աշխարհական ձգտումներով ոչ հայոց եկեղեցու անցեալի և ոչ որևէ օրինական սկզբունքի վրայ յենուել կարող է. ոչ իրաւունք, ոչ ձեռնհասութիւն և ոչ միջոցներ կունենայ եկեղեցական կեանքի և եկեղեցական հաստատութիւնների մէջ ամենափոքր բարեփոխութիւն առաջ բերելու: Սյնուհետև կազմուեց մի փոքրիկ ընդդիմադիր խմբակ, որ ժողովում այս տեսակէտը պաշտպանեց,

և ժողովի ընթացքն ու ցաւալի ժախճանն էլ սպացուցեցին, թէ առաջին օրուանից նրա դէմ խօսողներն ու զգուշացնողները իրաւացի էին: Թէ ժողովից առաջ 14 միաբանների յանուն կաթուղիկոսի ստորագրած բողոքը գրելու համար և թէ յետոյ՝ Կարապետ եպիսկոպոսը թշնամանքների և ազեղ յարձակումների ենթարկուեց ժողովի կողմնակիցների կողմից, բայց նա իբրև սկզբունքի և համոզմունքի տէր մարդ՝ հաւատարիմ մնաց Նահապետ եպիսկոպոսի հետ միասին իւր բողոքին, մինչ միւսները ճնշումների և բռնութեան ներքոյ ստիպուած եղան յետ նահանջել:

Կարապետ եպիսկոպոսը շեշտակ հողէնորական է: Երբ նա 1906 թուին ընտրուեց դիւանի Խորհրդի անդամ, ամեն կերպ աշխատեց արդարացնել միաբանութեան իրեն վրայ դրած յոյսերը: Սակայն մինչ նա առաջին անգամ հրաւիրուել էր վեհարան իւր պարտականութիւնները կատարելու, իմացաւ որ մի օր առաջ ամենքից ժածուկ մի թուղթ էր ուղարկուած փոստ՝ ներքին գործոց նախարարի անունով և առաջարկուած էին Սինոդի երեք նոր անդամներ: Սյդ առաջարկութեան բուն հեղինակները պատկանում էին այն շրջանին, որ ամենից աւելի բարձր էր աղաղակել, թէ եկեղեցական բոլոր պաշտօնները ընտրութեամբ պէտք է տրուին. իսկ այժմ եկեղեցական բարձրագոյն հաստատութեան համար մարդիկ էին առաջարկում պաշտօնի և համարեա թէ հաստատութեան կազմը փոխւում էր ոչ միայն առանց ընտրութեան, այլ և առանց դիւանի խորհրդականների զիտութեան և այդ բոլորը՝ դիւանապետի բացակայութեամբ: Կարապետ վարդապետը այս իմանալով՝ ներկայացաւ անմիջապէս Վեհափառ հայրապետին, բողոքեց տեղի ունեցած աններելի անպատեհութեան դէմ: Վերահասու լինելով գաղտագողի կատարուած իրողութեանը՝ Վեհափառ հայրապետը հրամայեց յետ բե-

րել տալ ծրարը: Շահագրգռուած անձինք խիստ դայրա-
ցած խնդրի այս կերպարանքն ստանալու համար, չարա-
նենդ լուրեր տարածեցին, թէ իբր ենշում էր դործ վեր-
լած Վեհի վրայ ծրարը յետ բերել տալու համար, յաջո-
ղեցին զրգուել որոշ ուղղութեան մամուլը և ոտքի հանել
Վաղարշապատում հասարակութեան տակաւններին, որոնք
հինգշաբթի օրուայ յետ ստացուած ծրարի պատճառով
կիւրակէ ներս խուժեցին վեհարան՝ իբրև թէ պաշտպա-
նելու Վեհափառ Հայրապետին, որի վրայ բռնանում էին.
և ապա նմանք չ'տեսնուած գարշելիութեամբ անարդանքի
ենթարկեցին պեղարդ Սուքիաս արքեպիսկոպոսին, որը
միայն կողմնակի մասնակցութիւն ունէր այս խնդրում:
Իբրև միաբանութեան աւագադոյն անդամը՝ Սինոդի ան-
դամների առաջարկութեան գաղտնիքը բացուելուց յետոյ՝
նա ներկայացել էր Վեհափառ Հայրապետին և բողոքել,
թէ ինչու (որչափ և հակառակ իւր համոզմունքի) յետին
եկեղեցական պաշտօնէի համար սկզբունք պաշտպանուած
միջոցին՝ Սինոդի անդամների առաջարկութիւնը առանց
ընտրութեան և առանց խորհրդի է լինում:

Ազգային եկեղեցու գաղափարի ջերմ պաշտպան և ջա-
տագով Կարապետ եպիսկոպոսին հայոց եկեղեցին իւր երեք
հիմնական դժերով է ներկայանում՝ ազգային բնա-որո-
թեամբ, կրթական «գուշ» և հալածական վիճակով: Այդ
խնդիրների մասին նա մի փոքրիկ զրբոյկ ունի հրատա-
րակած «Ազգային եկեղեցի» վերնագրով: Այդ զրբի մէջ
իւր ամբողջ էութեամբ մեր առաջ կանգնած է Կարապետ
եպիսկոպոսը իւր հասկացողութեամբ հայոց եկեղեցու մա-
սին և իւր պահանջներով հայ հոգեւորականից: Ինքը Կա-
րապետ եպիսկոպոսը իւր նկարագրած ու պահանջած հո-
գեւորականութեան լուսադոյն ձգտումների մարմնացումն
է: Բոլորովին հեռու կղերական առանձին դասակարգ կազ-
մելու մտքից և հայոց ազգային եկեղեցու մէջ այդ բանը

նոյն իսկ անհնարին համարելով, Կարապետ եպիսկոպոսը
իւր ամբողջ կեանքը նուիրել է հայ ժողովրդի կրթական
վիճակը բարձրացնելու հողսին՝ իբրև ուսուցիչ հայ մա-
նուկների, աւետարանի քարոզիչ և վարդապետ մի այն-
պիսի ժամանակ, երբ սով էր հայոց եկեղեցում, («նչ թէ
հացի ու ջրի սով, այլ սով՝ Աստուծոյ խօսքը լսելու»):
Իսկ իւր սիրած ժողովրդի հալածական վիճակն ի նկատի
ունենալով՝ իբրև քաջ հովիւ, նրա հետ է եղել վտանգի
բոլոր դէպքերում, հետևելով իւր Մեծ Վարդապետի այն
խօսքին՝ թէ «հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչ-
խարաց»: Նրա իդէալները Հայոց եկեղեցու պատմութեան
հերոսներից եղել են Ս. Մեսրոպը Մաշտոցը և Սահակ Գ.
Զորափորեցի կաթողիկոսը: Եւ յիրաւի նա իւր աշակերտ-
ների համար Մեսրոպ է եղել և անտէրունչ ու հալածա-
կան հայ ժողովրդի համար Սահակ Զորափորեցի, («որի
դիակն անգամ պատնէշ դարձաւ արաբական կառույի դօ-
րավարի առաջ և երկիրն ահուելի աւերածութիւնից ազա-
տեց»):

Նասակով պերճ ու պարթև, կազմուածքով քաջառողջ
և պինդ, այրական կատարեալ և ամենակորովի հասակում.
Կարապետ եպիսկոպոսը ահա 17 տարի է վերագարծել է
արտասահմանից և երբէք, մի ամիս, մի շաբաթ անգամ
պարսպ չէ եղել: Կատարել է իրեն յանձնուած ամեն մի
դործ անձնուիրութեամբ և ոչ մի աշխատութիւնից չի
հրաժարուել, կատարել է ծանր պաշտօններ ամենասան-
նպաստ պայմաններում, մաքառելով գաղտնի բանասարկու-
թիւնների և հրապարակային թշնամանքների դէմ, որոն-
ցից սակայն նա միշտ պարզերես է դուրս եկել:

Բոլոր շրջաններում, ուր նա եղել է և ուր ի մօտոյ
նանաչել են նրան, համակրութիւն ու սէր է վաստակել:
Նոյն իսկ այն տեղերում, ուր սակաւաթիւ մոլի նախան-
ծորդները յաջողել են աննպաստ կարծիք տարածել նրա

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Էջ	Տող	Տպուած է	Պիտի լինի.
25	11 վեր.	տպաւորում	տպաւորում
36	16 ներք.	նակ	կան
47	12 վեր.	անկախ	առկախ
54	9 ներք.	համոզել	համոզեց
76	6 վեր.	թեմի	թեմը
96	1 "	կօջորի	Կօջորի
"	1 "	խորհրդակցութեան	խորհրդակցական


(Մնացած մի քանի վրիպակները—մի երկու կէտադրական և ա տեղ պ, Գ տեղ յ, ը տեղ յ, ղ տեղ ղ—հասկանալի են ինքնին):

P. P. P. P. P. P.

Year	Month	Day	Event
1780	Jan	1	Birth of ...
1781	Feb	15	...
1782	Mar	10	...
1783	Apr	25	...
1784	May	12	...
1785	Jun	3	...
1786	Jul	18	...
1787	Aug	7	...
1788	Sep	22	...
1789	Oct	11	...
1790	Nov	30	...
1791	Dec	19	...

(Continued on page 2)

The following is a list of the names of the persons who were born in the year 1780.



ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts. Leipzig 1904	4 —
2. Des hl. Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung (Կարապետ ծ. վրդ.-ի հետ միասին). Հայերէն և գերմաներէն. Leipzig 1907	3 —
3. Նոյն գրքի գերմաներէն թարգմանութեան Բ. հրատարակութիւնը, Leipzig 1908.	— 80
4. Բարեւոյն և Սուրբ Գիրք. Էջմիածին 1908	— 15
5. Ընդհանուր եկեղեցական պատմութիւն Ա. Հին եկեղեցին. Էջմիածին 1908	1 25
6. Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի (Կարապետ ծ. վրդ.-ի հետ միասին). Էջմիածին 1908	4 —
7. Վերանորոգութեան կարիքը հայոց եկեղեցու համար. Էջմիածին 1908	— 10
8. Հայոց եկեղեցու յարարերութիւնները ասորոց եկեղեցիների հետ. Էջմիածին 1908	1 50
9. Կրօնների պատմութիւն. Էջմիածին 1909	1 50
10. Յիսուսի կեանքն ու գործունէութիւնը Պ. Վ. Շմիդտի և Ռ. Օտտոյի երկերից. Էջմիածին 1909	— 30

«Ազգային գրադարան»



NL0174357

